


90092

891.99

4-70



Ա Ր Ա Վ Զ Ա Կ Ա

Հ Յ Ա Շ Ա Խ Ա Վ Ա

Փ Բ Կ Ի Չ Զ Ն Ե Ք

Թ Ա Տ Ե Ր Ա Խ Ա Դ Հ Հ Ի Ն Գ Ա Ր Ա Ր Ո Ւ Խ Ա Ր Ա



300
Տ Օ Ւ Ա Ր

ՏՊԱՐԱՆ «ՐԱՋՎԻ»

Ա Ղ Ե Զ Ա Ա Ն Դ Ր Ի Ա

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

1907

891.99

4-7D

N 2345

01 JAN 2009

205

NOV 2010

ԱՐԱՆՑԱՐ

ԱՐԱՆՑԱՐ

ՓՐԵՒՉՈՆԵՐ

ԹԱՏԵՐԱԽԱՂ ՀԻՆԴ ԱՐԱՐՈՒԻԱԾՈՎ

5/35
6



ՏՊԱՐԱՆ «ՐԱՋՎԻ»

ԱՐԵՋԱՍԱՆԴՐԻԱ

(ԵԳԻՊՏՈՍ)

1907

15 FEB 2013

20092

Ա Կ Ե Խ Ի Ս

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՒ ՈՒՐԻՇ ԱՄԷՆ ԻՐԱՀՈՒՆՔ
ՀԵՂԻՆԱԿԻՆ ՎԵՐԱՊՈՀՈՒՄԾ Է

Դուն և այս երկը միւսոյն ժամանակ ծնաբ

Քեզի կը ձօնեմ զայն

Ուպէսզի

Երբ մեծնաս՝ կարդաս և անկեղծութեամբ ու լրջութեամբ ծառայես թշուառ ազգիդ:

ԱՆՁԵՐ

Մամիսոն
Աւետիք } «Շեփոր» յեղափոխական օրգամի խմբագիր-
Սիսակ } ներ և Արևմտեան Կեդրոնի աթղամներ:
Աշոտ, «Շեփոր»ի գրաշարը.
Լուս Քօչակեան, Խմբագիր «Բանուր» սօցիալիստական օր-
բալումի, «Բանուր»ի գրաշարը և սահմանայ աշխատակիցը,
Արամ, Գրականութեան ուսաթող,
Նեկտար Սալամեան, Մամլավարժութեան ուսանողութի,
Թագէոս Պէզլիսնեան, Երգուումցի Յորեկ ուսանող,
Երուամդ Կաշմիրեանց, Աստղախանցի Յորեկ ուսանող,
Գուլումնանց բամաստեղծ ուսանող և աշխատակից «Շեփոր»ի,
Օր. Տէր-Սարգսնեանց հասարակական գիտութիւններու ու-
սանողութի,
Ուսանողներ, ուսանողութիւններ,
Գործողութեան վայրը Զուլցէրական քաղաք մը,

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

«Շեփոր» յեղափոխական օրգամի խմբագրական սեն-
եակը: Բաւական ընդարձակ: Մէջտեղը երկար սեղան մը,
շուրջը քանի մը աթոռներ: Ետևի պատիճ ծախ անկիւմը
շուրջը քանի մը աթոռներ: Ետևի պատիճ ծախ անկիւմը
դուռը, որ յարակից հիւրասենեակին վրայ կը բացուի և
որ այժմ կիսով չափ բաց ծգուած է: Դրան աչ կողմը ի-
րարու քով զետեղուած եմ մեծ պահարան մը, գրադարան
բարու քով զետեղուած եմ մեծ պահարան մը, գրադարան
մը, դարակ մը, որու աչքերում մէջ նամակներ զիգուած
մը, դարակ մը, որու աչքերում մէջ նամակներ զիգուած
մը անկարգ կերպով և անկիւմը պատուհանին մօտ
եմ անկարգ կերպով և անկիւմը պատուհանին մօտ
կօպիայի: Մեքենայ մը, որու շուրջը ինչպէս նաև պա-
կօպիայի: Մեքենայ մը, որու շուրջը ինչպէս նաև պա-
կօպիայի: Աչ պատիճ վրայ տպարամէն ելած
բրօշիկներու գէզեր կը հանգչին: Աչ պատիճ վրայ երկու
բրօշիկներու գէզեր կը հանգչին: Աչ ծախակողմեան պատը
պատուհան առանց վարագոյրի, իսկ ծախակողմեան պատը
զարդարուած է քարտէզներով և հերոսներու պատկերներով,
զարդարուած է քարտէզներով և հերոսներու պատկերներով,
առանց շրջամակի լոկ գամերով ամրացուած: Սեղանին
առանց շրջամակի լոկ գամերով ամրացուած:

— 6 —

Ա. ՏԵՍԱՐԱԿՈՒՆԻ

Սիսակ սեղանին աչ կողմը հասած երկրէն ևկած համակի մը ծածկացիրը կը բանայ: Աշետիք անոր դիմաց հասած փորձեր կը սրբազրէ: Սամիստն սեղանին ետեի ծայրը մէկ ոսքը արոսի մը վրայ դրած Լ’Aurore րերը կը կարդայ:

Ահեջիբ. Այ իշխ էս ո՞վ ա շարտանակ փոփոխում, էս չորրորդ անգամն է ես ուղղում եմ հակամիտ, մի ուրիշը դարձեալ շինում է հակամէտ, առ ի՞նչ բան է:

Սիլլկ. (առանց աքերը վեր առնելու) Այդ մի ուրիշը ես եմ:

Ահեջիբ. Ապրես, լսո՞ղ ես անում ի՞նչ է:

Սիլլկ. Խաղ ընելու ընաւ սիրտ չունիմ, հայերէն չես դիտեր գոնէ հարցուր և խեղճ դրաշարին հոգին մի՛ հաներ. ճիշդը հակամիտ չէ, այլ մարձրացմերով)

Սիլլկ. (ասյելք աւելի բարձրացմերով) Տօ՛ ի՞նչ ես ասում է, ախը ո՞նց թէ հակամէտ, միտ, հակամիտ, պարզ բան է չէ:

Սիլլկ. (ասյ ձեռքովէ ակսճալ փակերով) Հերիք պոռաս է, չես հաւատար բառարանը նայէ:

Ահեջիբ. (ապշած Սամիստնին դառնարով) Սամփանն է գպէս ա:

Սիլլկ. (հեղինակաւոր կերպով) Հապա մի նախագասութիւնը կարգա:

Ահեջիբ. (կը կարդայ) «Յեղափոխականները հակամիտ էին այդ համակրելի առաջարկը ընդունելու»:

Սիլլկ. Ուրեմն այդ դէպքում հակամէտ պէտք է լինի:

Ահեջիբ. Հա՞ էու իսկի չեմ իմացել. (յպսերով) գէ լաւ է, էլի մի նոր խօսք սպորեցինք: (Փորձերը հաշարերով ոսքի կ'ելլէ, սեղանին միւս կողմը կ'անցնի, Սիսակին մօտէն անցած առեն անոր կողմը կ'անցնի, Սիսակին մօտէն անցած առեն անոր կողմը մշտերով և ծիժաղերով) հա-կա-մէտ, որ էղպէս

է ա՛սա տնաշէն, էլ ի՞նչ ես գաղտնի օյխնբազութիւններ անում: (Կոպիսյի մերենային վերև պատին վրայ հասարակ գամի մը անցուած բղբերէն մեկը առներվ կ'երբայ դրան մէջ կը կանգնի և կը կանչի) **Աշուտ:**

(Գրան մէջ կը յայտնուի դրաշարի):

Այեցիր. (ձեռյի բղբերը գրաշարին յանձներավ) **Սբբագրութիւնները** վերջացրի, գեռ ձեռագիրը չունենք պատրաստ, առայժմ էս նուիրատութիւնները շարիր:

Աշուտ. Բայց աս շուտ մը կը լմնայ, և արդէն երկու ժամ է պարապ նստեր եմ:

Այեցիր. Ե՞ւ եթէ նոր գործ չլինի էսօր արձակուրդ կանես. (ծիծաղկար) Ի՞նչ է, չե՞ս ու զում, վա՞տ է:

(Գրաշարը չոր ժպիտով մը կը նեռանայ իսկ Աշուտիք ներս կուզայ):

ՍՍՄՓՍՈՒՆ. (Աւետիքին) կարդացի՞ր Պրեսանսէի յօդուածը:

Այեցիր. Զէ գեռ չեմ կարդացել, էնուէս մի նայեցի, լեզուն զժուար էր երեսում, ասացի յեսոյ բառարանով կը կարդամ:

ՍՍՄՓՍՈՒՆ. Բա՛հ, վերցրու կարդա՛, փառաւո՞ր է գըել. տես ինչպէս է վերջացնում (կը բարդմանէ) «Եթէ իրանց քաղաքակիրթ անուանող պետութիւնները անկարող են կամ անընդունակ այդ զղուելի բարբարսութիւններին վերջ դնելու, կուլտուրական բոլոր երկրների հասարակութիւնները շուտով իրանց ձայնը զօրեղ կերպով կը բարձրացնեն և իրանց կառավարութիւններին կըստիպեն վերջապէս մարդկութեան խղճի վրայից մաքրել այս ամօթալի արատը» (պահ մը յափրէ առակուած մնայի յետոյ) սա մեծ խօսք է գիտե՞ս:

Այեցիր. Լաւ է բոնացրել հա՞, հապա մի տուր տեսնեմ:

(Թարրը տոներավ տեղի կը նստի կարդալու և Սիսակին դառնարավ) **Տօ՛ կարդացե՞լ** ես Պրեսանսէի յօդուածը :

ԱիՍԱԿ. Զէ, ոչ կարդացեր եմ և ոչ ալ կ'ուզեմ կարդալ:

ԱՏԵՑԻՐ. Տօ՛ սա զի՞ժ է ի՞նչ է. Պրեսանսէն է գրողը հէ:

ԱԻՍԱԿ. (զրգուած) **Այսօր** գեռ այդ կարդի

— 10 —

յօդուածներէ սգհորուելու համար մարդ չեմ
գիտեր թէ ի՞նչ տեսակ ուզեղ ունենալու է։ Ծո՛
զըեսանսէդ կըադսաօնէն աւելի՛ մեծ մարդ է,
անոր կըակուբոց ճառերէն ի՞նչ օգուտ տեսանք
որ զըեսանսէի յօդուածներէն ի՞նչ օգուտ պիտի
տեսնենք։

ՍԱՄՓՍՈՆ. Թաղ իսէր Աստուծոյ, դրան մի՛
խօսացնիր, ինչպէս երևում է այսօր էլի ձախ
ստով է վեր կացել։

ՍԻԾԱԿԻ. (Տեղական) Այո՛ ձախ ստով, երանի՛
թէ գուն ալ կարսկանայիր երթեմն ձախ ստով
իջնել անկողնէդ։



A. ՏԵՍԱՐԱՐԱԴ

(Երս կը մտնէ Արամ առաջնորդերով թաղեախին և
Երուսաղիմ)։

ԱՐԱՄ. Ահա՛ պարսներ այն խորհրդաւոր
ոենեակը, ուր հայ ազգին ճակատագիրը կը
դարբնուի որ ու զիշեր։ Ահա՛ դարբնոցապետը,

առիւծներու ճեղքին Սամփսոն և իր երկու ար-
ժանաւոր օգնականները, մէկը Արևելեան Հայաս-
տանէն Պր. Աւետիք, միւսը Արևմտեան Հայաս-
տանէն Պր. Սիամկ Ճարօնեցի։

ՍԱՄՓՍՈՆ. Ցո՛ էլի սկսեցի՛ր քո մասխարու-
թիւնները։

ԱՐԱՄ. Մասխարութի՞ն, քաւ լիցի, ամե-
նայն լրջութեամբ և ամենայն պատկառանօք այս
փրկութեան Սիօնը կ'առաջնորդեմ երկու ուխտա-
ւորներ, որոնք հեռու տեղերէ կուզան, մէկը
Սատրախանէն Պր. Երուանդ Կաշմիրեանց, իսկ
միւսը Էրզրումէն Պր. Թաղէսս Պէզիրճեան։

(Երեկները բարորին ձեռք կատան, Աւետիք տեղի
եղերվ արուներ կատայ և քիւ մը նկուն նատերով կը
շարունակէ բառարանի օգնութեամբ։ Լ'Ասուղի յօդուածը
կարդար)։

ՍԱՄՓՍՈՆ. Տղերք ինդրեմ նստէք. եկելէք
ուսանելո՞ւ։

ԹԱԴ. Եի եր. (Տառերով) Այո՛։

ՍԱՄՓՍՈՆ. Ի՞նչ էք մատղիր սովորել։
ԹԱԴԷՅՈՍ. Ես մանկավարժութիւն կ'ուզեմ
սորպիւ։

ԱՅԱՄՓՈԱԽՆ. Իսկ դուք Պր. Երուանդ :
ԵՐՈՒԱՅՆԴ. (Կամազերսի) Ես... դեռ... որոշ չեմ,
կը սովորեմ բժշկութիւնը կամ... սօցիայինայիս ևա-
սկա :

ԱՐԱՄ. (Ճիծաղերսի) Անչուշտ աւելի հաւանա-
կան է վերջինը :

ԱՅԱՄՓՈԱԽՆ. Վասչէ, լաւ ճիւզեր էք ընտրել,
մանկավարժութիւն և հասարակական գիտու-
թիւններ. ես ինքս ծանօթ եմ թէ մեկի և թէ
միւսի հետ, սկզբում ուսուցիչ էի իսկ 25 տարի
է ինչ հրապարակախոս եմ...

ԱՐԱՄ. Քանի՞ հի՞նգ տարի, Պր. Սամփառն
հարցնելը ամօթ շըլլայ քանի՞ տարեկան ես:

ԱՅԱՄՓՈԱԽՆ. Տօ լոի՛ր հէ մի խանդարիր. ես
16 տարեկան էի երբ հասարակական գործունէ-
ութեան սկսեցի, ի՞նչ ես կարծում հօ քեզ նման
անշնորհք չէի :

ԱՐԱՄ. (Կեղծ պատկառանքով երեսը կը խայակերէ) :

ԱՅԱՄՓՈԱԽՆ. (Աորեկներուն դառնարով կը շարունակէ)
Ինչպէս ասացի լաւ մասնագիտութիւններ էք
ընտրել և ես առաջինը կը լինէի ձեզ քաջալերող

եթէ հաւատացած լինէի որ ապագայում կը
կարողանաք ձեր սովորածը գործադրել: Բայց
ցաւը այն է որ պայմանները ամէն տեղ էլ
աննպաստ են: Սովորելը ի հարկէ լաւ բան է,
բայց ներկայ պայմաններում ախր ո՞ւմ համար
սովորել: Հարկաւոր է նախ այդ անիծուած պայ-
մանները փոխել, այդ պահանջում է նոյն իսկ
ամէն մի հայ երխուասարդի անհատական շահը,
որպէսզի ասպարէզ բացուի և ամէն ոք կարողա-
նայ իր մասնագիտութիւնը գործադրել: Դեռ
որանից 15 տարի առաջ երբ պայմանները հա-
մեմատարար շատ աւելի լաւ էին քան այժմ,
թիֆլիսում մի խումբ հարուստներ ետեից էին
ընկել որ անպատճառ արտասահման գամ և հա-
սարակական գիտութիւններ սովորեմ, մերժեցի
և ձեզ հաւատացնում եմ որ ամեննեին չեմ զբ-
ջացել, բացի որ էնտեղ մնալով ահագին
օգուտ տուեցի, յետոյ երբ էստեղ եկայ մի քանի
անդամ զնացի համալսարան մի երկու դասա-
խոսութեան ներկայ դանուեցի, բայց ոչ մի նո-
րութիւն չլսեցի: Դուք դեռ ջահել էք, սովորե-

Հու շատ ժամանակ ունէք, այժմ հարկաւոր է գործի կպչել, ամէն կողմից գործիներ են պահանջում մեղանից, իսկ ինտելիգենտ ուժեր մենք դժբաղդաբար շատ քիչ ունենք, հներս քիչ քիչ պառաւում ենք, իսկ նորեր չեն հասնում:

ԱՐԱՄ. Է կը թողնէք որ համարն . մեր կողմը եպիսկոպոս մը կար կրօնասիրութիւնը արծարծելու համար համազը տէրտէր կը ձեռնադրէր, դուք ալ համազը գործիչ կը շինէք այդ է պատճառը որ գործիչ շատ ունինք բայց մարդ չունինք:

ՍՈՒՄՓՍՈՒՆ. (նորեկներուն) Տվերք գիտէք դուք որս խօսքերին շատ ոշագրութիւն միք դարձնի, սա շատ է սիրում ամէն դէպքում անպատճառ սրախօսութիւններ անել, դուք էն ասէք, ցանկութիւն չունէք շուտով մի տեղ գնալ գործել:

ԹՈՒԴԻՌՈ. Ես երկիրը բաւական գործած եմ, «Շեփոր» ցրուած եմ, գրամ հաւաքած:

ՍՈՒՄՓՍՈՒՆ. Այ էտ լաւ է, ուրեմն արդէն բաւական փորձառութիւն ունէք, իսկ դուք Պրելուանդ:

ԵՐՈՒԱՌԵԴ. (կմկմարով) Ես... դեռ շատ... անձանօթն եմ, ուզում եմ նախ քան սովորել... ձանօթութիւնը:

ՍՈՒՄՓՍՈՒՆ. Էտ ոչինչ. էստեղ մի քանի ամսում ամէն բան կարող էք սովորել: Ես ձեզ էս ըսպէիս նամակներ կըտամ, երկրից եկած նամակներ, որ կարդաք և գործի հետ ձանօթանաք: (Կը մօտենայ նամակներու դարակին և կը փնտու) Աւետիք, ախր ուր են էն նամակները:

ԱԽԵՑԻՔ. (մօտենարով) Ի՞նչ նամակներ ես վնասում:

ՍՈՒՄՓՍՈՒՆ. (շարունակերով փնտու) Վանից ստացուած նամակները:

ԱԽԵՑԻՔ. (փնտուրով) Էստեղ պէտք է լինի:

ԱՐԱՄ. (ակղեկ եղերով և բեկրի սրբուրով) Աւետիք օգնեմ:

ԱԽԵՑԻՔ. (մտածման մէջ) Ո՛չ շնորհակալ եմ, հանգիստ տեղդ նատիր, Սիսակ հօ դու չե՞ս վերցրել:

ՍԻՍԱԿ. (ըսր) Ո՛չ :

ԱԽԵՑԻՔ. Հա՛ այժմ յիշեցի, իմ թղթերի

մէջ պիտի լինի: (շատագով սեղանին վրայ իրեն իրը բդրապահակ ծառայող հասարակ կապոյտ բդրի մը մէջն բունի մը համակ հանեղով կրտսայ Սամփառեին):

ԱՅՐՄՓՍՈՆ. (համակներու մէկ մասը թաղեռին, միւս մասը Երուանդին տարով) **Ա.Ի.** վերցրէք կարդացէք, էլի կը վերադարձնէք:

ԵՐՈՒԱՆԴԻ. (համակներեն մէկը բանարով) **Ես** չգիտում եմ հայերէն կարդալը:

ԱՅՐՄՓՍՈՆ. **Նո՞ւ,** հայերէն կարդա՞լ էլ չէք իմանում:

ԹԱԴԷՌՍ. (համակները ծոցը դնելով) **Վճառ չունի,** ես անոր գէշ աղէկ կը հասկցնեմ:

ԱՐԱՄ. **Ի՞նչ կայ ճանըմ ուսւսերէն թարդանութիւնն ալ հետը տուր :**

ՍԻՍՈԿ. (սրտնեղած) **Ա.Ի.** նամակներուն գեռ պատասխան չէ տրուած, աճապարելու ի՞նչ կայ, պարոնները հոս պիտի մնան, ժամանակի ընթացքին մէջ կրնան ծանօթանալ գործին, եթէ փափաք ունին:

ԱՅՐՄՓՍՈՆ. **Մարդիկը հետաքրքրում են թո՞ղ տանեն կարդան, ի՞նչ ես ուզում:**

ԱՐԱՄ. Ենցեալ օր հին թագերի կը իմոն նէի քանի մը նամակներ գտայ, նոր եկած տտենս տուած էլիք որ գործին ծանօթանամ, մինչև հիմա քովու մնացեր են:

ԱՅՐՄՓՍՈՆ. Էդ լաւ է, տօ' ի՞նչ զարմանալի մարդ ես, ախր ի՞նչո՞ւ չես բերում:

ԱՐԱՄ. Եկիզբը մոռցած էի, ետքէն ալ դիտամբ չբերի որ տեսնեմ հարցնող վնտառող պիտի ըլլա՞յ, բայց չինդ տարի անցաւ տակաւին տէրը չելաւ:

ԱՅՐՄՓՍՈՆ. (Գրուխը չարմերով) **Սա լաւ պատասխան է,** տօ' գու քանի գնում աւելի տարօրինակ մարդ ես դառնում, էդքան էլ թեթեամտութիւն կը լինի, տանք մենք մոռացել ենք ետպահանջել, իսկ գու ի՞նքո՞ւ չես բերում:

ԱՐԱՄ. Բերէի ուրիշի մը պիտի տայիք անոր քով պիտի մնար, քանի քանի այդպիսի նամակներ ասոր անոր քով մնացեր անհետացեր են. իմ քովս գոնէ կորսուելու և ուրիշ վտանգներէ զերծ կը մնան: **Արդէն հոս եղածներն ալ կամ քաշքառելով պիտի մաշին և կամ օր մը ամէնքը**



մէկէն պիտի այրին. ըանի քանի անդամ ըսկնք
որ երկաթէ սնտուկ մը գնէք, բայց որու կ'ըսես:

ԱԻԵՑԻՔ. Հազար ինչպէս չէ, երկաթէ սնտուկ,
ասելը հեշտ է, իմանում ես ինչ կ'արժենայ մի
այդպիսի սնտուկ:

ԱՐԱՄ. Ի՞նչ կ'արժենայ:

ԱԻԵՑԻՔ. Հազար փրանկ:

ԱՐԱՄ. Ե թող ըլլայ հազար փրանկ, ի՞նչ
կայ, ամէն բանի դրամ կը դանէք մէկ սնտուկի
չէք կրնար դանել, երկու կօնքերանս պակաս
ընել տուէք սնտուկ մը առէք, որ շատ տեւէլի
կարեոր է, մեր նորագոյն պատմութիւնը կը ննջէ
այս փոշիներան տակ: Լաւ աղբար, ըսենք թէ
սնտուկը դրամով է, կարդ ու կանոնն ալ դրամով
է, առ ի՞նչ խանախնդորութիւն է, բօշայի վրան
կը նմանի:

ԱԻԵՑԻՔ. (դրասած) Ցածկահայերդ կատար-
եալ բիւրօկրատներ էք, ամէն բանի մէջ կարդ,
կանոն, էտիքետ: Ինչի՞ է հարկաւոր, մենք էստեղ
շինողիներ չենք, այլ զեմօկրատ մարդիկ, ի՞նչ
ուզում ես այս բողեիս դանեմ:

ԱԱՄՓՍՈՒՆ. (Արամին) Ի՞նչ ես շատ խօսում հէ,
չես հաւանում արի դարսի՞ր, կարդի բե՛ր. երբ
նոր էիր եկել այդ տեսակ ծառայութիւններ մէկ
մէկ անդամ տնում էիր, իսկ այժմ բոլորովին
անպէտքացել ես, միայն գարսակ գարսակ դուրս
ես տուլիս և քննադատում:

ԱՐԱՄ. (կեղծ հաւագաերով) Ե՛ Պր. Սամիկսոն,
ցաւերս մի նորոգեր, նոր եկած ատենս իրաւոր
լու աղայ էի, բայց ի՞նչ է պատճառը որ այս-
ուէս շատ փճացայ :

ԱԱՄՓՍՈՒՆ. Այ այդ շատ հետաքրքիր էր ի-
մանալ:

ԱՐԱՄ. Ուրեմն լսէ ո՛վ քաջ, գիտուած բան
է որ մեծ ուխտատեղիներու շուրջ ապրող ժողո-
վուրդը առհասարակ անհաւատ ու ապականուած
կ'ըլլայ, ամենէն դէշ քրիստոնեանները երուսա-
լէմի մէջ կ'ապրին կ'ըսեն: Ես ալ որչափ ատեն
որ այս սրբավայրէն հեռու էի հաւատք ու խանդ-
ունէի, հոս եկայ փճացայ, մտադիր եմ գալ
սեմեսդը գարձեալ զերմանիս երթալ, գուցէ
նորէն լաւ աղայ դառնամ, ի՞նչ ըսիր այս բա-
ցամբութեանս :

ԱՅԱՄՓՍՈՒՆ. (ծիծաղերով) Ի՞նչ ըստի. այն կ'առնեմ՞
ինչ որ ասաց աղուէսը գայլին, ուր մտածում՞
էր տեղը փախել վաս անունից աղատելու համար:

ԱԼԵՑԻՐՅ. (բարձրաճայի խնդարով) Այ ապրես
Սամփսոն, դրան մի լաւ շշպափիք հէ. անիրաւը
մեզ ձեռք է առել, ասում է երկաթէ սնտուլ
է հարկաւոր, տօ՛ մի երկաթէ վանդակ է հար-
կաւոր քեզ մէջը փակելու համար որ է՛լ որան
նրան չկծես:

ԱԻՍՈՒԿ. (տեղեն ելլերով) Այդ ձեր առածներուն
վերջ առւէք գործի սկսինք, կէսօր եղաւ և մենք
գեռ ժողով պիտի ընենք:

ԱՐԱՄ. (Սիսակին մօռենալով և զրուխ տարով)
Ժաղով ոնիք Պր, Սիսակ, ո՞հ ներեցէք որ ա-
ռանց գիտնալու ձեր թանկագին վայրկեանները
խլեցի: (Նորեկներուն դառնալով) Տղաք հիմա եր-
թանք միւս սենեակը քիչ մը թերթերը աչքէ
անցընենք, հոս փրկիչներու կաճառը պիտի զու-
մարուի խեղճ սարուկներու շղթաները խարսե-
լու համար: Արդէն մահտեսի եղաք, խմբագրու-
թեան ճամբան ալ սորվեցաք, այսօր կամ վազը

կէս օրէն եռաքը կուդաք խոհանոցը թէյ մը կը
խմէք, ա՛լ «մեր լաւ սղերանցից» կ'ըլլաք կը
լմնայ կ'երթայ:

ՍԻՍՈՒԿ. (ժպտերով ապտակ մը կ'իջեցնէ Արամի
ծոծրակին) Ո՞ս հէրիք, խայթէս, օձի լեղուդ ա՛լ
ներս քաշէ: Եթէ դեռ միւս սենեակն ես խնդրեմ
նայէ որ մեզ չխանդարեն:

ԱՐԱՄ. Շատ երջանիկ եմ որ զիս ալ պաշ-
տօնի մը յարմար գտար, անհոգ եղիք կերպերոսի
պէս դրան ետեք կը նստիմ ու մարդ ներս չեմ
թողներ: (Նորեկներուն ետեկն միւս սենեակը անցներով
դաշտ կը դոցէ):

Դ. ՏԵՍԱԾԱՎԱՐԱՆ

ԱԼԵՑԻՐՅ. (Արամերը իրենց տեղերը կը դնէ):

ԱՅԱՄՓՍՈՒՆ. Պէ՛ս սկսիր Սիսակ, հետաքրքիր
բաներ կա՞ն նամակներում:

ԱԻՍՈՒԿ. Բաւական հետաքրքիր:

(Գրան ետե աղմուկ մը կը տուի):

ԱՐԱՄ. (Գրուիլ ներս խորերով) Պարսններ, օրիորդ Առանեան անսաստելով կերպելոսի հրամաններուն անպատճառ ներս կ'ուղէ գալ խիստ կարևոր գործով մը :

ՍՈՄՓՍՈՒՆ. Ուհ, էդ անսանելի աղջիկը մեզ շարունակ խանդարում է:

ԱԻԵՑԻԲ. Սամփսո՞ն ախը գու էլ բան ասացիր. Խեղճ աղջկան միշտ հայհոյում ես որ իրան հեռու, է պահում, այժմ էլ ասում ես թէ շարունակ խանդարում է մեզ:

ԱԻԵՑԿ. (աճմիջապես տեղեն եղերով դուռը կը բարե օրիորդ, ներեցէք ժողով ունինք):

ՆԵԿԻՑԱՐ. (շփորսած) Հաղար ներոզութիւն կը խնդրեմ, երկար չպիտի խանդարեմ ձեզ, մէկ ժամ յետոյ ժողովրդական դպրոցի մէջ փորձառական դաս ունիմ, հայաստանի վրայ պիտի խօսիմ, կ'ուղէի քանի մը պատկերներ տանիլ ցոյց տալ:

ԱԻԵՑԿ. Շատ լաւ եկէք ընտրեցէք: Աւետէք ուր են պատկերները:



Դ. ՏԵՍԱՐԱՐԱԿ

ՆԵԿԻՑԱՐ. (ներս կը մտնէ և զիանվ բարձերով պատմուի կը կանգնի):

ԱԻԵՑԻԲ. (դեպի պահարանի շատապերով) Այ ապրէք օրիորդ, էդ շատ լաւ էք մտածել, հարկաւոր է փոքրերին էլ պրօպագանդ անել: (Պահարաննե առպրակ մը անձերով սեղանին վրայ կը պարսկ): Եթէ ուզում էք բոլորն էլ կարող էք տանել:

ՆԵԿԻՑԱՐ. Ո՛չ, չնորհակալ եմ, ամբողջը շատ կ'ըլլայ, յետոյ ամէնքն ալ յարմար չեն, քանի մը հատ պիտի ընտրեմ, աւելի կուզէի հայաստանի բնական տեսարաններ, գիւղական կեանքի պատկերներ...:

ԱԻԵՑԻԲ. Այդպիսի իդիլիական պատկերներ մենք չունենք՝ օրիորդ, կայ միայն Մասիսը. բայց դրանք դարսակ զատեր են, դուք վերցրէք յեղափոխական պատկերներ. այ օրինակ խանասօրի բանակը, վաղդէնի խումբը...:

ՍՈՄՓՍՈՒՆ. (ինք ալ մուենարով) Այ ես զեզանեմ օրիորդ թէ ինչ հարկաւոր է տանել. (բնարե-

ո՞լ) վերցըէք սա, Ամահւամի նահատակների
գլուխները, սա, կոտորուած հայերի դիակները
կարնոյ հանդստարանում, սա Ռւբիոյի եկեղե-
ցում ածխացած հայեր...:

ԱԵԿՑՈՒ. Վուկ ի՞նչ կ'ըսէք Պր. Ամմիսոն,
ի՞նչպէս կարելի է ասանկ սոսկալի պատկերներ
ցոյց տալ փոքրիկներուն:

ՍՈՄՓՍՈՆ. ՀԵնց այդ աեսակ պատկերներ է
հարկաւոր ցոյց տալ որ յուզուեն և երբ մեծա-
նան մեզ համակիր դառնան:

ԱԻԵՑԻՅ. Այ Ամմիսոնը լաւ ասեց, հար-
կաւոր է եդ փոքրիկներից համակիրներ պատ-
րաստել:

ՍԻՍԱԿ. Աստուած ձեզի խելք տայ, կը լոէք,
խելք. Երթալով կը յիմարանաք. դրած առաջ-
նորդող յօդուածներնուող մէջ եօթնդիմուն վի-
շտապի պէս կը Փաք, իսկ դործի մէջ բոլոս մու-
րացկաններ կը դառնաք: Քիչ մնայ խեղճ փոք-
րիկներէն մէյմէկ նամակ ալ տղէք թերթին
մէջ հրատարակելու համար:

ՍՈՄՓՍՈՆ. Ճօ՛ էլի՞ սկսեցիր ուշունց տալ:

Օրիորդ խնդրում եմ վերցըէք Լուսանկարները
գնացէք էն միւս սենեակում ջոկեցէք, մենք
այժմ ժողով ունենք:

ԱԻԵՑԻՅ. Հա՛ էդպէս արէք, հազիր նորեկ
տղերքն էլ կը տեսնեն, մոռացանք ցոյց տալ:

ՆԵԿՑՈՒ. (շատար բասենիարները հաւաքերով)
Շատ աղէկ, շատ տղէկ, ներեցէք որ սոխուած
եղայ խանդարել ձեզ, մնաք բարով:

ՍԻՍ. Այ. ՍՈՄՓ. Երթովք բարով:

(Եկտուար միւս սենեակը անցներով դուռը կը դոցէ):

Ե. ՏԵՍԱՐԱԿԱՆ

ՍՈՄՓՍՈՆ. (սիզարէտ մը վառերով) Սիսակ
Սիսակ լոիր, եթէ այդ նամակներում կարեսը
բաներ չկան, առայժմ մի կողմ թողնենք դրանք
և խօսենք Բրիւսէլի կօնդրեսի մասին. ախր ես
էդուց միւս օր գնալու եմ Պարիզ, Ռիշարը
դրել է որ շտապեմ:

ՍԻՍԱԿ. Այս նամակը գրողն ալ տարի մըն

է կը խնդրէ որ շատապէք և վահրամն է գրողը :
ՍԱՄՓՍՈՒՆ. Վահրամն է, ուրեմն հանդիսա
կարելի է մի կողմ թողնել, առանց կարդալու
էլ իմանում ենք թէ ինչ գրելիս կը լինի :

ՍԻԱԾԻ. (Բարկացայտ աքերով Սամփսոնի երեսը
կը նայի):

ԱԼԵՅԻՔ. Ինչու հէ, կարդանք, գուցէ նոր
սեղեկութիւններ լինեն, կարելի լինի մի թը-
թակցութիւն կազմել Les Plaies de l'Arménie ի
համար, հազիր կը վերցնեն կը տանես, Ռիշարը
նիւթ էր տվում:

ՍԱՄՓՍՈՒՆ. Նու կարդա: (Արոսին վրայ պիրքը
կը փոխէ, ձախ արմուկով սեղանին կը կորեի, ոսքը
ոսքին վրայ կը նետէ և կը շարունակէ ծիսէ: Խակ սի-
գարետը վերջացնելի յետոյ շարունակ սրտնեղորիւն և
սենամբերորիւն արտայացող շարժումներ կ'ընէ մինե-
լերերցման վերը:

ՍԻԱԾԻ. (Պահ մը վարաներով նամակը ձեռքին
մէջ աչշրջէն յետոյ կը կարդայ):

ՍԻՐԵԼԻ ընկերներ,
վերջապէս արժանացանք ձեր մէկ երկառ-

դին: Տարի մը կ'ըլլայ հաս համակլս և այս ա-
ռաջին նամակն է որ կըստանամ ձեղմէ: Բոլոր
խնդիրներուն հանդէպ թէ դոք և թէ կովկասը
ամբողջ տարի մը խուլ միացիք: Զեմ գիտել
լինչպէս մեկնեմ ձեր այս վարժունքը, որ ան-
հունօրէն կը վշտացնէ արդէն առանց անոր ալ
խոցոտած սիրոս: Կախորդ նամակներս, որոնց
յիշտակութիւնն իսկ չէք ըներ, անկարելի է որ
ձեռքերնիդ հասած ըլլլան, քանի որ անոնցմէ
կտորներ հրատարակուած տեսանք թերթին մէջ:
Այդ նամակներովն երկարօրէն բացատրած էի
հաս հաննելուս և գործի ձեռնարկելուս մանրա-
մանութիւնները: Տեղիս մէջ գտայ աննման
հայութիւն մը, որ կտորածներու միջոցին իր
ցոյց տուած հերտական գիմադրութեան պատ-
ճառով կառավարութեան աչքին կրկնակի ատելի
դարձած՝ ահոելիօրէն տուժած է և գեռ կը տու-
ժէ: Տնտեսապէս իսպառ կործանած այս ժողո-
վուրդը եթէ տակաւին կ'առպիս, միմիայն ապա-
գայի այս անսասան հաւատքին շնորհիւ է, որով
հարուստ ու աղքատ, քաղաքացի ու շնտկան,

առանց գասակարդային խորաւթեան, եղբայրաւթար իրարու թե ու թիկունք տուած՝ կը շարունակեն գիմադրել տմարդի կառավարութեան բնաջնջումի բոլոր յայտնի ու գաղտնի ճիգերուն։ Բոլորովին անծանօթ, առանց զրպանս փարս մը ունենալու հստ հասայ և դրամ չունենալուս պատճառով քիչ մնաց ձերբակալուեի։ Ատկայն հակառակ կառավարութեան բոլոր աներեակայելի խոտութիւններուն, աղքատ արհետուաւրներ գըրկաբաց ընդունեցին զիս և աչա տարիէ մը ի վեր իրենց զաւակներուն բերնէն կարելով կը հոգան առլուսսա և կօժիանէի առօրեայ ծախքերը, առանց տրտոննի բառ մը արտաբերելու և ի հարկին զիս ալ քաջալերելով։ Կրնաք գուշակել թէ այսպիսի հասարակութեան մը մէջ մէկ տարուան միջոցին ինչե՞ր կարելի էր ընել, եթէ առաջարկներու ուշադրութեան առնուած և պահանջներս գէթ մասամբ կատարուած ըլլային։ Մեզ այսպէս բոլորովին լքելէ յետոյ հիմա ելեր կը հարցնէք թէ «արդեօք չե՞նք կարող մօտիկ ժամանակում Սասունի հետ միաժամանակ մի բան

անել, արձագանով տալու համար այն եռանդուն պրօպագանդին, որ այժմ մեծ յաջողութեամբ մղում է եւրոպական համարեա բուլոր երկրներում»։ Չեմ գիտեր ի՞նչպէս ձեռքերնիդ վրայ գնաց գրելու այդ տողերը։ Ի՞նչ ցանեցիք որ ի՞նչ կ'ուզէք հնձել։ Ո՞վ յանձն կ'առնէ, եթէ խենթ կամ ոճրագործ չէ, սոսոյդ մահուան մը մղել թշուառ ժողովուրդ մը, որու ձեռքին մէջ տակաւին ժանդառ գանակ մը իսկ չերինք։ Հազար նեղութիւններով և գարձեալ տեղացի կըտրիձներու անձնուիրութեան և ճարպիկութեան չնորհիւ վերջապէս միջոց մը գտանք Սասնոյ հետ յարաբերութիւն հաստատելու և այս օրել նամակ մը ստացանք վահանի ստորագրութեամբ։ Անոնց վիճակն ալ նուազ անմխիթար չէ։ Խումբ մը արծիւներ թառած ժայռերու գագաթը, տաս տարիէ ի վեր ի զուր օդնութիւն աղաղակելէ յետոյ, այսօր արդէն Քրդերու և զօրքերու երկաթէ օղակին մէջ սեղմուած՝ ուրիշ ակնկալութիւն չունին բայց եթէ քաջի մահով մեռնիլ։ Կը հաղորդէք թէ «կովկասում մեծ ողերու-

թիւն կայ և Սասուն օդնութիւն է ուղարկում»։
Աւազ շատ ուշ։ Ինչպէս վահան տխուր կերպով
կը վերջացնէ «մետասաներորդ ժամուն կովկա-
սէն զրկուած կամ զրկուելիք օդնութիւնները
աւենեին չպիտի կրնան կացութիւնը փոխել»։
Սասնոյ օրինակը կուգայ անդամ մըն ալ հառ-
տառելու այն տխուր վասուը թէ որշափ տուն
որ տեղ մը լոիկ աշխատելու և մեծ գործ մը
պատրաստելու գիւրութիւն կայ, կուսակցութիւն
և հասարակութիւն խուլ կը մնան օդնութեան
ազերսներու հանդէպ և այն ժամանակ միայն ի-
րենց պարտականութիւնը կատարելու կ'ելլեն,
երբ հրդէնը արդէն ծագած ըլլայ և ամէն օդ-
նութիւն անօգուտ։ Ինչպէս ձեր նամակէն և
«Շեփոր»ի վերջին թիւերէն կը տեսնուի գորք
հիմա ձեր ամրող ուշադրութիւնը կեղրոնացու-
ցեր էք եւրոպական պրոլազանդին վրայ։ Ըսե-
լիք չունինք այդ օդտակար գործին, որ մինչեւ
հիմա անտես առնուած էր, բայց յեղափոխական
կուսակցութեան մը անդրանիկ պարտականու-
թիւնն է իր ուժերը նուիրել երկրի ձեռնարկու-

թիւններուն և երկրորդական կարևորութիւնտալ
այդ կարգի գործերու։ Մինչգեռ գորք հիմա ասոր
ճիշտ հակառակն է որ կ'ընէք, երկիրը անօգնա-
կան կը մնայ և հազարաւոր ֆրանկներ կը ծախ-
սուին կօնֆերաններու և միտինգներու վրայ։
Այժմ մենք հս այնպիսի պայմաններու մէջ կը
գտնուինք որ կարելի է լսելեայն մեծ գործ մը
պատրաստել, բայց թիւլքիան անակնկալներու
երկիր է, մէկ օրէն միւսը ամէն բան կրնայ
փոխուիլ, շտապելու է իւրաքանչիւր վայրկեանէն
օգտուիլ։ Աւատի ընկերներ, ի սէր հայրենիքի,
ի սէր մեր բազմաչարչար ազգի և ի սէր այն
սուրբ գործին, որու համար այնքան արիւն ու
արցունք թափեցաւ, կրկին և կրկին կը խնդրեմ
ձեզմէ որ նախորդ նամակներս անդամ մըն ալ
ուշի ուշով կարդաք և ամէն ճիզ թափէք կարելի
եղածին չափ գոհացում տալու մեր պահանջնե-
րուն։ Իսկ եթէ այս վերջին խնդիրքս ալ շլուտի
պիտի թողնեմ ամէն բան և հեռանամ երկրէն,
որովհետեւ այս վիճակիս մէջ ուեէ օգուտ շտալէ
զատ ընդհակառակը մեծ վնաս կը պատճառեմ

թշուառ ժողովրդին։ Եթէ չենք կրնար օգնել անոր գէթ թողնենք որ իր խղովը տապկուի։

Սիսակը հիմա ուր է։ վասահ եմ որ ան եթէ հոդ դանուէր ես այսպէս բոլորավին չեի լքուեր։ Ազքերս կը լեցուին երբ կը մտաբերեմ այն խօսքերն ու խոստամները, դրս մեկնելու պահուս ինձի ըրեք։ Ազքէ հեռու, սրտէ հեռու։

Կը յանձնարարէք որ Les Plaies de l'Arménieի համար տեղեկութիւններ հազորդեմ։ Ի՞նչ տեղեկութիւն։ Առանց գրելուս ալ կրնաք դիսնալ։ Նոյն հալածանքը և նոյն հարատահարութիւնն է որ այս գժբախտ երկրին մէկ ծայրէն միւսը կը շարունակուի գարերէ և վեր անվերջ ու անվտափոխ։ Այս օրեր տուրքի համար գարձեալ սարսափելի կերպով կը նեղեն ժողովուրդը, որ իր օրապահիկը չի կրնար շահիլ։ Գիւղերու մէջ շատերուն հողերը և վերջին անասոնը զրուած են, մինչև խակ խրճիթները քանդելով գերանները ծախած։ Շըշակայքէն մերկ ու անօթի գիւղացիներու ստուար բողմութիւն մը թափած է քաղաք և մէկ կողմէ ալ կը հաւաքուի։ Երեկ

շուկային մէջ օրը ցերեկով հայ վաճառական մը դաշտնահար ըրին, չարագործները անպատճիծ կը շրջին ուրիշներու ալ սպառնալով։ Մօտակայ գիւղի մը մէջ տէրտէրի մը մանկամարդ աղջիկը առևանգեցին և այսօր քաղաք բերելով հանդիսաւոր հարսնիքով մը բանի ամուսնացուցին վաթառն տարեկան թիւրք աղայի մը հետ։ Միւսներն ալ ասոնց նման, զո՞րն ասեմ կամ զր՞ն խոստավանիմ։

Սպասելով ձեր շուտափոյթ պատասխանին, ընկերական ջերմ համբոյըներով

ՎԱՀՐԱՄ

ՍԱՄՓՍՈՆ. (մեծ շունչ մը քաշերով) Ես ախր առաջուց ասացի թէ առանց կարգալու էլ կարելի է իմանալ թէ վահրամը ինչ կը գըի, փո՞ղ, փո՞ղ, փո՞ղ։

ՍԻՍՈՒ. Ի՞նչ մեծ ոճիր, գործիչ մը, որ այս հանդիսան տեղը թողած կ'երթայ երկիր կը մտնէ և ամբողջ մէկ տարի նամակի ու դրամի կը պասէ, փոխանակ ձգել հեռանալու։

— 34 —

ԱԱՄՓՈԽՆ. Շատ խելօք բան կ'անէր եթէ
ձգէր հեռանար:

ԱԻՍԱԿԻ. Հա, իսկ այստեղէն մեկնելուն ին-
չո՞ւ քաջալերեցիր, դուն չեիր որ վերջին իրի-
կունը այն խանդավառ բաժականուը խօսեցար:

ԱԱՄՓՈԽՆ. Դալախ արեցինք. ես կարծում
էի թէ կ'երթայ մի գործ կը շինի. առ ախր
դրանք ինչի՞ս յեղափոխականներն են հէ, դոնէ
մի անդամ էլ գրէին թէ մի տեսօր կատարե-
ցինք, կամ մի զարթիայի գլուխ կարեցինք, չէ,
հէնց որ մէկը ոտը երկիր է դնում իրա առաջին
գործն է համարում մեղանից փող պահանջել,
կարծես մենք էստեղ միւխների մէջ լողալիս
կամ կեղծ փող կտրելիս լինենք:

ԱԻՍԱԿԻ. Իսկ քու բրօշիւրներուդ, կօնֆե-
րանսներուդ և ամբողջ պապուկի դործունէու-
թեանդ համար միշտ փող կը դանես և հիմա
խորհի ամենայն հանգստութեամբ կրնաս թողնել
որ ընկեր գործիչ մը քանի մը ոսկիի պակասու-
թեան պատճառով ձերբակալուի, մինչդեռ ատիին
պատրաստութիւն կը տեսնես քանի մը հազար

Փրանկ ծախսելու կօնդրեսի մը վրայ:

ԱԱՄՓՈԽՆ. Այս' կը ծախսենք, որովհետեւ
դա գործ է. իմ կարծիքով աւելի լաւ է երկ-
րում տաս վահրամներ ձերբակալուեն քան այս-
պիսի մի չըեղ գործ գլուխ չդայ:

ԱԻՍԱԿԻ. (տեղին վեր ցատրելով) Այդպէս է.
կեցցես. ուրեմն ա'լ աւելորդ է խօսիլ, ես ան-
միջապէս կը զրեմ վահրամին որ ձգէ գուրս
դայ:

ԱԻԵՑԻԲ. Է Սամկան, ախր դու էլ ծայ-
րայեղութեան ես հասցնում. սա էլ է հարկաւոր
նա էլ: (Սիսակին) Սքիսինիայից երեկ 300 ֆր.
ստացւեց ա'յ վերցըրու ուղարկիր վահրամին:

ԱԻՍԱԿԻ. Ես ա'լ բանի չեմ խառնուիր, ինչ
կուզէք ըրէք: (Սաստիկ յուզուսած սեղանի երկայնքին
վեր վար կը քալէ:)

ԱԻԵՑԻԲ. Է ախր էդպէս չէ կարելի խօսել,
դա ընկերական յարաբերութիւն չէ:

ԱԻՍԱԿԻ. (ջային դառն քրքիջով) Հահա՛, դեռ
ընկերական յարաբերութեան խօսքն ալ կ'ընէք:

ԱԱՄՓՈԽՆ. (մեղմացած) Եղբայր ախր ինչ

իրաւոնքով ես ամէն մեղ մեղ վրայ բարդում,
վահրամի նամակները աւելի շուտ ստացում են
կովկասում, մենք էլ կարծել ենք թէ էնտեղից
բաւրարութիւն են տալիս նրա պահանջներին:
չէնց դու ինքով կովկասից ես գալիս, ինչո՞ւ նա-
մակ չէին գրում, ինչո՞ւ փող չէին աղարկում:
առ ախր Արևելեան կենտրոնի շրջանու է:

ՄԻՍՈՒ. (կատրած՝ բռուցքով սեղանին զարներով)
գետնին տակն անցնին Արևմտեանն ալ Արևելեանն-
ալ. ս' վ պիտի զրկէ, ս' վ պիտի ընէ: Այդ Արևել-
եան կեդրոն ըստուծը գոյութիւն ունի, մարդիկ,
որոնք տարիներէ ի վեր ժողով մը չեն ունեցած,
իրենց ընտրութիւնն իսկ մոռցած են: Այս ամէնը
դուք ինձմէ լու դիտէք:

ՍԱՄՓՍՈՒ. (պահ մը րոկէ յետոյ) Ես վահրամն
էլ տարօրինակ մարդ է, որ եդքան նեղն է ախր
ինչո՞ւ է մեղ դիմում, կովկասից վերջերս 2000
միք. փող ուղարկեց Սասուն, թող դիմէր Սա-
սունի կոմիտէին, Մալաթիայից Սասուն ընդ-
ամէնը մի քանի ժամուայ ճանապարհ է:

ՄԻՍՈՒ. (դառն ծիծաղով) Օհօ, ա՛լ աս դլուխ

գործոց է, Մալաթիայէն Սասուն քանի մը
ժամուան ճանապարհ է:

ԱԼԵՅԻՐՅ. Զէ՛ Սամիսոն, կարծեմսիալում
ես, էդքան մօտիկ չպէտք է լինի, Մալաթիայից
Սասուն հեռաւուրութիւնը մի քանի օր կը լինի:

ՄԻՍՈՒ. ի՞նչ մի քանի ժամ, ի՞նչ մի քանի
օր, առնուազն 10 օրուան ճամբայ է, կը լսէք
10 օրուան. նա՛ քարտէզը նայէցէք, ջուխտակ
ջուխտակ քարտէզներ շուրջերնիդ կախուած են,
լոկ զարդի համար:

ՍԱՄՓՍՈՒ. (ինքարով) Նու լա՛ւ թող լինի 10
օր, ի՞նչ ես չարանում տնաշէն, երբ երկաթուղի
լինէր մի քանի ժամում կարելի էր գնալ: (Լորչ)
Բայց բաւական է ինչքան խօսեցինք այդ հարցի
մասին: Խնդրում եմ Սիսակ դու յետոյ էդ նա-
մակի վերջին մասից մի թղթակցութիւն սարքիր
Les Plaiesի համար, իսկ այժմ խօսենք Բրիւտէլի
կօնդրեսի մասին:

ՄԻՍՈՒ. Ես զզուած եմ պլոտոկոլներ կազմելէ:
Մենք յեղափախականներ չենք այլ հրապարակի
մուրացկաններ, որոնք իրենց մարմնին վէրքերը

ցուցագրելով արդահատանք կը շարժեն: Երկրէն
եկած նամակներուն միայն այն մասերը կը հետապրբեն ձեզ, որոնց ստերիօտիպ օրինակներով
լեցուն է «Շեփոր»ի ամբողջ 14 տարուան հաւաքածոն: Հայտատանի մէջ առած մը կայ «գեղը
թալլեցին, հարսը չեմ դիտեր ինչ ըրին», այս է ահա այդ բոլոր թղթակցութիւններուն ուղնու-
ծուծը: Ագոնք կարդացողը դործէն ալ կը յու-
սահատի, մեր ամբողջ ժողովուրդէն ալ:

ՍՈՄՓՈԽՆ. Դու միշտ կարծում ես թէ դրա-
նով մի մեծ միտք ես յայտնում, բայց շատ սխա-
լում ես. հէնց այդ տեսակ պրօտօկօլներ են հար-
կաւոր մեղ. նոյնը տսում են և Պրեսանսէն և
Կլեմանսօն և Անտուլ Ֆրանսը և մեր եւրոպացի
բոլոր ականաւոր բարեկամները, չոր ֆակտեր
գնել եւրոպայի աչքերի առաջ:

ՍԻՍՈՒ. (դրախր շարժերով) Խեղճ Պրեսանսէ,
խեղճ Կլեմանսօ, խեղճ Ֆրանս, որ դիտնայիք
թէ ինչ տիմարութիւններ էը դործուին ձեր ա-
նունով:

ԱԼԵՏԻՔ. Նու, նու, էլ բաւական է, արի

նստիր. սկսիր Սամփսոն, ինչ էիր ասում Բրիւ-
սէլի մասին:

ՍՈՄՓՈԽՆ. Են էի կամենում ասել որ ինձ
վերին աստիճանի զարմացնում է այն տխուր
փասուը, որ մարդիկ չեն ուզում հասկանալ մի
այնպիսի խոշոր դործի՝ ինչպիսին է Բրիւսէլի
կօնդրեսը՝ ահագին նշանակութիւնը: Այժմ մի
կողմ թողնենք այն հարցը թէ ինչ արդիւնք կա-
րող է տալ մի այդպիսի կօնդրես, թող մեզ մի-
այն աջողւի էդքան յայտնի մարդկանց մի տեղ
հաւաքել յանուն մեր հարցի, գա ես կարծում
եմ, արդէն ինքնըստինքեան մեր յեղափոխական
շրջանի պատմութեան մէջ դեռ շտեսնուած, մի
փառաւոր, մի շքեղ, մի գրանդիօնի բան կը
լինի...:

ՍԻՍՈՒ. (որ պատռհանին մէջ նստած դուրս կը
հայի, ստրի և լլերով) Ես ալ վերջին աստիճան
կ'ապշիմ, կը կատղիմ որ մարդիկ գեռ չեն ուզեր
ըմբռնել թէ գրանդիօնի բաներ սարքելու,
գեղեցիկ խոսքեր լսելու համար չէ որ կը քա-
մենք այս կիսամեռ ազգին արիւնը: Մենք ճա-

ուելով ժամանակ կ'անցընենք, եւրոպացիներէն ալ ճառեր կը մուրանք, փոխանակ մեր բոլոր ուժերը յարմարագոյն տեղ մը կեդրոնացնելով գործ մը կազմակերպելու և եւրոպացի համակիրներու աջակցոթեան ալ դորձնական ընթացք մը տալու: Թող օգնեն մեզի դրամով, զէնքով, ռազմագէտ կամաւորներով և իրենց արամագրութեան տակ եղած հաղարումէկ դիւրութիւններով, ազւոր խօսքեր պէտք եղածէն շատ լսեցինք: Յունաստանի համակիրները միայն ճառերով չե որ յայտնեցին իրենց համակրութիւնը:

Ահեծիթ. Ես էլ եմ կարծում որ Սամիստնը մի քիչ չափից դուրս լաւատես է. ի հարկէ ես չեմ բացասում որ մի այդպիսի կօնդրես մեծ նշանակութիւն կ'ունենայ, բայց դրանով միայն հազիւ թէ լուծուի հարցը: Եթէ միաժամանակ երկրում մի շարժում լինի, մի արձագանդ, շանուելը կը մեծանան: Սյու պատճառով ես էլի պնդում եմ որ հարկաւոր է նորից զբել և հանգամանքները բացատրելով մի բան անել տալ, թէկուզ մի փոքր բան, այ օրինակ մի քանի

հոգի դուրս զան փողոցներում ոռոմք դցեն, կառավարական հիմնարկութիւնների վերայ յարձակուեն, մի խօսքով վերջապէս մի բան անեն: Այսպիսի ժամանակ իմ կարծիքով ինքնըստինքեան մի փոքր բանը շատ աւելի մեծ նշանակութիւն կ'ունենայ, քան սովորական ժամանակ մի մեծ ապառամբութիւն: Եւ վերջապէս օտարների առաջ մեծ ամօթ կը լինէր ձեռքներս ծալած նստել և ամէն բան նրանցից սպասել. ախր մարդիկը ինչ պիտի մտածեն եթէ այն երկիրը, որի անունից իրանք խօսում, պահանջներ են դնում, ոչ մի արձագանգ չտայ:


ՍՊՄՓՍՈՆ. Շատ գեղեցիկ. Ես ոչինչ գէմ չունեմ, յամենայն գէպս վատ չէր լինի մի փորձ անել, բայց ո՞վ պիտի անի. այ խօ լսեցիր նամակը, անշնորհները միայն փող պահանջել գիտեն, փո՞ղ, փո՞ղ, փո՞ղ. չեմ իմանում սա յեղափոխութիւն է թէ վաճառականութիւն:

ՍԻԱԾԿԻ. (զիսարկը զրուխը կը դնե և դեպի դուռը կ'ուղղուի) ԶԵՇ ա՛Լ չեմ կրնար, պարզապէս խելագարուիլս կուգայ:

ԱԼԵՅԻՔ. (սարի եղերով) **Ո՞ւր հէ,** ախը մի
քիչ էլ սպասիր էս կօնդրեսի հարցը վճռենք:

ՍՈՒՄՓԱՌՆ. Թո՛ղ, թող գնայ մի քիչ մաքուր
օ՛ք ծծի, ես առաջի բոպէից նկատեցի որ նրա
դժուկը էս որ էլի լաւ գրութեան մէջ չէ:

ՍԻՍԱԿ. (դոնեկ) Ստ լաւ ըսիր, մաքուր օդի
պէտք ունիմ, կը խեղդուիմ հոս, կը խեղդուիմ:
(Գորս:)



Զ. ՏԵՍԱՐԱՐԱՆ

ՍՈՒՄՓԱՌՆ. (սարի եղերով) **Ախը ի՞նչ է** պա-
տահէլ էս լակուտի հետ, քանի գնում անտանելի
է դաւնում:

ԱԼԵՅԻՔ. Ճիշդն ասած ես բան չեմ հառկա-
նում, ո՛չ նրանից ո՛չ քեզանից:

ՍՈՒՄՓԱՌՆ. Ճօ ախը ես ինչո՞վ եմ մեղաւոր,
իս տեսնում ես թէ ինչպէս եմ համբերում նրա
կոպատութիւններին, ես որ չեմ թողնի թռչունը
մօտովս անց կենայ:

ԱԼԵՅԻՔ. Նա շուտ տաքացող է, բայց դու
էլ երբեմն շատ անդակու ես վալւում:

ՍՈՒՄՓԱՌՆ. Ե՞ւ լաւ, այդպէս թող լինի,
այժմ ամենեին ցանկութիւն չունեմ մի նոր վէճ
էլ քեզ հետ սկսել: (Ժամացոյցը նայերով) Գնանը
ճաշի, արդէն ժամանակ է. ճաշից յետոյ կը գաս
ինձ մօտ Յըիւսէլի հարցը կը մշակենք:

ԱԼԵՅԻՔ. (սար) Լա՛ւ. (պատուհանին վեղիերը կը
դոցէ, սեղանին զգրոցը բանալիով կը փակէ:)

ՍՈՒՄՓԱՌՆ. (Միւս սենեակը երբարով զիհարկը
զրաւիլ կը դնէ, զաւազանը կ'առնէ և դոնեկ) Խակ սօ-
ցիսլիսաների ժողովը այս երեկոյ է նշանակած
չէ:

ԱԼԵՅԻՔ. Այս' ժամի 8ին:

(Երկուամբ ալ դուրս)

ՎԱՐԱԳՈՅՔ



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

«Թաճոր» սօցիալիստական համդէսի խմբագրական սենետակը, որ միևնույն ատեն իրը ՀՅԹերգարան-Խարաց կը ծառայէ սօցիալիստ խմբակին և իրը ննջարան եկող գաշող սօցիալիստ գործիչներու: Մեծկակ, միթ և ցած սենետակ մը չկահաւորուած: Նաև պատին վրայ երկու պատուհան, ծախ կողմը դուռ մը, որ տպարանը և խմբագրին մասնաւոր սենետակը կը տանի, իսկ ասոր նիշտ զիմացը դրախ դուռը, նույը ծախ անկիւմը երկաթէ հասարակ մահժակալ մը, որու մօտ պատին վրայ փոքր ճաթած հայելի մը կախուած է: Պատուհաններուած միջն պատիկ սեղան մը, որու վրայ ջրի շիշ մը և քամի մը զաւաթներ դրուած են: Աջ աթիւմը գրքերով լեցում խոշոր կոպիտ դարակ մը, որու մօտ փայտէ մահժակալ մը, Մէջտեղը երկար սեղան մը, որու վրայ ոռաներէն և ֆրանսերէն թերթեր թափուած են: Սեղամին երկու կողմը առանց յենարամի երկու երկար նստարաններ և հոս ու հոս ցրուած շատ մը աթոռներ: Պատերը զարդարուած եւրոպացի և ոռու սօցիալիստ գործիչներու պատկերներով:

Ա. ՏԵՍԱՐԱԿ

ՔՕԶԱԿԵԱՆ. (Անդանին ետեի ծայրը արոսի մը վրայ նստած կը դրէ և կը ծխէ, քարիսդի մեծ բամբ մը առցելք:)

ԲԱԼՈՒՆԻ. (Ճախէն կը մտեն երեսարքիչով մը երեսը և ձեռքերը սրբերվ, կ'երբաց հայելիին առջեւ, երեսը սրբերի յետոյ երեսարքիչը մահնակալին վրայ կը կախէ, բարձին տակէն սանոր մը հաներով մազերը կը տանորք և յարդարաները վերջացնենէն ետքը, ետեն յուշիկ կը մօտենայ Քօջակեանին և անոր աշխատութեան վրայ ծուերով՝ ցած ձայնով մը) **ՎԵՐջացըթի՞ր:**

ՔՕԶԱԿ. (Կտեր հայերով) **ՎԵՐջացնելու վրայ եմ:**

ԲԱԼ. (Ատամները սեղմած և բառեցքը շարժերով) **Բայց ազա՛ռմ եմ, տա՛ս, տա՛ս, աչք ունք չնաշիս տա՛ս:**

ՔՕԶԱԿ. (շաբանակերով զրել) **Իսկ դու ի՞նչ արեցիր, արդէն շարեցի՞ր յօդուածս :**

ԲԱԼ. **Չկրցայ լմեցնել ցո չմնաց:**

Ք02Ակ. Ի՞նչ չմնաց:
 ԲԱԼ. Յո, յը տառը:
 Ք02Ակ. Էլի, առ էդ ի՞նչ ես անում, ուստիւմ
 ես յը երը:
 ԲԱԼ. (խնդրաբլ) Ես չեմ ուստիւմ, գուն կ'ու-
 տես. այնչափ ց ով բառ կը դործածես ո՛ր:
 Ք02Ակ. Էդ լա՛ւ է, առ խօմ՝ զբած ժամա-
 նակ տառերը չեմ հաշոելու:
 ԲԱԼ. Չեմ ասում թէ յանցանքը քուկդ է,
 ամենէն անոյշ բառերն ալ արդէն ց շատ ունին,
 միայն թէ մենք պէտք եղածին չափ ց չունինք,
 ապսպըելու է:
 Ք02Ակ. Ապսպըելու է, հեշտ է ասել, իսկ
 փո՞ղը:
 ԲԱԼ. Կեցիր նայինք, կարելի է առ օրեր
 բուլղարիայից Աստմը մի քիչ բան զրկէ, իսկ
 հիմակուհիմա այսպէս անենք. ց ի տեղ ո շարենք
 և մի ծանուցում մըն ալ տպենք թէ ո երը տեղ
 տեղ ց կարդալու է:
 Ք02Ակ. (բարձրաձայն խնդրաբլ) Ի՞նչ ես դուքս
 տալիս առ, էդպէս բան կարելի է. այս երեկոյ

Աշտախն ասս՝ մեզ մի քիչ ց բերի:
 ԲԱԼ. Կ'ըսեմ բայց ոչ սիրով, վերջերս մի
 քիչ քիթ բերան է ծոսւմ, ասում է որ աղաները
 իմացեր են:
 Ք02Ակ. Ես կ'ասեմ նա կ'անի, գու այժմ
 ինձ հանգիստ թող զործս վերջացնեմ:
 ԲԱԼ. (Քօչակ.ին կանակը շոյերալ) Վերջացուր,
 վերջացուր, ես ալ քիչ մը զինուիմ վիճաբանու-
 թեան համար: (Գրպանեն փոքրիկ տեսրակ մը կը
 հանե և պահ մը Քօչակին ետեղ ձեմերով բան մը գոց
 կ'ընե ձեռքի ողեար շարժումներով: Յետոյ տեսրակը
 ծոցը կը զնե և զարձեալ կը մօտենայ Քօչակ.ին) Ինծի
 լոիր լիսն, սա գուլումեանը ա՛լ համը փախ-
 ցուց, հենց որ նեղը մնան նէ վեր է կենում մի
 յիմար բանաստեղծութիւն անում, աղջիկներն ալ
 շուտ մը ծափահարում են և ա՛լ չեն թողնում որ
 մարդ բան ասէ: Եթէ այսօր էլ այդպէս ընելու
 ըլլայ նէ գիտես ինչ պիտի ընեմ, պիտի ելլեմ
 երեսն և վեր պառամ. «դուն պալիատիվ մարդ
 մըն ես, կուեկանիվ մտածողութեան անընդունակ:
 Ք02Ակ. (քրքիչ մը բաձրացներալ) Ա՛յ քո տունը

չքանդուի, տօ ախր ի՞նչ ես դուրս առաջին հէ,
դու մեղ մի օր լաւ խայտառակելու ես, ախր
իմանում ես ի՞նչ է նշանակում պայխատիվ:

ԲՈԼ. Ե՛ ճանըմ ի՞նչ կը խնդաս, քու յօդ-
ուածէդ եմ առեր նա՝ (ծոցեն տեսրակը համերով կը
բանայ և կը կարդայ) «մարդիկ, որոնք պալիսամիվ
միջոցների են գիմում» :

Ք0ԶԱԿ. (շարունակերպ) Դէ լու, էդտեղ խօմ
չէ ասուած պայխատիվ մարդ:

ԲՈԼ. Տէ լու ազբար հերիք խնդաս, ամօխ
չէ եա աղէկ մը չեմ հասկցեր միտքը, մինակ
առշափ գիտեմ որ գէշ միտք մը ունի. հիմա
ինդալու տեղ սորվեցուր, ինչ ըսել է պայխատիվ:

Ք0ԶԱԿ. Պայխատիվ նշանակում է... պալիս-
տիվ միջոց... ա՛յ օրինակ այն միջոցը, որը դու
առաջարկում էիր ց երի տեղ և եր շարելու մա-
սին:

ԲՈԼ. Իսկ կօլեկտիվ:

Ք0ԶԱԿ. Իսկ կօլեկտիվ նանոկում է (երկու
ձեռքովը ժողվելու շարժում մը ընկրով) կօլեկտիվ, այ-
սինքն ամենեքեան միտին:

ԲՈԼ. Ե՛ աղէկ, ուրեմն հիմա չըլլա՞ր կ'ըսես
աս լսած խօսքս:

Ք0ԶԱԿ. (ինոյարով) իհարկէ որ չըլլար:

ԲՈԼ. Անանկ է նէ ուրիշ լաւ խօսք մը սոր-
վեցուր անոսր տեղը:

Ք0ԶԱԿ. ի՞նչ խօսք. ա՛յ օրինակ կարող ես
առել բուրամիտ մարդ, մտածերա և եներդիս չունեցող
մարդ...:

ԲՈԼ. (զրոխը ցնցերով) Ծը՛, աղմնք հէչ, սա
պալիսամիվին պէս բառ մը. տե՛ս պայխատիվ որ
ըսես նէ սա զուլումեանի նման պալիսայի պէս
ծանը, տեղէն չչարժող մարդու մը թութիսալի
պէս կը փակի:

Ք0ԶԱԿ. (կոչշտ մը ինոյարէ յետոյ) Նու բաւա-
կան է, թող գործս վերջացնեմ, տղերքը հիմի
կըդան:

ԲՈԼ. Լա՛ւ, լա՛ւ, վերջացուր ա՛լ չեմ խան-
գարեր: (Ետեի պատին վրայ զամուսած Մարքսի պատ-
կերին առջե երբարով զրպանեն պղտիկ հայելի մը կը
հանե և ձեռքով կ'աշխատի անոր նմանուրիւնը տար իր
մազերուն ու մօրոքին:)

Բ. ՏԵՍԱՆ-ՌԱՅ-Դ.

ԱՐԱՄ. (աչճ կը մտնե և Թօջակեանին խոր զրւիք տարսվ) Բարի իրիկուն, Թօջակ՝ չսանդարեմ:

ՔՅԶԱԿ. (շարսմակերպ զրել) Հա հոսհոս ի՞նչ ա, ժողովի՞ ես եկել, եթ ի՞նչպէս է պատահել:

ԱՐԱՄ. Թատարոն պիտի երթայի, բայց դրամ շունենալուս հոս եկայ, կարծեմ հոս մուտքը ձրի է:

ՔՅԶԱԿ. Հա՛ ձրի է, ուզում ես գեռ վող էլ կը տանք որ միշտ դաս և մի քիչ մարդ դառնաս:

ԱՐԱՄ. Շնորհակալ եմ Աստուած պակաս շընէ: (Յանկարծ կը նկատ Յարսմին և ձեռքը երկնացած կը վազէ անոր վրայ) **ՕՀԾ** աննման Բալունիս, բարե, ի՞նչպէս ես:

ԲԱԼ. (որ Արամը ներս մտներւն շուտ մը նայելին դրամել դրած է, ձեռք տարսվ) **Ազէկ** եմ աննման զէվզէկս:

ԱՐԱՄ. Գուն ալ բան մը պատրաստե՞ր ես:

ԲԱԼ. Ի՞նչ պիտի պատրաստեմ. ձեզիպէմեն բուն հետ վիճելու համար ես միշտ պատրաստ եմ:

ԱՐԱՄ. (Բարունիին կրնակը ծեծերով) **Օ՛** կեցցես, ի՞նչ էր ան վաշխառուին անունը որ քու արտերդ գրաւեց:

ԲԱԼ. (ատամները սեղմած և զրոխը շարժերով) Շերիկծի Պետո, ես անոր եօթը պորտը անիծեմ:

ԱՐԱՄ. Անիծես, ծօ ընդհակառակը օրհնէ. Բալու սոցիսլիզմ' հաստատուի նէ այդ մարդուն արձանը պէտք է կանգնել իշեկ-Մէյտանի մէջ, որ քեզի պէս հոյակապ գործիչ մը նետեց սոցիսլիզմի գիրկը:

ԲԱԼ. Ատ լեզուգ չըլլար նէ ագռաւները վազուց գլուխդ կերեր էին:

ԱՐԱՄ. իսկ քու գլուխդ օրէ օր կարէ Մարգսի գլխուն ձեր կ'առնէ.

ԲԱԼ. Ի՞նչ կ'ըսես, ախանս հայելի մը չկայ որ համեմատեմ:

ԱՐԱՄ. (Թօջակեանին, որ աշխատուրինը վերջացած ծոցը կը դնէ և կը մօտենայ միաներուն) **Օ՛** Թօջակ, ճիշդ չէ լսածս, մեր Բալունիին գլուխը երթալով Մարգսի գլխուն ձեր չառնե՞ր:

ՔՅԶԱԿ. (Որամին զրոխը ձնէրով) Տօ ստոկես

դու է. քո դլուխն էլ քանի գնումն է պարիղեան
լուրժուայի դլուխ է դառնում:

ԱՐԱՄ. Բուրժուայի. կը սխալիս, բարեկամ,
ես մազ մը մնացեր է որ սօցիալիստ դառնամ.
Եթէ աս իրիկուան դասախոսութիւնդ ազւր ըլ-
լայ և մեր Բալունին ալ քիչ մը ներշնչուի նէ
ա՛լ չեմ դիմանար:

ԲԱԼ. Դուն մինչե որ պապայիդ փարաները
չհատցնես նէ սօցիալիստ շես կրնար ըլլալ:

ԱՐԱՄ. Ծո իրա՞ւ կ'ըսես. անանկ ալ ըլլայ
նորէն օրը մօտեցած ըսել է:

ՔՕԶԱԿ. Շատ մազալու բան կը լինէր քեզ
մի օր սօցիալիստ տեսնել. բայց ափա՛ս որ ան-
կարելի է դա: Աւետարանում Յիսուս մի լաւ
պատասխան է տալիս էն բուրժուային, որը ու-
զում էր քրիստոնեայ դառնալ. էդ ի՞նչպէս ա-
սում, մի ժամանակ հայրս կարդում էր մոռա-
ցել եմ, դու կ'իմանաս, հոսհոսները տիրացուա-
կան բաներ լաւ են իմանում:

ԱՐԱՄ. Գիւրին է մալիսոյ ընդ ծակ ասղան
անցանել, քան մեծատան յարքայութիւն Աս-
տուծոյ:

ՔՕԶԱԿ. Ո՞յ հէնց էդ է. քեզ էլ այժմ հար-
կաւոր է ասել. գիւրին է մալիսոյ մտանել ի
ծակից ասղոյ քան հոսհոսի ի ծակից սօցիալիկ-
մոյ:

ԱՐԱՄ. (Մեծ բրբիչ մը փրցմերով և ծափանարե-
րով) Բլավօ, կեցցէ ծակն սօցիալիկմոյ:

Պ. ՏԵՍԱՅԱՌԱՅ. Դ.

ԵՐՈՒԱՆԴ. (աճեն կը մտեն) Բարե ձեզ: (Երե-
քին ալ ձեռքը կը բօրվէ:)

ՔՕԶԱԿ. Բարի երեկոյ:

ԱՐԱՄ. Ասոծու բարին Պր. Աստրախանցի:

ԲԱԼ. (մասնաւոր գորգուրանքով մը ձեռք տարով) Բարե աղբարիկս ս՞նց ես, աղէ՞կ ես:

ԵՐՈՒԱՆԴ. (որ միշտ կը մպահ) Շատ շնորհա-
կալ եմ:

ՔՕԶԱԿ. (սուսերեն) Ի՞նչպէս էք, ի՞նչով էք անց
կ'ացնում զեր ժամանակը, դո՞հ էք էստեղի
կեանքից:

ԵՐՈՒԱՆԴԻ. (առանձին) Ճիշդն ասած շտո
ձանձրանում եմ, օրեկան մի ժամ փրանսերէն
դասեր եմ վերցնում, իսկ մնացած ժողովանակը
չգիտեմ ինչպէս անց կ'ացնեմ. երեկոյեաները
գնում եմ ռասաց ժողովները, որ միակ հետաքրքիր
բանն է էստեղ ինձ համար, գիշերը ուշ ժամն
հակ վերադանում եմ և մինչեւ կէսօրից յետոյ
ժամի երկուոր լուս:

ԱՐԱՄ. (Քօջակ.ին) Ծո՛ հայերէն չխօսիս աղուն
հետ որ սրմի:

ՔՅՉԱԿ. Որ չի հասկանում ի՞նչպէս խօսեմ:

ԱՐԱՄ. Շատ լաւ կը հասկնայ, ես ի՞նչպէս
կը խօսիմ հետը. անանկ չէ Պր. Երուանդ:

ԵՐՈՒԱՆԴԻ. Շատ գժուարն եմ հայերէն հառ
կանում, սաերէն աւելի լաւ ա: (Աեղանին առնե
ևսերով սասերէն բերը մը ձեռքը կ'առնել:)

ԱՐԱՄ. (Քօջակ.ին) Զէ՛, բաւական յառաջ տառ
բեր ես, այս ընթացքով մօտ օրէն կը մկլաւես:

ՔՅՉԱԿ. Տօ՛ շան հստակ, ո՞վ է մկլաւելու
մասին մտածում. մարդը հետաքրքրուում է, գա-
լիս է թերթեր կարդում, բրօշիւրներ վերցնում:

ԱՐԱՄ. Ե ճանըմ ի՞նչ ինքզինքդ կ'արդա-
րացնես. ա. մօթ չէ եա, արդէն անանկ ալ պիտի
ըլլար. այս շարաթի երկու նոր ռւսանող եկան,
տեսնելուս պէս լսի որ աս ձեր բաժինն է, իր-
զըրումցին ալ միւսներուն: Աս երկու Խմբագրու-
թիւնները հոս հայ ռւսանողներուն համար Քարիբ-
դիս և Սկիլան են, մէկէն ազատողը միւսին կուլ
կ'երթայ: (Յանկարծ դրան կողմէ նայերով) Եկան,
եկան, տիկնայք փափկառունք հայոց աշխարհին:

Դ. ՏԵՍԱՐԱԿՈՒԴ

ԴԱՒԼՈՒՄԵԱՆ. (աչեն կը մտնե ըշապատռած
եօր սասանողունիներէ, որուք միայն զիսով կը բարեեն,
իսկ ինք բարձրաձայն) **Բարի երեկոյ** (և խոնդին հետ
սեղանին վերի ծայրը տեղառուերով կը շարունակ ան-
ձայն խօսակցիւ:)

Ե. ՏԵՍԱՐԱՆ

ՕՐ. ՏԵՐ ԱՊՈՔԱՅԵԱՅՑ (աչեն մտելով առանց Գուրումեանի խումբը բարեկարու ուղղակի կը մտենայ Քօշակեանին և սուսերէն) Բարի, ի՞նչ նորութիւն:

ՔՕԶԱԿԵԱՆ. (սուսերէն) Բարի երեկոյ օրիորդ, ոչ մի նորութիւն:

ՕՐ. ՏԵՐ ԱՊՈՔ. (սուսերէն) Պարիզից գեռ տեղեկութիւն չկո՞յ:

ՔՕԶԱԿ. (սուսերէն) Ո՛չ, երեխի վաղը առաւոտ կըստանանք:

ԱՐԱՄ. (որ արոտի մը վրայ ճատած րերը կը կորդայ) Դա դա, վագա, վօդկա, վզիստկա:
(Գուրումեանի խումբը խորտակ կը խնդայ):

ՕՐ. ՏԵՐ ԱՊՈՔ. (Արամին մտենարով և զրոյի տարով) Հա՛ Դուք էստե՞ղ էք Պր. Արամ, ներութիւն ես Զեղ չեմ տեսել:

ԱՐԱՄ. (սաքի երերով և խոր զրոյի տարով) Վնաս չունի օրիորդ, պղտիկ մարդիկը միշտ չեն տեսնուիր:

ՕՐ. ՏԵՐ ԱՊՈՔ. Դուք շատ անիրաւն էք, իմանում էք, էլե՞ս սկսեցիք խայթելը:

ԱՐԱՄ. Խայթել, ո՞հ քաւ լիցի օրիորդ, ես մարդ չեմ կրնար խայթել, ուր մնաց Զեղի պէս հրեշտակային արարած մը:

ՕՐ. ՏԵՐ ԱՊՈՔ. (Կոտրանելով) Կորէք անպիտան, էդ կօմպլիմենտները արէք ձեր հոսհոսուչիներին, որոնք շատ են սիրում էդպէս խօսքերը, ես խկի չեմ ցանկանում հրեշտակային լինել, այլ եթէ կարելի է մեֆիստօֆելային: Որ չէկը ուզում խայթել, հազար ի՞նչ էկը ուզում ասել Զեր էդ փաղա, վաղիս, վզիստկաով:

ԱՐԱՄ. Ոչինչ օրիորդ, միայն ոռւսերէնի վարժութիւն կ'ընէի, որովհետեւ կը տեսնեմ որ եթէ այսպէս երթայ շուտով մենք ալ պիտի սովորուինք ոռւսերէն խօսիլ:

ՔՕԶԱԿ. Այ էդ լաւ ասացիր, էդպէս էլ լինելու է:

ԳՈՒԼՈՒՄԵԱՆ. (կը հազայ):

ԲՈՒԼՈՒՆԻ. (որ անկողնին վրայ ճատած ծոցի տեսրակը կը կարդայ՝ առեջի բարձր հազոր մը կը պատահանեմ):

ՏՅ. ՏԵՐ ՍՊԻԹ. Ինչ անենք, լաւ կը լինէր
որ սկսէիք. որ սսերէն իմանայիք էլ չէիք ծաղրի
մեղ որ սսերէն ենք խօսում: Շատ հասկանալի է որ
Տաճկահայերդ օտար լեզուի չէք խօսում, որով-
հետև ձեզ մօտ, այսպէս ասած, (Քօչականին դառ-
նարավ) գասազօղսավոցիւնիք հազիկ:

ՔՕՉԱԿ. (կը բարգման) Տիրապետող լեզու:

ՕԲ. ՏԵՐ ՍՊԻԹ. Հա՛ որովհետեւ տիրապետող
լեզուն ձեր մօտ թրքերէնն է, իսկ թրքերէնը
խօմ շատ աւելի վատ է քան հայերէնը. իսկ
մեղանում տիրապետող լեզու սսերէնն է, որը
ի հարկէ անհամեմատ աւելի լաւ է քան հայե-
րէնը, կուլտուրական լեզու է, հարուստ լիսե-
րատուրա ունէ և ես կը ցանկանայի որ բոլոր
հայերն էլ էնքան առաջ գնային որ սսերէն խօ-
սային:

ԱԲԱՄ. Է՛ ես ալ ադոր համար ոտուերէն
կը սորվիմ, ալ ի՞նչ կ'ուզէք, կեցցէ յառաջդի-
մոթիւնը:

(Այս խօսակցութեան միջոցին նետպիւնք կը հաշար-
ուին ասսերէնինց ուսուեղիներ ես, և ամրող բազմութիւնը

նկատելի կերպով երկու մասի կը բաժնուի, մեծամասնու-
րիւնը ազգային յեղափոխականներ և փոքրամասնուրիւնը
ոսցիալ-դեմոկրատներ:)

Զ. ՏԵՍԱՎՈՐՈՒՄ

ԱՅԱՄՓԱՌՆ ԵՒ ԱԽԵՑԻՔ. (աչեն մտնելով) Բարի
երեկոյ:

ԳՈՒԼՈՒՄԵԱՆ իր խմբով, ՔՕՉԱԿԵԱՆ և ոմանք,
Բարի երեկոյ:

ՔՕՉԱԿ. (Ճամացոյցը նայերով) Կարծում եմ կա-
րող ենք արդէն սկսել, ժողովը նշանակած է
ժամի 8ին, իսկ արդէն առանց քառորդ ինն է:

ԱՅԱՄՓԱՌՆ. Հարկաւոր է սկսել:

ՔՕՉԱԿ. Դէ տղերք ուրեմն սեղանի շուրջ
հաւաքուեցէք:

(Հեռուն հասողներէն ումանիք սեղանին շորջը տեղ
կը բանեն:)

ՔՕՉԱԿ. Խնդրում եմ նախ քան սկսելը մի
նախագահ ընտրել:

ԱՐԱՄ. Ի՞նչ հարկ ընտրելու, մեր նախագահը Աստուած է ընտրեր, Պր. Սամփառն խընդրենք դանդակը առէք:

(Զանազան կողմերի ծիծադների:)

ՍՈՅՓՈՌՆ. Հա դօ' դու էլ էստեղ ես, եդ ի՞նչպէս է պատահել:

ԱՐԱՄ. Ես առուաւան խօսքերէդ աղդուած ոլոշեցի լուրջ մարդ դառնալ:

(Ծիծադների:)

ՍՈՅՓՈՌՆ. Պարոններ, խնդրում եմ մի ուրիշին նախագահ ընտրեք, որովհետեւ ես էսօր չափազանց յսգնած եմ:

ԱՐԱՄ. Ձե՛ չըլլար, կ'ապաշենք:

ՕՐԻՈՐԴԻ ՄԸ. Պր. Սամփառն խնդրում ենք վերցրեք նախագահութիւնը:

ՉՈՅՆԵՐ. Այս' այս':

ՍՈՅՓՈՌՆ. Նու' որ պնդում էք: (Կ'երբայ ևղանին վերի դրսիր կը բազմի:)

(Ներս կը մտնեն Առարկն, Թաղեռս, Առատ և առձեզ քո/քովի կը նատին:)

ՍՈՅՓՈՌՆ. Նու' օրիորդներ և պարոնայք,

խնդրում եմ մասնաւոր խօսակցութիւններին վերջ դնել և ուշադրութիւն դարձնել. Պր. Քօշակեան խնդրեմ սկսէք:

ՔՕԶՈՒ. (Գասախօսուրինը ծոցէն կը հանէ և կը կասի) Սոցիալիզմը և հայկական իրականութիւնը:

ԲԱԼՈՒՆԻ. (Քօչակեամին առջև զաւար մը չուր կը դնէ և քովի կը նատի:)

ՔՕԶՈՒ. Ընկերներ,

Տիեզերքի և բնութեան մէջ ոչինչ կայ անշարժ, անվախոխ և մշտական: Ամէն ինչ շարժում է, ամէն ինչ փոփոխուում և անցնում: Գոյսութիւնը անցնող մի մօմենտ է, իսկ գոյացողութիւնը յաւիտենական մի պրօցես: Նոյնպէս և մարդկային հասարակութիւնները՝ անդադար դիալեկտիքական պատմական շարժման մէջ են, ուր նորը ծնւում է միշտ հնի մէջ: Պատմութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ դասակարգերի կռիւ և պատմական որոշ մօմենտին ինչ դասակարգի ձեռքն որ են ոնտեսական միջոցները, այն դասակարգն է հասարակութեան ղեկավարն ու ներկայացուցիչը: Աս մի գիտական աքսիօմա է: Միայն

Հայ ժողովրդի մէջ է նկատում այն տարօրինակ
երեսյթը, որ ոչ միայն հասարակ ֆրազէօրներ,
այլ նոյն խոկ իրանց ինտելիգենտ անուանող և
տարիներով եւրոպական համալսարանների գլու-
ները մայեցնող մարդիկ՝ այսօր քսաներորդ դարի
սկզբում՝ դեռ ստրափում են լսել հասարակա-
կան գիտութիւնների մէջ վազուց ապացուցուած
այս տարրական ծշմարտութիւնը և ամէն կերպ
աշխատում են խեղդել նրան։ Ես իմ այսօրուայ
դասախոսութեան նիւթ եմ վերցրել Սոցիալիզմը
և հայկական իրականութիւնը, կամենալով բա-
ցատրել այդ ըստ երեսյթին անհասկանալի երե-
սյթի պատճառները և ապացուցանել որ հայ
հասարակութիւնն էլ, ինչպէս ամէն մի հասա-
րակութիւն, բաժանուած է դասակարգերի, որ այդ
դասակարգերը տնտեսական կոիւ են մկում մի-
միանց գէմ և որ հարկաւոր է այդ կոիւը կազ-
մակերպել։

ԱՌԵԲԵՆ. Հայտէ նայինք։

ԲԱԼՈՒԻՆԻ. (Խոժոս ակնարկ մը նետերով Սուրենին) ուլու։

ՔՈՉՈՒԻ. Դեռ ևս աւելորդ եմ համարում
կանգ առնել հասարակագիտական այն հասարակ
ճշմարտութեան վերայ, որ դասակարգային բա-
ժանումները և դասակարգային կոիւը ոչ թէ ա-
նօրմալ և վաս երևոյթներ են հասարակութիւն-
ների մէջ, ինչպէս դժբաղդաբար կարծում է մեր
տննախանձելի ինտելիգենցիայի մեծամասնու-
թիւնը, այլ նրանք ամենաօրինաւոր, ամենաբնա-
կան և միակ արդիւնքն են հէնց ներկայ մաս-
նաւոր սեփականութեան սխտեմի։ Դասակարգա-
յին կոիւը հասարակական մի անխուսափելի և
անհրաժեշտ երեսյթ է և որ հասարակութեան
մէջ որ չկայ դասարակարգային կոիւ այն հա-
սարակութիւնը դեռ վայրենի դրութեան մէջ է,
բառիս սոցիօլոգիական նշանակութեամբ, որպէս
են օրինակ Մելանեզցիները, Պոլինեզցիները,
կրակի երկրի բնակիչները ևն։ Այլևս մեր դիպ-
լոմաւոր ազգասէրներին իրանց եմ թողնում
եզրակացնել թէ ինչ արջի ծառայութիւն են
մասուցանում չայ ժողովրդին բացանելով նրա
մէջ դասակարգերի և դասակարգային կոուի դո-

յութիւնը և այդպիսով հաւասարեցնելով նրան յիշած վայրենի բասաների հետ։ Մարդկութեան զարգացումը և առաջադիմութիւնը մինչև այժմ կատարւել է և կատարւում է միմիայն դասակարգերի կոռուպֆի ջէնց որ երեան եկան առաջին գործիքները, նրանց հետ և մասնաւոր սեփականութեան սիստեմը, նախկին համայնական կարգերը քայլայուեցին իրեւ սիստեմ։

ՍՈՒՐԵՆ. Գո՞րծ ունինք, նորէն Աղամ Եւայէն սկսանք։

ՍՈՅՄՓՍՈՆ. Պր. Սուրէն խնդրում եմ բացադանչութիւններ չանել։

ՔՈՉԱԿ. Եւ ցեղերը բաժանվեցին դասակարգերի — տիրողների և հպատակների, աշխատազների և վայելողների։ Առաջին գործիքների կատարելագործման հետ դասակարգերի բաժանումը և դասակարգային կոիւը աւելի և աւելի սասակացու։ Արուեկները կառեցին տէրերի դէմ, ջնջեցին սորկութիւնը և հաստատեցին ճորտութիւնը, ճորտերն ու բուրժուազեան կոռեցին ֆեօդալների դէմ և առաջինները վերածուեցին

բանւորները, իսկ երկրորդները կապիտալիստների։ Եւ այժմ պլուտոսը դասակարգը կռւումէ բուրժուազիայի դէմ ջնջելու համար չահագործութիւնը և հիմնելու համար անտեսական հաւասարութիւն։ Ուրեմն ինչպէս տեսնում ենք, պատմութիւնը դասակարգային կոիւ է, որի վախճանը սոցիալիզմի մէջ է միայն։ Այս տարրական ճշմարտութիւնը ի հարկէ չէին կարող բոլորովին ուրանաւ մեր յեղ. բուրժուազան կուսակցութիւնների հիմնադիրները, մանաւանդ որ ինտելիգենցիան իրանց կողմը որսալու համար հարկաւոր էր նետել նրա առաջ, այսպէս ասած, իդիօլոգիական մի ճճու։ (Միծագներ)։ Կրկնում եմ իդիօլոգիական մի ճճու, ինչքան էլ այդ խօսքը մի քիչ անդուրեկան լինի, բայց շատ լաւ է արտայայտում իմ միտքը. ահա այդ է պատճառը որ մեր յեղափոխական երկու կուսակցութիւններն էլ առաջարկել եկան սոցիալիստականութեան խորչը բարդաւոր գոյներով ներկուած պլող բամաներով, որոնք հիացման չափ գայթակեցուցիչ թուացին միամիտներին և անդետներին։ Նրանցից առա-

յինը, որի օրդանը գարձաւ «Թմբուկ»ը, իր ծրագը մէջ դնելով երկու նպատակ — մօտաւոր հայկական անկախութիւն և հեռաւոր սոցիալիզմ՝ առաջին անգամ հայերէն լեզով, թէև ընդհանուր, խառն ձևերով և ծանր ու անմշակ ոճով (Ժիծաղներ):

ԲԱԼՈՒՆԻ. (զայրացած) Խնդացէք պարոններ ֆնաս չունի, բայց մի՛ մասնաք որ վերջէն խնդացողը լաւ է խնդում:

ՍՈՄՓՈՒՆ. (զանգակը հնէեցներով) Զիսանդարել:
ԲԱԼՈՒՆԻ. Չերոնք են խանդարողը:

ՔՕՉՈՒԿ. Ծանր ու անմշակ ոճով յայտնեց իր հասկացողութիւնները եւրոպական կեանքի տնտեսական-հասարակական ներկայ մի քանի պայմանների մասին: Միևնոյն տակտիկին հետեւց և երկրորդը իր «Եեփոր» օրդանով, իր ծրագը մէջ նոյնքան հեռաւոր կերպով շօշափելով «աշխատաւոր ընդհանրութեան բարեկեցութեան» հարցը, արտայայտուած շատ անկարեւը և շատ ընդհանուր բառերով, անմարս և հասուկոտոր: Ցոյց տալու համար թէ այդ շատ կարճ, թերուս,

նախնական և այժմ էլ բարձի տակ դրւած ծրագիրները ի՞նչքան հեռու էին գիտութեամբ մնւած լինելոց, ես այստեղ առաջ կը բերեմ միայն մի օրինակ: «Թմբուկ»ի սոցիալիստական մի հրատարակութեան ճակատի վերայ, իբրև գաւանանք, գեղեցկանում էր հէնց իրա թմբուկի խմբագրութեան թխած մի ափօրիլմը, որը Սէն Սիմօն և Գրուրիյէ բուրժուա ուտօպիստների մտքի ցուցումը լինելով, սոսկալի հակասութեան մէջ էր ձգում թմբուկին և տանում նրան դէպի ծիծաղելի ճանապարհներ: Այդտեղ ասած է 1. «Կօլեկտիվիլմ՝ միջոց, իւրաքանչիւրից, արտաբերութեան պահանջի համեմատ, իւրաքանչիւրին իր աշխատութեան համեմատ: 2. «Կօմմունիլմ՝ նպատակ, իւրաքանչիւրին և իւրաքանչիւրից իր կամքով»:

ԹԱԴԻՇՈՅ. (Սուրենը մշտերով բարձրաձայն) Ասուածդդ սիրես, բան մը կը հասկնա՞ս:

(Ժիծաղներ:)

ՍՈՒՐԵՆ. Իւրաքանչիւր կը հոլովէ ինչ կ'ընէ, կեցիր նայինք:

ԱՊԱՐՓԱԾՈՆ. (զանգակը և նշեցներով) Տղ՛րք ախր չի
կարելի էդպէս. Պր. Թատէսա Դուք նոր էք եկել
երեխ չէք իմանում օրէնքը, այժմ՝ հարկաւոր է
միայն լսել և եթէ մի բան ունէք ասելու վեր-
ջացնելուց յետոյ ձայն խնդրել :

ՈՒՍՅԱՌՈՂ ՄՔ. (կամաց մը տեղեն եղերով քայլ
առ քայլ դեպի դուռը կ'երրայ մրմեներով) Իւրաքան-
չիւրը, իւրաքանչիւրից, իւրաքանչիւրով (դրան
քովէն զիխու և ձեռքի շարժումներու եշանացի խօսակ-
ցորեամբ իր ընկերն ալ կը հրապուրի և կամացով մը
դունկ դուրս կ'ելլեն:

Ք02ԱԿ. Նախ, առաջին պարբերութիւնը
«իւրաքանչիւրը իր աշխատութեան համեմատ»
կամ կոլլեկտիվիզմը ոչ թէ միջոց է, այլ նպատակ,
միջոցներն են դասակարգային կորին ու յեղա-
փոխութիւնը: Երկրորդ պարբերութիւնը «իւրա-
քանչիւրին և իւրաքանչիւրից իր կամքով» նպատակ
չէ սոցիալիզմի համար: Գիտական սոցիալիզմը այս-
պիսի պարբերութիւն չունի: Այդ նպատակ է
անարխիստների համար: Անշուշտ նկատում էք
որ «Թմբուկ»ի մէջ երկրորդ անարխիստական

պարբերութիւնը ջնջում է առաջին սոցիալիստա-
կան պարբերութիւնը և տակը մնում է միայն
անարխիստական ուսուպիա: Բայց թէ «Թմբուկ»ը
և թէ «Շեփոր»ը իբրև կողմնակի պարապմունք
սոսպէս մի քանի ընդհանուր կօմպլիմենտներ
անելով հանդերձ սոցիալիզմի հասցէին, իրանց
էստեամբ, իրանց բովանդակութեամբ, իրանց
քարոզով և իրանց գործունէութեամբ միշտ էին
և մնացին միշտ ազգային բուրժուական կուսակ-
ցութիւններ, իրանց վերայ միակ միսիա վերցը-
նելով ազգային յեղափոխութեան և անկախու-
թեան գործը:

(Օրիորդներքն մէկը խեղբուկու աստիճան կը հագայ:)

ԱՊԱՐՓԱԾՈՆ. Պարոնայք խնդրում եմ մի քիչ
քիչ ծխել, կամ աւելի լաւ ամեննեին չծխել,
ախր մոռանում էք որ էստեղ օրիորդներ կան:

(Միուղներքն ունակը իրենց սիզարեսները գետին
նետերով ոտքով կը մարեն, ունակը կը շարունակեն զաղտեի
ծխել, մէկը պատշաճներուն դոց մնացած վեղիերն աւ
կը բանայ:)

Ք02ԱԿ. Տիրող խառնաշփոթ պայմանների

Հնորհիւ նրանք շուտով դրաւեցին մեր հասարակական ասպարէզը և է՛լ այնուհետև համը դարձան ոչ միայն մի ինչ որ լւած բայց չըմբռունուած աօցիալիզմի վերաբերմամբ, այլ նոյն իսկ յեղափոխական ձեերի և էութեան ուսումնասիրութեան և հայ ժողովրդի անտեսական-հասարակական կեանքը շօշափող անվերջ և անթիւ հարցերի վերաբերմամբ։ Մինչեւ այսօր իր տառնեհնդամեալ գոյութեան ընթացքում մեր յեղափոխական մամուլը ո՛չ մի հարց չէ քննել գիտական-հասարակական տեսակէտից, ոչ մի վէճ չէ բացել իր մէջ այդ բեղմնաւոր և լի խնդիրների վերաբերմամբ։ Եւ դրանից է որ բացարձակ խաւարը, անշարժութիւնն ու աղքատութիւնը տիրում են մեր յեղափոխական շարքերի մէջ, որոնք հարուստ են միայն յեղափոխական զգացմունքների անվերջ կը կնութեամբ։
ՈՒՍՅՆՈՂ ՄՐ. Մա Ի՞նչ ա առում։
ԲԱԼՈՒԽԻ. Ասում է և շատ լաւ է ասում։
ՍՈՄՄՈՒՆ. Պարսնայք եթէ այսպէս շարունակէք ես ստիպուած կը լինեմ խանդարողին դուրս անել։

ԱՐԱՐ. Վնաս չունի Պր. Նախագահ, այս տեսակ ընդմիջումներ պարլամենտներու մէջ աւ կը պատահին։

ՔՈՉՈՒԿ. Նրանց բոլոր գատողութիւնները, քննադատութիւնները և ուսումնասիրութիւնները Օրմաննեան Պատրիարքի բոնած գիրքից և կամ Սուլթանի ոճագործ ինստինկտներից այն կողմէ անցնում, այն ինչ առանց էական հասարակական հարցերի ուսումնասիրութեան չկայ մամուլ և կեանք և առանց գիտակից մտաւոր պատրաստականութեան չկայ ժողովրդային յեղափոխական շարժում։ Նոյն խակութիւնը և անհասկացողութիւնը նաև յեղափոխական գործնական տակտիկայի մէջ։ Մեր յեղափոխական զեկավարները չըմբռնելով յեղափոխութեան իմաստը չկարողացան կազմակերպել այն իբրև ժողովրդական ընդհանուր մի գործ, մասսաների մէջ չդարդացրին սեփական ինիցիատիվը, այլ նրանց կերակրեցին այնպիսի իւլուզիաներով որ խեղճերը վերջ և վերջոյ սկսեցին հաւատալ թէ երկնքից հրեշտակների գնդեր վայր պէաք է

իջնեն իրանց փրկելու համար։ Տարէնը միքանի զինւած խմբերի ընդհարումներ, այն էլ միշտ դրսից և իւրաքանչիւր միքանի տարում միցոյց, միշտ անհետեանք, միշտ էլ աղետաբեր—ահա մեր յեղափոխական շէֆերի ամբողջ սորատեղիսն :

ՈՒՍԱՆՈՂ ՄԲ. Դառք էլ արէք էգքան արէք։

ՔՕԶԱԿ. Այս պայմանների մէջ ի հարկէ զարմանալի չէր որ ազգային անկախութեան դործը կատարեալ ֆիառկօ կրեց և այժմ յեղափոխութիւնը իր արմատները թողած՝ արտայայտում է միայն իր ծայրերի շարժումներսվ։

ՈՒՍԱՆՈՂ ՄԲ. Արմատ չէ ունեցել որ թողնի։

ՍԱՄՓՍՈՆ. Խնդրում եմ բացադանշութիւնները մի կողմ թաղէք և յետոյ բացատրեցէք մեզ Զեր էգ շատ հետաքրքիր կարծիքը։

ՔՕԶԱԿ. Մեր յեղափոխական ազգային կուսակցութիւնները կարծում էին թէ իրանք ներկայացուցիչ են ինչպէս ամբողջ ազգի նոյնպէս և նրա մշտական պատմական առաջդիմութեան, առանց գաղափար անդամար անդամար։

Գային շահերի մասին, կարծում էին թէ յեղափոխական շարժումնվ սկսում է և վերջանում հայ հասարակութեան կեանքն ու պատմութիւնը, առանց մատածելու անդամ որ հայ հասարակութիւնը հէնց վազը կարող է երթալ այլ ճանապարհով։ Կարծում էին թէ հայ ազգի անկախութեան անունով ձեռնարկուած ցոյցերից գուրս ո՛չ կեանք կայ, ո՛չ գործ, ո՛չ հարցեր և ո՛չ առաջդիմութիւն, առանց ըմբանելու որ առ հարցերն ու գործերը ոչ թէ միայն կան, այլ նրանք են կազմում միակ տեսլական և բնական հասարակական գործ, նրանք են որ պայմանաւորում են ամէն ինչ, որպէս նաև այդ յեղափոխական շարժումը, որը ինքնըստինքեան, սոսկ իրքի երեւոյթ, առանց հիմնական հասարակական այդ հարցերի հետ կապուած լինելու և առանց գտակարգային գիտակցութեան, երբեք չէ կարող հիմք և գաւանանք գտառնալ հասարակական գործունէութեան համար։ Նրանք իրանց այս ծուռ մոքերի մէջ քաջալերւում էին այն հանգամանգեց որ ըստ երեսոյթին Ամերիկայից մինչ կով-

կաս և կովկասից մինչեւ Հնդկաստան ամրաղջ հայ ժողովուրդը առանց գասակարգային խարութեան կլանւած էր մի սոսկ նպատակով, Տաճկահայստանի անկախութեան գործով: Տաճկահայստանի ներկայ անտեսական ճնշող պայմանները ու հասարակական անապահով գրութիւնը գիտչում են և հայ վաշխառուների, հայ վաճառականների և հայ մանր բարժուանների շահերին:

ՍՈՒՐԵԿՆ. Ի՞նդհակառակը վաշխառուներու հացին խոզ կը քսէ:

ԹԱԴԵԱԾ. Հարկաւ :

ՔՕԶԱԿ. Կեանքի և գոյքի անապահովութիւնը, հաղորդակցութեան միջոցների բացակայութիւնը, անցադրային խստութիւնները, գործարանական արդիւնաբերութեան դէմ կառավարութեան ձգած պատճենները, մի քանի մօնօպօլիներ և պարտասէր գիւղացիների պանդխոռութիւնը արդելք են հանդիսանում հայ վաճառականին և հայ վաշխառուին համար հարստանալու և զարգանալու իրրե կապիտալիստ շահագործակարգ:

ԹԱԴԵԱԾ. Իշով՝ առ պարտական գիւղացիներու պանդխոռութեան չնորհիւ է որ վաշխառուները կը հարստանան անոնց հողերը գրաւելով:

ՍՈՒՐԵԿՆ. Պր. Թագէոս, ախր բան ասուցիք Ձեզ, հայերէն չէք հասկանում:

ԹԱԴԵԱԾ. (Ճպուերով) կը հասկնամ, բայց մարդ չկրնար համբերել:

ՔՕԶԱԿ. (Թագէոսին) Գոյք գեռ նոր էք եկել, լաւ կը լինի որ աւելի շատ լոէք քան խօսէք:

ԲՈԼՈՒԽՆ. Այս աւելի շատ լոէք ու սորվէք:
(Միծագներ)

ՍՈՒՐԵԿՆ. Նու բաւական է. ինդրում եմ շարունակեցէք Պր. Քօչակեան:

ՔՕԶԱԿ. Այս պատճառներով ներկայ պայմանների տակ հայկական յեղափոխութեան մէջ ամենասեծ շահն ու մասը ունենմեր կապիտալիստ գասակարգերը, որոնք և իրանց ճիգերը չեն խնայում յեղափոխական կամ ոյլ միջոցներով աղատուել յիշւած ըէժմիջից: Ահա այդ գասակարգային շահերի պատմական և ժամանակաւոր միութեամբ է որ այսօր հայկական հարցը ներկայանում է

իրմւ «ազգային խնդիր»։ Բայց վազը հէնց որ օրինակ եւրոպական իշխանութեան տակ և կամ անկախ հայաստանի մէջ երկրի վիճակը բարեփոխւի, հաստատի կեանքի և դայքի ազահովութիւն, տնտեսական-գործարանական ազատ ձեռնարկների ասպարեզ բացուի, մեր նոյն կազիսալիստ դասակարգը, որը այսօր ազգային աղասութեան զգացումների քօղով աջակից է յեղափոխութեան, ամենայն դիւրութեամբ և պատրաստականութեամբ պիսի մի կրզմշպրտէ իր ազգային կեղծ դիմակը և պիսի ներկայանայ մեր առաջ իր ամբողջ հարստահարող դասակարգի մերկութեամբ։ Եւ այս անխուսափելի իրականութեան առաջ այլևս ո՛չ մի գրական արժէք և հասարակական պատմական նշանակութիւն չունենայն իդիլիաները, որոնցով սնւած են մեր մէջ։

(Ներս կը մտնեմ երկու ուսանողներ, որոնք դրան բով պատին տակ կը կանգնին։) Նախ՝ միանգամայն չնշում է այն հասկացողութիւնը թէ ամբողջ հայ ազգը, իրեւ միաձոյլ, հօմօգեն մի ամբողջութիւն, «հայ եղբայրների» մի բազմութիւն,

իր համանման շահերով կանգնած է թուրք պետութեան գէմ։ Երկրորդ՝ չնշում է այն կարծիքը թէ այդ հօմօգեն ամբողջութիւն կազմող «հայ ազգը» ուրիշ բանի համար ոսքի չէ ելած, լոյց եթէ իրեւ մի քաղաքակիրթ ցեղ, իրեւ «առաջդիմութեան ծարաւ մի ազգ» ազատելու կոսորածներից և «ոճիրներից», որոնց չնշումով «հայ եղբայրների» մէջ պէսք է թագաւորէ չտեսնուած մի երանութիւն։

ԱՌԻԹԵՆ. (վրաված) Է ալ համը վախցուց։
ՔՅԶԱԿ. Մակայն բարեբախտաբար հասարակական երեսյթներին միայն բեֆլեքսային արձագանդ տւող և հասարակական բոլոր շարժումները մի սիմպլիստ ֆօրմուլայի վերածելով ամէն ինչ «ազգայնութեան» եղիօլօգիայի աւազանի մէջ մէլլուսող այս մեծամասնութեան կողքին սկսէլ էր զարգանալ մի փոքրամասնութիւն, որը նորագոյն գիտութեան խօսքով սնւելով յանկարծ աճեց և սարսափ պատճառեց թուլամիտներին և իրանց սահմանափակ դաւանանքների մէջ քարացածներին։ Դրանք խկական հայ աօցիա-

Հիսոներն էին, որմաց համար սօցիալիզմը օդի մէջ կախած մի գեղեցիկ իդէալ չէր, որի հասցէին նրանք ուղերձներ գրէին, որոնց համար սօցիալիզմը մի «հեռաւոր» նպատակ չէր, ինչ որ ապրիօրի մի ընդունուած հաւանականութիւն, որը նրանք մի անդամ ցոյց տալով իբրև անցաթուղթ, դնէին իրանց գրապանները և ապա իրանց դրյութիւնը, իրանց խօսքն ու իրանց գործը նուիրէին հայկական անկախութիւն ձեռք բերելու։ Այլ նրանք միանդամայն գիտակից իրանց ընդունուած գաղափարին, միանդամայն ըմբռնելով հայկական ներկայ իրականութիւնը ընդհանրապէս և հայ շահագործւած գասակարգի պահանջները մասնաւորապէս, համարձակ բարձրացրին իրանց ձայնը տիրող խառնաշփոթութեան մէջից և վճռեցին իրանց բոլոր ոյժերով հայկական կեանքի մէջ ներկայանալ հայ շահագործւած գասակարգի նախարարութիւներ։ Այսպիսի գասակարգ մեր մէջ ոչ թէ միայն գորյութիւն ունի, այլ և մի ստուար բազմութիւն է կաղմում թէ գիտերի և թէ քաղաքների մէջ, որի աշխատանքի

շահագործութեամբ ապրում են միւս գասակարգերը։

Կովկասը այսօր մի կապիտալիստական երկիր է։ Գիւղական համայնքների քայլայտմը, հողերի կենուրօնացումը, արտեների ոչնչացումը, խոշոր ինտուստրիայի տարածումը, բուրժուագութիւնը անտեսական-հասարակական տիրապետութիւնը փաստեր են, հաստատուած բաղմաթիւ պաշտօնական թւերով։ Մանաւանդ Բագուի նաւթաշընանում՝ իրերի գրութիւնը ոչ մի բանով չէ տարբերում եւրոպական որ և է գործարանական կենուրօնից։ Տնտեսական-հասարակական հողի վերայ կրիւը արդէն վաղուց սկըսած է այնտեղ, վաղուց է որ այնտեղ հայ կապիտալիստ գասակարգը շահագործում է հայ բանուոր գասակարգին և վերջինիս արիւն քրտինքով շաղախւած աշխատանքը հնչուն գրամի վերածած՝ կրկին մզում է կապիտալիստական շըրջանառութեան մէջ, միանդամայն ապահոված իր փարթամ ու զեղիս կեանքը և խաջով ու սրով պահպանելով ուկի հորթի թագաւորութիւնը։

Տաճկաստանի մէջ դեռ տիրապետում են նաշ-
հապետական մանր արգիւնաբերութեան և երկ-
րագործութեան ձեւերը և կայ այնտեղ մի բանա-
կալ ոյժ, որը երկու դասակարգերի հասարա-
կական ֆուքցիաները անշարժութեան է դասա-
պարտում և դրա համար էլ դասակարգային
կուը այնտեղ կատարում է դանդաղ կերպով։
Սակայն այդ դասակարգային կուը պահանական
երողութիւն է։ Նախ ամէն կողմ մասնաւոր սե-
փականութիւն և տնտեսական անհաւասարութիւն
և յետոյ մենք այնտեղ արդէն ունենք դիւզական
պրօլետարիատ, սեփականազուրկ հայ դիւզայի
դասակարգը, մարտաները։

ԹԱԴԵԱԾ. (Առցենը մշտերով) Հոդիդ սիրես առ
էնչ կ'ըսէ։

ՔՕԶԱԿԻ. Մի փաստ որ մինչև վերջերս յայտնի
էր մեզ և որի վերայ առաջին անգամ մատնա-
ցոյց արեց մեր ընկեր Բալունին, «Բանւոր»ում
հրատարակած իր մի ուսումնասիլութեամբ։

ԱՐԱՄ. (Ամզին ծախանարերով) Կեցցէ մեծն
Բալունի։

(Միժադեւելու)

ԱԱՄՓՈՈՒՆ. (գանգակը հեղիներով) Արամ ախը
կասակների ժամանակ չէ։

ԱՐԱՄ. Ինչ կատակ, ես Արծօրէն հիացումն
կը յայտնեմ։

ՔՕԶԱԿԻ. Ահա այդ մարտարների շարքերից
պիտի կազմակերպւի Հայ Աօցիալ-Դեմօկրատ
կուսակցութիւնը Տաճկաստանում։

Ամերիկայի, Եգիպտասի, Բուլգարիայի,
Ռումանիայի Հայ բանւորների թիւը արդէն
տասնեակ հազարների է հասնում, որոց մի մասը
արդէն իսկ կազմակերպւած է և մզում է իր կուիը
թէ տնտեսական և թէ քաղաքական հողի վերայ,
մասնակցելով գործադուլներին և մինչև իսկ
կազմակերպելով գործադուլներ։ (Առէնը դրուած
ըրին վերջին ումզը կը խմէ։)

ԲԱԼՈՒՆԻՆԻ. (Անմիջապէս անշեն և պերով ցի զա-
ւարէ նորէն կը լիցնէ.)

ՔՕԶԱԿԻ. Ահա այսօրինակ պայմանների մէջ
է ո՞ր երկան եկաւ «Բանւոր» Հայ սօցիալիստա-
կան հանդէսը, որի շուրջ հաւաքւելով Հայ սօցի-

ալիստական խմբերն ու գործիչները հիմնեցին Հայ Ա. Գ. Կուսակցութիւնը: Ո՞րն է «Բանուոր»ի անելիք քարոզն ու գործը և ինչ է ։ Ա. Գ. Կուսակցութեան դերը մեր կեանքի մէջ: Ուստիսասիրել մեր անտեսական և հասարակական կեանքն ու երկոյթները ջաճկահայաստանից մինչ կովկաս և Ամերիկա, լուսաբանել այդ կեանքը սօցիալիստական տեսակէտից:

ՍՈՒՐԵՆ. Սօցիալիստական տեսակէտից:

ՔՈՉԱԿ. Գծել սօցիալիստ կաւակցութեան ըրիւ և ամբողջական դաւանանքը, զարդացնել և բեղմանարել մի սօցիալիստ գրականութիւն, որը այսօր անհրաժեշտ հասարակական պահանջ է թէ ժողովրդի և թէ երիտասարդութեան համար: Բանալ մի եռանդուն, մի ընդարձակ պօւեմիկա, որի չորհիւ միայն վերջնականապէս կը պարզւեն հարցերը և հասարակութիւնը կը մտնէ ակտիւ գերի մէջ: Իրի Մարքսիստներ, հիմնուած դիսութեան և երազական կեանքի իրական ընթացքի վերայ, կազմակերպել Հայ բանուոր գասարգը իրի քաղաքական կուի հասարակական

տարր, ընդդէմ ներկայ բուրժուական արդիւնաբերութեան և տիրապետութեան, յեզափոխութեան միջոցով կերպարանափոխել ներկայ մասնաւոր սեփականութեան, արդիւնաբերութեան և բաշխման ձևերը, աշխատաւոր ընդհանրութեան սեփականութիւն դարձնելով արդիւնաբերութեան զօրծիքները և փոխանակութեան միջնորդը և իրազործել հաւասար աշխատամքի և հաւասար վայելման հասարակական սխառեմը: Մեր գրօշակի վերայ գրօշմած անտեսական հաւասարութիւն, մենք պիտի ասպարէղ իջնենք և նրա իրազործմամբ միայն պիտի սպառի մեր ծրագիրն ու դաւանանքը: Մենք պէտք է մտնենք ժողովրդի ծոցը, տանելով մեզ հետ լուծումն այն այրող հարցերի, որոնց մինչև այսօր դեռ ոչ ոք չէ պատասխանել, տանելով մեզ հետ հուժկու բարբառն ու յաղթական խօսքն այն մեծ գաղափարների, որոնք մեր միսիայի ալֆան են և օմեզան: Պիտի ցոյց տանք այսօր հարստահարուած և վազը կազմակերպւած պլուեդարիատ հայ ժողովրդին այն մի և եղական ճանապարհը,

որը միակ ուղին է նրա խական վրկութեան։
ԱԽՍԱՆՈՂ ՄԸ. ՔԷՓ արա Հայ ժողովուրդ։
ՔՕԶԱԿ. (Գրու տարս) Ես վերջացրի։
(Սօցիալիստները՝ Բարունիի առաջնորդութեամբ՝ որու-
ալիքստ կը ծափանարեն, յեզափոխականներեն կը ծա-
փանարե միայն հախազանը, խակ Ասրեն, Թաղեռ և ու-
րիշ մի քանիներ անձիչպես մատ կը բարձրացնեն։)

ՍԱՐՓԱՌՆ. Նախ քան հոեատրներին խօսք
տալը կարծում եմ բոլորդ էլ համաձայն կը լի-
նէք ինձ հետ եթէ չնորհակալութիւն յայտնեմ
Պր. Դասախոսին, որ նեղութիւն է յանձն տռել
ամփոփ կերպով պատկերացնելու մեղ այն մըտ-
քերը, որոնք մի ժամանակից ի վեր պատըռվում
են մի խումբ ուսանողների գլխներում, պատ-
ճառ դառնալով մեր երիտասարդութեան բաժան
բաժան լինելուն։ Այժմ խօսքը Պր. Սուրբնին է։

ՍՈՒՐԵԿ. Նախ ոս կէտին վրայ կ'ուղէի
զրուցել որ ճառախօս ըսածդ ալ քիշ մը խըդ-
մըտանք ունենալու է։ Դպրոցը ընկեր մը ունէի
շարադրութիւն զրած առեն 4-5 բառարան
առջեր կը քաշէր և անանկ բառեր իրարու-

քով կը շարէր որ վարժապետն ալ բան մը
չէր հասկնար։ Այսօրուան ճառն ալ անոր նման
բան մըն էր։ Արգէն երկու աշխարհաբար ունինք
սուսահայերէն և թիւրքահայերէն, ասո հերկը չէ
հիմակ ալ նոր հայերէն մը բուանելու վրայ է
սօսիալիստահայերէն։ (Ծիծաղներ։) Մարդ տասը
լեզու ուսած և ոչ մէկն ալ սորված ըլլալու չէ
մեր սօսիալիստներուն։

ԲՈԼՈՒԻՆԻ. Սօցիալիստ չէ, սօցիալ գեմօկ-
րաս։

ՏՈՒՐԵԿ. Գրածէն ու խօսածէն բան մը
հասկնալու համար։ Բաենք մենք քիչ շատ վար-
ժուած ենք, սակայն (Թաղեռը ցուցելով) ահաւա-
սիկ խեղճ տղայ մը, որ նոր եկած է և գրեթէ
բան մը չկրցաւ հասկնալ։

ՔՕԶԱԿ. Ես աշխատել եմ օտար խօսքերից
խուսափել և ինչքան կարելի է հասկանալի լի-
նել, իսկ եթէ այնուամենայնիւ եղել են չհա-
կացողներ այդ գէպքում մեղաւորը ես չեմ։

ԲՈԼՈՒԻՆԻ. Մեղաւորը մենք չենք, չէք իմա-
նում սովորէք։

ՍՈՒԻՐԵՆ. Շատ աղէկ, աս ինդիրը մէկոէ
ձգենք: Գալով դասախոսութեան նիւթին, առ
քան ժամանակ է չկրցանք հասկցնել աս մեր
սոսիալիստներուն:

ԲՈԼՈՒԽԻ. Մօցիալիստ չէ, ոօցիալ դեմօկ-
րաս :

(Բնշնանուր ծիծաղ:)

ՍՈՒԻՐԵՆ. (Բարունիին դառնարով) Է՛ ճանըմ
հասկցանք, սոսիալ դեմօկրատ թող ըլլայ. (Կը
շարութեակ) չկրցանք հասկցնել մեր սոսիալ դեմօկ-
րատներուն, որ մենք իրենց զաղափարներուն
ամենին հակառակ չենք: Կ'ըսէք կոր որ հա-
րուստէն առնուի աղքատին տրուի, տնտեսական
հաւասարութիւն ըլլայ, չքաւորութիւնը մէջտե-
զէն վերնայ. է՛ առ ո՞վ չուղեր աղբար, մենք
առանկ բան մը ըստծ ունինք: Մենք միայն
կ'ըսէնք կոր որ արտեղը նախ առելի անհրաժեշտ
խնդիր մը կայ, ամբողջ աղջի մը կեանքի և
մահու խնդիրը, եկէք առաջ մէյմը աս կարգադ-
րենք, եռքէն ալ մէկալ բաները կ'ընենք: իսկ
ո՞ւք ականջնիւ բամբակ խօթած՝ ամէն անդամ

Ադամ Եւայէն կըսկսիք և երկար մասալ մը կը
պատմէք թէ ինչպէս առաջին գործիքները մէջ-
տեղ ելած են, ինչպէս մարդիկը դասակարգերու
բաժնուած են, չես՝ դիտեր ինչ եղած են: Ատոնք
սոսիօժիի կը վերաբերին, ուզողը կընայ եր-
թալ համալսարանը լսել և արգէն ամէնքս ալ
քիչ շատ լսած ենք: Եղբա՛յր ինչո՞ւ չէք ուզեր
կոր ասչափ պարզ բան մը համենալ և միշտ ձեր
դասակարգային էշը կը քէք կոր: Ասիկա կ'ը-
սեմ նէ թիւբըսչայ ըլլալուս համար չեմ ըսեր,
իբր մարդ կը խօսիմ կոր. անդին թիւբըը կա-
ցինը քաշեր արմատնիս կը քակէ կոր, իսկ մենք
հսու նստած համամարգկային բարձր գաղափար-
ներու վրայ կը ճառենք կոր: Կ'աղաւենք, կը
պաղատինք ա՛լ հերիք է: Հասկցանք որ բուրժուա-
կայ, հասկցանք որ պրօետարիատ կայ, աղոնք
ամէնքը աղէկ մը հասկցանք ա՛լ չենք մնոնար,
բայց առաջ մէյմը եկէք ձեռք ձեռքի տանք տէ
աս խեղճ աղգը փրկենք: Ակիզըն ի վեր մեր
ըսածն ալ լսելիքն ալ աս է. հիմա դուք ինչ
կ'ըսէք ասոր, աս կէտին պատասխանեցէք:

Ք0ԶԱԿ. Մենք էլ սկզբից ի վեր էն ենք
առում որ մենք սօցիալ գեմօկրատներս հակառակ
չենք Տաճկահայաստանի անկախութեան գործին,
բայց դա մեզ համար դաւանանք չի կազմում:
ՄԵՆՔ ցանկանում ենք որ Տաճկահայաստանում
ինչքան կարելի է շուտ մտցրուեն ազտա կար-
գեր, տնտեսական բարդաւածումն, որպէսզի պրո-
լետարիատ դասակարգի թիւը աճի, բայց թէ
դա կը լինի հայկական անկախութեամբ թէ
օտար գրաւումով դա մեզ համար բոլորովին
միևնոյն է:

ԱՅԼՈՒՆ. Մնանկ է եա, ամբով Հայ ազգը
ստոկելու ալ ըլլայ ձեզի համար բոլորովին
միևնոյն է, միայն թէ ձեր պրօլետարիատը շատ-
նայ. պարզապէս աս ըսել կուղէք. բայց ի բաց
ըսէք մէջէն ելէք, ալ ինչ կը ծամծմէք:

ԲԱԼՈՒՆ. Մենք չենք ծամծմում դուք կը
ծամծմէք, այս մեզի համար բոլորովին միև-
նոյն է:

ԱՅԼՈՒՆ. Պր. Բալունի, ախր հասկանում
էք թէ ինչ էք առում, մանաւանդ դուք իբրև

Տաճկահայ ինչպէս կարող էք այդ սոսկալի խօսքը
ասել, չէ՞ որ Դուք հայրենիքում մայր ունէք,
քոյր ունէք, եղբայրներ ունէք. դիցուք թէ էգուց
մի նամակ ստացաք որ Քրիստու կամենում են
առևանդել Ձեր բրոջը, ախր Դուք ի՞նչ կը պա-
տասխանէիք նրանց:

ԲԱԼՈՒՆԻ. Ես նրանց կը պատասխանէի
Դուք ձեր գլխի ճարը նայեցէք, ես իմ գործը
ունեմ էստեղ:

(Զգուաճք, բացագանցուրիւններ «ֆուզ» և ծիծաղներ):
ԱՐԱՄ. Բրավօ, կեցցէ գործը:

ԱՅԼՈՒՆ. Ես, ես հաւատացած եմ որ
Դուք առանց մտածելու էք խօսում:

ԹԱՂԻԱՍ. (մատր բարձրացուցած) Պր. Նախա-
դահ, ես շատոնց է ձայն կը խնդրեմ:

ԱՅԼՈՒՆ. Պր. Թաղէսս խօսեցէք:

ԹԱՂԻԱՍ. Պր. Քօչակեանը ըսաւ որ Տաճ-
կահայաստանի մէջ մարաբաները հող չունին,
աղոր համար ոսիալիստ պիտի ըլլան: Առ շատ
պիսալ է: Մենք էրզբումի քով կան դիւզը եր-
կու արտ ունինք, որովհետեւ հայրս չի կընար

Եանութը ձգել երթաւ տրտ վարել, ադոր համար մեր արտերը տուած ենք գիւղացիի մը, Սարգիս իմի կ'ըսեն, որ իր ահճնականին չորտ արտ ունի, բայց մեր մարտաբան է : Կ'աղաշեմ ըսեք հիմա առ մարդը պրօլետարիատ է : (Ծիծաղեր:) Յետոյ օրինակ մը պիտի բերեմ ցուցընելու համար թէ առ սոսիալիստները ինչ խայտառակութիւններու պատճառ կ'ըլլահ: Դպրոցը Գրոյն մը անցաւ ձեռքերնիս Ծուրանարու իրաւոցքը, ծոյլ տղաքը որ բան չէին կարդար առ դիրքը ձեռքէ ձեռք իւլեցին և անկէ ետքը սկսան բնաւ չաշխատիլ մենք սոսիալիստ ենք ըսելով: Առաջնորդն քիչ մը կ'ամշնային, իսկ անկէ վերջ ա՛ւ մէկէ մը չէին քաշուեր, մինչև որ Հոգաբարձութեան ճարը հասնելով ամէնքը մէկէն վանտեց դպրոցէն: Հիմա ամբողջ օրը գերեզմաննոցը նըստած գերեզմանաքարերուն վրայ դամա կը խաղան և եթէ հարցնող ըլլայ թէ ինչո՞ւ չեն աշխատիր, մենք սոսիալիստ ենք կ'ըսեն:

(Բնդիմենոր ծիծաղ և ծափանարուրիւններ:)

ԲԱԼՈՒՆԻ. Լոեցիք պարսններ, վկան ձեզմէ

է, սօցիալիստական դաղափարը մինչև էրդրում է հասել:

(Քրքիչներ:)

ԱՐԱՄ. Այս Բալունիս բերանդ պագնեմ:

ՔՈՉԱԿ. Ի՞նչ էք ծիծաղում, շատ լաւ ասեց. Ըոլոր մեծ դաղափարներն էլ սկզբում էդ ձեռի են տարսծւում, օրինակ՝ վերցնենք հենց ձեր աղգային անկախութեան դաղափարը, որը մինչև այսօր էլ շատ տեղ արտայայտւում է Հայոց թագաւորի թագի և դահի ծիծաղելի իւլլուզիաներով:

ՍՈՒՐԵԿ. Ատիկա բոլորովին տարբեր բան է: ԲԱԼՈՒՆԻ. Տարբեր չէ, միենոյն բանն է, ծիծաղելի իւլլուզիա է:

ՍՈՒՐՓՍՈՒՆԻ. (դանգակը Անշեցներով) Խնդրում եմ նախ քան խօսելը խօսք վերցնել. այժմ ես ինքս եմ կամենում մի քանի խօսք ասել: Ինձ վերին աստիճանի ապշեցրեց Պր. Դասախօսի այն կարծիքը թէ հայ յեղափոխականները չեն հասկացել սօցիալիզմը: Պր. Քօշակեան, ախը Դուք ինչպէս կարող էք մի այդպիսի, չասենք այլանդակ բա՛ց

անհեթեթ, կարծիք յայտնել, երբ ինքներդ շատ
լու խմանում էք որ մենք ձեղանից դեռ շատ ա-
ռաջ տուել ենք հայ հասարակութեան այնպիսի
լուրջ սոցիալիստական հրատարակութիւններ,
ինչպիսին են օրինակ Էնգելսի Գիտական սոցիա-
լիզմը, Զօմբարտի Սոցիոլիզմը և սոցիալական
շարժումը 19-րդ դարում, են, են: Բայց ախր
մեր կողմից սճրագործութիւն կը լինէր ակա-
դեմական հարցերով զբաղւել, երբ մեր աչքերի
առաջ ոչխարի նման մորթոսում են մի ամբողջ
ժողովուրդ: Դրանով մենք չենք հակասում ամե-
նին մեր սոցիալիստական սկզբունքներին և դրա
ամենափայլուն ապացոյցը այն է որ բոլոր երո-
պական երկիրների յայտնի սոցիալիստները ջեր-
մապէս համակրում են և աջակցում մեր դործին:
Եւ ես ամենին կասկած շանեմ որ մեր նորա-
բողբոջ սոցիալիստների բռնած դիրքը գէպի մեր
ազգային նուիրագործւած դատը, ուրիշ բանի
արդինք չէ, բայց եթէ մի նոր բան ասելու, մի
նոր դործ սկսէլու ջահէլութեան: Ես հաւատա-
ցած եմ որ նրանք մի օր, և այդ ցանկալի օրը

երանի՛ թէ շատ ուշ չլինէր, մեզ հետ միհնոյն
շարքերում կանգնած, իրենք էլ պիտի ծիծաղեն
իրանց այսօրուայ ընթացքի վերայ: Ես յիշում
եմ սրանից քանի տարի առաջ Թիֆլիսում ստաց-
ւեց մի թերթ, Խելատինով տպած, որի մէջ ու-
սանող խմբագիրները, մի շաբք խորհրդածու-
թիւններից յետոյ թէ մեր կեանքում հող կայ
սոցիալիզմի համար, ամենայն լընթեամը մատ-
նանիշ էին անում Թիֆլիսի բուրյացների վե-
րայ, իրմւ հայ պրօլետարիատ դասակարգի վե-
րայ: Այդ գիւտը և հարկ է ամէն տեղ բաւական
մեծ զուարձութիւն պատճառեց, ինձ էլ մի լաւ
ֆելիետոնի նիւթ առեց և այժմ այդ պարոնները
հրաժարում են այդ մեծ գիւտի հեղինակը լի-
նելու պատւից:

(Ցիծաղներ մասնաւրապէս օրիորդներու կողմէ:)

Ք0ԶԱԿ. Շատ պարզ է թէ ինչու երոպացի
յայտնի սոցիալիստները համակրում են ազգային
հարցին, որովհետեւ նրանք ծանօթ չեն մեր պայ-
մանների հետ: Մեր յեզ, կուսակցութիւնները
ամէն անդամ երբ նրանց դիմում են, այսպէս

ասած, սօցիալիստական կոկետութիւններ են աշնում: Պէտք է ասել որ Գուգ այդ փաստը շատ էք շահագործում, բայց այդ նեցուկն էլ շուտով կը խլուի ձեզանից, մենք շուտով մի կոչ ենք ցըռելու բոլոր սօցիալիստական մարմիններին Հ. Ս. Դաշնակցութեան կողմից:

ՍՈՒՐԵԿՆ. ԲՐԱՋՈ՛:

Ք02Ա: Իսկ ինչ վերաբերում է թուլուխ-շիների պատմութեան, դա մինն է այն յիմար անեկդոտներից, որը խկոյն լսում ես, հենց որ մէկի հետ վիճաբանութիւն ես սկսում: Էլ բաւական է, ախր ամօթ է այդպիսի զէնքերով կոռել, մենք կարծում ենք թէ դործ ունենք կրթուած մարդկանց հետ, որոնց վայել է գետական փաստերով հակածառել:

ԱԼԵՏԻՔ. Գիտական փաստեր, շարունակ գիտութեան անունից էք խօսում, բայց ձեր ոչ զրածներում և ոչ էլ խօսածներում՝ գիտութեան հոտը չկայ: Հասարակ բաներ էք ասում և կարծում էք թէ չլսուած նորութիւններ էք յայտնում: Էդ Մջանը մենք վաղուց ենք անց կացրել,

երբ Մասկվայում ուսանող էի, ես ինքս էլ նոյն մտքերին էի ծառայում և նոյն տեսակի շարադրութիւններ թիսում, իսկ այժմ երբ յիշում եմ, ուղղակի կարմրում եմ: Գուք ձեզ Մարքսիստներ էք անուանում, իսկ ձեզանից ո՞վ կարող է իբրև պատուաւոր մարդ ձեռքը խզճի վրայ դրած ասել որ ինքը կարդացել է Մարքսի կապիտալը:

ԲՈԼՈՒԽՆ. ԱՅ միենոյնը կը լինէր հարցնել արեին նայել էք. մարդ անծանօթ բաներ կը կարդայ ծանօթանալու համար, բայց Մարքսի նման աշխարհահոչակ մի մարդու գրուածքները ոչ երեք: Մի մարդ որ արեի պէս իր ճաճանչները սփսում է ամէն տեղ:

(Քննանուր ծիծաղ, ծափանարուրիւններ:)

Ք02ԱԿ. (Բարսեմիկն) Տօ՛ դու գժուել ես, ի՞նչ է:

ԱՐԱՄ. Ի՞նչ գժուել, հոգին սուրբ է իջեր վրան, բերան չէ աւետարան է: (Եւ անմիջապէս դաշտ մի ջար լցնելով կը տանի Բարսեմիկն առջեր կը դնէ:)

ՍՊՄՓՍՈՒ. (Պանզակը հեծեցներով) Նո՛ւ բաւական է պարսններ:

ՔօԶԱԿ. Ես չեմ ուզում պատասխանել Պր. Աւետիքին, որովհետև վիճաբանութեան այն տօնը, որը և նա ընտրել է, ուրիշ արդիւնքի չի կարող տանել մեզ բայց եթէ կռւի:

ՕՐԻՈՐԴ ՄԸ. Պր. Նախագահ, Խնդրում ենք ժողովը փակէք, կռւ ա գուրս դաշտ :

ՍՈՒՄՓՅՈՒՆ. Պր. Գուլումեանը կամենում է խօսել:

ԳՈՒԼՈՒՄԵԱՆ. Ինձ վերին աստիճանի վըրդովեցում է այն տիսուր փաստը, որ մեր երիտասարդութիւնը, այն էլ ուստանող երիտասարդութիւնը, ազգի ծաղիկը և ապագայ յոյսը, գեռ ընդունակ է նստած՝ սաւնասրտութեամբ և մինչև խակ հանաքներով վիճել մի հարցի մասին, որ վեր է ամէն վէճից, որ բարձր է ամէն կռւակցութիւնից, որ նուիրագործւած է հարիւր հաղարաւոր նահատակների արիւնով : Մի կռւլտուրական հին աղդ բարբարոսների ձեռքով խողիսողում է իր սեփական հայրենիքում, մի գրախտային երկիր, որտեղից քամին շարունակ մեռնողների յետին հառաջանքին ու օդնութեան

աղերսն է բերում մեզ: Մի ըուսն քաջեր ամէն օր իրանց մատաղ կեանքը զոհում եմ նուիրական կռւի գաշտում և յաճախ փամիկուշտներից զուրկ իրանց հրացանները ժայռերի վերայ փշերով մեռնում են անիծելով իրանց անտարբեր եղբայրներին: Ահա այս է ամբողջ հարցը, արիւնիցոլքերով և հրդեհի բացերով լուսաւոր, պայծառ ու ահաւոր: իսկ մենք հեռուից վատութեամբ շուռ ենք տալիս մեր երեսը և զանազան բարձր գաղափարների քօղով ծածկում մեր զզաւելի անտարբերութիւնը: Էլ բաւական է պարոններ, եթէ չունենք քաջութիւն, եթէ չունենք անձնութութիւն, գէթ խիզճ ու անկեզծութիւն ունենանք խոստովանենք մեր վատութիւնը և լոենք :

(Արտաշեպոս և երկարատե ծափածարուրին, մահաւանդ օրիորդներուն կողմէ:)

ԲԱԼՈՒՆԻ. Մարդիկ, որոնք պալիատիվ միջոցների են դիմում և բանաստեղծութիւն անում, որովհետև էներգիա չունեն վիճել մեզ հետ:

(Միծաղներ:)

ԲԱԼՈՒՆԻ. (Խանզիած կը մնայ բարկացայտ աշ-

բերք ժողովակամմերում վրայ պարտցնելով;)

ԳԱԼԻԱԽԵՍԵՆ. (Բարունիին) Նստիլ նստիլ,
խեղճ մարդ, չես իմանում ինչ ես անում;

ԲԱԼՈՒՆԻ. Ես շատ լաւ իմանում եմ, դուն
չես իմանում թուլամիտ մարդ:

ԱԱՄՓՍԻՆ. Պր. Բալունի, ալսր էդպէս չի
կարելի, ժողովը կուի կերպարանք է ընդունում,
խնդրում եմ ավ կամենումէ խօսել խօսք վերցնի:

ՈՒՍՈՆՈՂ. ՄԸ. Պր. Գուլումեանը ասեց կուլ-
տուրական մի հին ժողովուրդ, իսկ չբացարեց
թէ ինչումն է կայանում եգ կուլտուրան:

ԳԱԼԻԱԽԵՍԵՆ. Դուք ինձ այդ հարցը չէիք
ուղղի եթէ հայոց պատմութիւն կարդացած լի-
նէիք և եթէ հայոց պատմութիւն ուսումնասիրած
լինէիք մենք ստիպւած չինք լինի լոել անվերջ
անմտութիւններ:

ՈՒՍՈՆՈՂ. ՄԸ. Ինուելիդենս մարդը չի կա-
րող կարդալ այն հեքեաթային պատմութիւնը,
որը գրել են խորենացիներ կամ Բալասանեան-
ներ, տուէք մեղ կարդին պատմութիւն կար-
դանք:

ՍՈՒՐԵՆ. Օ՞՛ դուք առ ինչ տեսակ մարդիկ
էք, ինչ իրաւունք ունիք չդիտցած բաներնուող
վրայ առանկ արհամարտնքով խօսելու, խորե-
նացին երեսը տեսե՞ր ես, Բալասանեան ձեռքից
առե՞ր ես: Մէջ մը եզածը կարդացէք աէ, չէք
հաւնիք նէ աւելի աղէկը դրեցէք. սիանս սօսիալ
կը սորվիք, փիլխառվայութիւն կը սորվիք, չեմ
գիտեր ինչ կը սորվիք, յետոյ ալ կը պահանջէք
որ ուրիշներ ձեզի համար չոյսց պատմութիւն
դրեն:

ՕՐԻՈՐԴ ՄԸ. Պր. Նախադահ, խնդրում ենք
ժողովը փակեք արդէն ուշ է:

ՔՕՉԱԿԻ. Ես էլ եմ կարծում որ լաւ կը լինի
փակել, ինչպէս տեսնում էք լուրջ պուեմիկա չի
բացում, մէկը անեկդօսներ է պատմում իրզուու-
մից, միւսը սենտիմենտալ ձառեր է ասում:

ԱՐԱՄ. (մաս բարձրացնելով) Փակելէ առաջ
բան մըն ալ ես ըսեմ:

ԱԱՄՓՍՈՆ. Պր. Արամ, լոյց խնդրում եմ
հանագներ չանէք:

ԱՐԱՄ. Մի վախնար, ես միայն կ'ուզէի

հասկնալ թէ ի՞նչ է այս վիճաբանական ժողով-ներուն նպատակը: Ես առաջին անգամ մէկ տարի առաջ ներկայ եղած եմ այս առաջակ ժողովի մը, մէկ ալ այսօր եկայ և կը զարմանամ տեսնելով որ միևնույն խօսքերը միևնույն ձևով կը կրկնուին, կարծես թէ ամեննեին խօսուած չըլլար:

Ակեցիր. Արամը լաւ է առամ, իմ կարծիքով աւելորդ ժամավաճառութիւն է այս առաջակ ժողովներ սարգել, երբ մարդիկ չեն ուզում ամենահասարակ բաներ հասկանալ և աւելի փառատիկոս են դառնում:

ՍՈՒՐԷՆ. Մակայն սիրելիս ամենէն եռահոգուն յաճախողը և վիճողը գուն ես, այսօր կ'երենայ արամադրութիւնդ լաւ չէ:

(Միջաղներ:)

Ակեցիր. Ես ինչ արած, ցաւ ա դառել, զդում ես որ ահօղուտ է, բայց և այնպէս չես կարողանում լուել:

ԱՅՐԱՄ. Ես ամեննեին համաձայն չեմ այդ մտքի հետ. երբ ինտելիգենտ մարդիկ խօսում վիճում են մի հարցի մասին, դա ես կարծում

եմ, անկարելի է որ իր օգուտները չունենայ, թէկուզ անհկատելի: Հէնց այս երեկոյ շատ մութ հարցեր բաւականին պարզաբանեցին մեզ համար, (ծիծաղներ) հարկաւոր է շարունակել և աւելի յաճախ սարգել այսպիսի ժողովներ: Իսկայժմ ժողովը փակում եմ, որովհետև արդէն ուշ է, շատերը արգէն յոդնած են, իսկ ես ինքո էլ եղուց առաւօտեան ճանապարփելու եմ Պարիզ. համաձայն էք:

ԶՈՅՆԵՐ. Այո՛, այս:

ԱՅՐԱՄՓՍՈՆ. Ուրեմն ժողովը փակւած է:

(Ժարդիականները խումբով դուրս կ'եղեն սրանեն, յեղափոխականները աջակողմեան, իսկ սօցիալիստները անձայն բայց տաք խօսակցութեամբ ձախակողմեան դռնեն: Ամենեն վերը կը մնան Արամ, Առաքե և Թաղես:)

Ե. ՏԵՍԱՐԱԿՈՒՆ

ԱՐԱՄ. Հա՛ ինչպէս աղա Թաղո՛ս ականջիղ ժանդը բացուեցա՞ւ:

ԹԱԴԻՈՍ. Զգէ Աստուածդ սիրես, առ ի՞նչ
խայտառակութիւն է, մենք երկիրը ի՞նչ մեծ
կարծիք ունեինք ուսանողներուն վրայ. ափսոս,
ափսոս, երանի թէ չգայի չտեսնէի:

ՍՈՒՐԵՆ. Թմբուկին ձայնը հեռուէն անոյշ
կուդայ:

ԱՐԱՐ. Շատ կանուխ սկսար, Թաղոս տղար,
կեցիր նայինք:

(Խօսակցելով աչեն դուրս կ'ողեն:)

ՎԱՐԱԳՈՅՐ

ԵՐԲՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Սիսակի սենեակը: Ուսանողական փոքրիկ, հասարակ
սենեակ մը, աղքատիկ կահաւորուած: Նտեկ պատիմ մէջ-
տեղը պատուհան մը սպլիտակ վարագոյրներով: Դուզը աչ-
կողմը մէջտեղը: Նտեկ ծախ ամկիւնը բազմոց մը, աչ
ամկիւնը փայտէ մահճակալ մը: Առջես աչ ամկիւնը լու-
ացրի սեղան մը: Սենեակիմ մէջտեղը կլոր սեղան մը,
որու վրայ քամի մը զրքեր և թանաքաման մը:

Ա. ՏԵՍԱՐԱԿԱՆ

ՍԻՍԱԿ. (Ցիուր ոչ մտազրադ կը պարտի սենեա-
կին մէջ ևրբ դուռը կը զարեռէ) Ենթէ.

ԱԼԵՏԻՔ. (Եւրս կը մտեն) Հը բարի երեկոյ,
մեր տղայ, ի՞նչ է պատահել քեզ հետ:

ՍԻՍԱԿ. Ոչինչ, նոր բան չէ պատահեր. նստէ
նայինք:

ԱԼԵՏԻՔ. (բազմոցին վրայ հատերալ) Որ նոր բան

չէ պատահել, հապա էդ ի՞նչ նամակ է որ ուղարկել ես:

ՍիՍԱԿ. Չբացի՞ր կարդացիր :

ԱԻԵՑԻՔ. Կարդացի ինչպէս չէ և եկայ որ ականջներիցդ բռնեմ և քեզ էլի խմբադրատուն տանեմ:

ՍիՍԱԿ. Առ մէկը ա՛լ անցած ըլլայ :

ԱԻԵՑԻՔ. Ինչպէս թէ անցած ըլլայ, եղբայր ախր էդպէս դարտակ բաների համար չարժէ խնդիրներ հանել:

ՍիՍԱԿ. Դարտակ բաների համար . ուրեմն դարտակ կը գտնես ինչ որ երէկ ականջներովդ լսեցիր, ինչ որ տարիներէ ի վեր ամէն օր կը լսես ու կը տեսնես :

ԱԻԵՑԻՔ. Դարտակ է հապա ի՞նչ. թիւրիմացութիւններ ամէն տեղ էլ պատահում են, բայց ախր դրա համար հրաժարական չեն դրում: Ես երէկ Սամփառնի իրա երեսին էլ ասացի որ անտակտ վարուեց քեզ հետ, բայց մի՞թէ արժի այդքան կարևորութիւն տալ դրան, երբ մանաւանդ դու էլ նրա հետ շատ քնքոյչ չես վարւում:

ՍիՍԱԿ. Հոս վարւողութեան խնդիր չկայ քարեկամ, ես իմ արժանապատութիւնս վիրաւուած զգալուս համար չէ որ հրաժարականու տուի, այլ միմիայն գործի սիրոյն համար: Աչքերուս առջև գործը կըսպաննուի, իսկ ես ա՛լ չեմ ազեր, ա՛լ չեմ կրնար մեղսակից ըլլալ:

ԱԻԵՑԻՔ. Է, էլի՞ սկսեցիր կրքով խօսել. ախր ո՞նց թէ գործը սպանւում է. Վահրամի խնդիրն ես ասում, նո՞ւ մի բան է պատահել է ի՞նչ անենք, այժմ դրա համար ուզում ես ամբողջ գործը քանդել:

ՍիՍԱԿ. Գործը արդէն կը քանդուի կ'ըսեմ, կը լսե՞ս Սւետիք, իմ հեռանալովս չէ որ կը քանդուի:

ԱԻԵՑԻՔ. Ի հարկէ քո հեռանալով կը քանդուի. դարտակ մարտակ պատճառներով է որ դու կը հեռանայ, էդուց ես կը հեռանամ, միւս օր էլ միւսը կը հեռանայ, գործը կը մնայ անսէր :

ՍիՍԱԿ. Զէ մի վախնար, այդ օրին չենք հանիր. ես վճռած եմ հեռանալ, վաղը դուն ալ կը հեռանաս, բայց գործը ահաէր չի մնար, Սամ-

փասնի պէս մարդիկ միշտ կը մնան գործին գլուխը, ասոնք գործէ քաշուելու չափ անձնուիրութիւն չունին:

Ակեցիթ. Է՛, ի՞նչ ես շարունակ Սամփասնի մասին խօսում. մենք հայերս էղպէս ենք, միմիանց չենք կարտղանում տանել, դրա համար էլ գործ առաջ չի դնում: Ես ընդունում եմ որ Սամփասնը ունի իրա պակասութիւնները, մի քիչ փառասէր է, մի քիչ ինքնահաւան է, ի՞նչ անենք, ամէն մարդ էլ պակասութիւն ունի:

ՍիՍթի. Այո՛ ամէն մարդ ալ պակասութիւն ունի, բայց անտանելի է այն մարդը, որու մէկ պակասութիւնը շատ աւելի ծանր կը կուէ քան իր բոլոր առաւելութիւնները: Սամփասնը մի քիչ փառասէր է, մի քիչ ինքնահաւան է կ'ըսես ու կ'անցնիս. հաշտարարի լեզով մի՛ խօսիր, կ'ընդունի՞ս որ այդ մարդուն աջքին բան մը չերենար, երբ խնդիրը իր անձնական փառքին վրայ է:

Ակեցիթ. Ե՞ւ ընդունում եմ, ես նրան խօնոր չպէտք է ճանաչեմ, քան տարուց աւել է ճա-

նաչում եմ: Է՞նքան տասցի, խօսացի, զոռացի որ էդ մարդը անյալմար է, չպէտք է ընտրել, բայց և այնպէս ընտրեցին, ի՞նչ արած, այժմ հարկաւոր է համբերել, մի կերպ եօլա գնալ, մինչև նոր ընդհանուր ժողովը:

ՍիՍթի. Կը յուսա՞ս որ յառաջիկայ ընդհանուր ժողովին չպիտի վերընտրուի:

Ակեցիթ. Ի՞նչպէս թէ կը յուսամ, վստահ եմ, հակառակ դէպէռում ես ինքս կը հրաժարւեմ և ձեռք կը քաշեմ գործից:

ՍիՍթի. Այդպէս ալ պիտի ըլլոյ, այդ մարդը զիտէ իր գերքը պահպանել, որովհետի ուրիշ մտահոգութիւն չունի:

Ակեցիթ. Շատ էլ զիտենայ, բայց ախր սա վաճառականական կամ կառավարական հիմնարկութիւն չէ, յեղափոխական կաղմակերպութիւն է. իսկ այդպիտի կազմակերպութեան մէջ գործ չեն կարող ունենալ այնպիսի մարդիկ, որոնքյեղափոխական չեն: Նրա կազմակերպութեան մէջ մտնելը մի պատահմունք էր ուրիշ ոչինչ: Մարդը ախր յեղափոխական չէ, որովհետի յեղափոխական

չէ ծնւել, մինչև արտասահման դաւը նոյն իսկ հայոյում էր յեղափոխութեան, եկաւ արտասահման իրքի թէ բժշկուելու, մէկ էլ աեսանիք սկսեցին յօդուածները լոյս աեսնել «Շեփոր»ում։ մենք կամկառում ազգակի ապշեցիք, էսոնք աղերանց հորցը թէ ախր սա ի՞նչ հանելուկ է, պատասխանեցին թէ գործին մօտիկուց ծանօթանալով համոզւել է և իրանք էլ օդուածմ են դրչից։ Բայց մոռացել էին որ սա տեմպերամենտի հարց է, չի կարելի մէկին զօրով յեղափոխական չինել։

ՍԻՍԱԿ. Լաւ որ դուն կ'ըսես, ուրեմն մարդը հակառակ իր ձահօթ անցեալին, հակառակ իր խառնուածքին այսօր վառաւորապէս բաղմած է խմբադրասան մէջ և կամաց կամաց գիկասաօրի հովեր կ'առնէ։ Գալով յեղափոխական ծնած չըլշալուն, մարդը ադոր ալ ճարը դաւեր է։ աեսնելով որ չի կընար ի՞նք գործին վրայ ձեռւիլ, հիմա սկսեր է գործը իր վրայ ձեռել։ Ի՞նչ է պատճառը որ այդքան ետեւէն ինկած է ողբօպադանդի գործին, շատ պարզ է, ի՞նք երկիր երթալու անըն-

դունակ, դործը հոս կ'ուղէ վոխադրել, որպէսզի կարենայ մեծ գեր խաղալ։

ԱԽԵՑԻՔ. Ես համոզուած եմ որ դրանք բուլորը կը շտկաւեն, հարկաւոր է միայն չյուսահասուել և գործից ձեռք չքաշել։ Պէտք չէ այնքան էլ մեծ նշանակութիւն տալ Սամփասներին, գրանավ մենք ինքներս մեծացրած կը լինենք նրանց։

ՍԻՍԱԿ. Ուետիք չեմ զիսեր ի՞նչպէս խօսիմ որ հասկնաս զիս։ Ես ամենեին կարեորութիւն չէի տար այդ մարդուն, եթէ անոր ներկայութիւնը կազմակերպութեան մէջ, ինչպէս Դուն կը կարծես, լոկ գիպուածի մը արդինքը ըլլար։ Բայց մտածէ անդամ մը, այդ տեսակ մարդ մը չէր կրնար դիպուածով առաջնակարդ գիրքը մը գրաւել յեզ. կազմակերպութեան մը մէջ, եթէ այդ կազմակերպութիւնը ինկած չըլլար։ Սամփասնը իբր Սամփասն չէ որ կը յուսահասեցնէ զիս, այլ իբր մէկ ախտանշանը այն հիւանդութեան, ուրկէ վարակուած է մեր կազմակերպութէւը։

ԱԽԵՑԻՔ. (սարի և ուրով) Նորից սկսեցիր երեւակայական հիւանդութիւնների մասին խօսել, եղբայր ախը չի կարելի էղքան էլ բծախնդիր լինել, սա իւլեղալ գործ է, էս օրմի և իշ վաստ, էղուց մի քիչ աւելի լաւ մի կերպ առաջ կը դնայ:

ՍԻՍՈՒԿ. (զրդառուած) Մի կերպ առաջ կը դնայ: Թո՛ղ երթայ և ով որ գոհ է այդ ընթացքէն թո՛ղ միասին երթայ, բարի ճանապարհ. լսկ ես ա՛լ չեմ կրնար, չեմ կրնար. (կոկորդը ցուցերով) մինչև հոս հասաւ: Այսանդ ամբողջ Արևմտեան կեդրոնը տափակ արարածի մը ճղճիմ փառասիրութեան յանձնուած, ոչինչ. հոն թիֆլիսի մէջ անոնը կայ ինք չկայ Արևելեան կեդրոն մը, որուն ամբողջ դործերը դպրոցէ նոր ելած լակոտի մը ձեռքը, վաստ չւնի: Դրամները ուրկէ կ'առնուեն ուր կը տրուին հարցնող վնասող չկայ, բաւական է որ անդամ մը թերթին մէջ հրատարակուի, առլակեդրոնացումէ, նորէն վեաս չունի: Ուրչափ զէնք ներս դրկուած է, դուրսը ուրչափ կայ, թիֆլիսէն կարս, կարսէն իկուր վազեցի,

Հաշիւ մը պատրաստէլ ուղեցի անկարելի եղաւ, ի՞նչ վսաս ունի: Այսհմանազլուխներուն վրայ գործը ձգուած խակ երկտասարդներու, որոնց միակ մտահոգութիւնն է քիչ մը դրամ հաւաքուելուն պէս խումբ մը ճամբայ հանել, որ անխոսափելի կերպով կ'երթայ սահմանէն քանի մը ժամ անդին կը ջարդուի, բայց ի՞նչ հոգ, բաւական է որ նոր թռուցիկներու, նոր պարձենկոսութեան նիւթ հայթայթուի և խեղճ ժողովուրդէն նոր պահանջներ ընելու պատրուակ: Ո՛չ կարգ, ո՛չ կանոն, ո՛չ որոշ ծրագիր և այս բոլորը վաստ չունի, բաւական է որ գործը մի կերպ առաջ կը դնայ:

ԱԽԵՑԻՔ. Նու մարդ չկայ ի՞նչ անենք, ես էլ ընդունում եմ որ մարդ չունինք, մենք խօչենք կարող երկիրքից մարդիկ իջնել, ի՞նչ որ կայ նա է:

ՍԻՍՈՒԿ. Եթէ մարդ չունինք դադրեցնենք գործը, զօրով յեղափոխութիւն չըլլար: Տեղը եկած առեն քառասուն կտոր կ'ըլլանք ապացուցանելու համար որ յեղափոխութիւնը բոհազբո-

սիկ չեր, ուրիշ առեն ալ անով կ'արդարանանք
թէ մարդ չունինք. աս երկուքը ի՞նչպէս կը հաշ-
տեցնես իրարու հետ:

Այեցիք. Երգայր հանդարտ խօսիր, ի՞նչ ես
տաքանում. Էն ձեռվ ինչ ձեռվ որ գու ևս հաս-
կանում յեղափոխութիւնը, դա մի ցնորք է, որ
նստես առաջուց մաթեմատիկական ճշութեամբ
ամէն ինչ հաշուես ախր մարդ գլուխը կը կորցնի
և որ և է բան անելու անընդունակ կը դառնայ:
Ես յեղափոխութիւնը մի՛ տեսակեմ հասկանում,
զինւած թէ անդէն, պատրաստ թէ անսպատրաստ
ամբողջ ժողովուրդը փայտ, քար, երկալի կտոր
չէնց ինչ ձեռքը անցաւ կը վերցնի և մի մարդի
նման դուրս կը գայ թշնամու դէմ, հաստատ
վճռած կամ մեռնել կամ ազատել:

Սիթթու. Ես առաջինը կ'ըլլայի քեզի ձայ-
նակցող, եթէ սակայն ամբողջ ժողովուրդը քեզի
պէս մատածէր և մեկ մարդու պէս ոտքի ելլէր:
Բայց մեր ժողովուրդը գեռ չէ հասած այդ բա-
րոյական բարձրութեան, ասդին ոռոմը կը նետ-
ոի, անդէն ամեն կը կանչեն Սուլթանի կենաց:

Այեցիք. Նու այդ դէպքում միումէ միայն
ասել. այն յեղափոխութիւնը, որը մեր ժողո-
վուրդը կտրող էր անել առ է. էլ ուր ես յե-
ղափոխականներին մեղադրում:

Սիթթու. Իսկ այս յեղափոխութիւնը ուրիշ
լան չէ, բայց եթէ ի՞նքնասպանութիւն. Աւե-
տիք, կրնա՞ս ձեռքդ խղճիդ վրայ դրած պնդել
որ ժողովուրդն է այս ի՞նքնասպանութիւնը զոր-
ծողը:

Այեցիք. Ումէն տեղ էլ յեղափոխական շար-
ժումը ստեղծում են մի խումբ մարդիկ, իսկ ժո-
ղովուրդը այսպէս թէ այնպէս հետեւում է:

Սիթթու. Մի խումբ մարդիկ, բայց ի՞նչպիսի
մարդիկ, Սամիկանի պէս, քեզի պէս, ինձի պէս
մարդիկ. ո՞վ ենք մենք, կը ճանչնա՞յ մեզ ժողո-
վուրդը, մենք ժողովուրդը կը ճանչնա՞յք, կը
ճանչնա՞յ այն երկիրը, ուր արիւնի գետեր կը
հոսեցնենք: Ումէն բանէ առաջ ես կը յուստհա-
տիմ, երբ կը մտածեմ թէ ամենէն պատասխա-
նասու գիրքերէն մէկոն վրայ ալ ես կը գտնուիմ:
Ո՞վ եմ ես, անկործ, երիտասարդ տղայ մը, մինչ-

գեռ գործին դլուխը այն տեսակ մարդիկ ըլլաւ-
լու էին, որոնց էաւթիւնը պատկառանք ու վըս-
տահութիւն ներշնչէր, որոնց մէկ խօսքին վրայ
կրակը նետուէինք:

Ակեջիթ. Ես ընդունում եմ որ մենք երկիրը
չենք ճանաչում, այդ պակասութիւնը ես միշտ
խստուվանել եմ:

ՍիՍՈՒ. Խստովաներ ես և միայն այդչափ-
ինչ օգուտ խստովանութենէն, երբ երկիրը
չճանչնալով հանդերձ կը շարսնակէք զեկավարի
գերը կատարել և արհամարել այն մարդոց
կարծիքը, որոնք կը ճանչնան այդ քամբախտ
երկիրը: Ակիղբէն մինչև այսօր ոռոսահայն է
թիւրքահայ շարժումը վարողը, առկէ առելի
տխուր փաստ կրնայ ըլլաւ:

Ակեջիթ. Է, Ճանկահայերդ ինչ շատ էք սի-
րում էդ ոռոսահայի և տաճկահայի հարցը բարձ-
րացնել:

ՍիՍՈՒ. Այդ հարցը մենք չենք բարձրացներ,
ան արդէն դոյտթիւն ունի և ստեղծողն ալ մենք
չենք, այլ դուք ձեր ամբարտաւանութեամբ, ձեր

յամառութեամբ, ձեր արհամարտկան կարման-
քով: Ամէն նորեկ Տաճկահայ հիացումով կը մօ-
տենայ Ռուսահայուն և զզուանքով կը հեռանայ:

Ակեջիթ, Նու ինչ ես ուզում ասել դրանով,
մենք Ռուսահայերս հեռանանք գործից, չօգնենք
ձեզ :

ՍիՍՈՒ. Մենք այդ տեսակ անմիտ պահանջ
չենք գներ, մենք միայն կը պահանջնք որ դուք
եղբայրաբար ձեր պարտքը կատարէք և մեզի
թողնէք վարել մեր ճակատագիրը, որովհետ
այդ ճակատագիրը եթէ մենք չկրնանք վարել, ոչ
ոք կրնայ վարել:

Ակեջիթ. Լաւ, արէք, ովկէ ձեզ արդելում,
ես ինքա շատ ուրախ կը լինէի, եթէ Տաճկա-
հայերդ մեր օգնութեան իսկի կարիք չունենայիք:

ՍիՍՈՒ. Չենք կրնար ընել, որովհետեւ Թըր-
քահայ ժողովուրդը վարժեցուցեր են միշտ աչ-
քերը սահմաններուն յառած ամէն բան դրսէն
սպասել. իսկ դուք առելի կը քաջալերէք և ամէն
չանք ի դործ կը դնէք որ այդ ժողովուրդը ձեռ-
ներէցութեան չվարժուի: Բնդէանուր ժողովներու

մէջ մեր Ռուսահայ դործիչները քանի քանի ան-
դամ յայտարարեցին որ Տաճկահայերը անըն-
դամնակ են զործ վարելու, որ նրանք Լոկ դոր-
ծադիլներ կարող են լինել, որ նրանց էթիքա-
կան հասկացողութիւնների վերայ այնքան էլ կա-
րելի չէ վասահել. չէ՞ որ դուն ալ ներկայ էիր:

Ահեցիր. Այս շատ ցաւալի է, բայց աւելի
ցաւալին այն է որ ձեր Տաճկահայ պատգամա-
ւորներն էլ ոչխարների նման գլուխները կախած
լում էին:

ՍիՍԱԿ. Ի՞նչ կըսպասէիր խեղճ մարդերէն.
Վանէն, Մուշէն, Սասունէն հաւաքուած խեղճ
դիւղացիներէ, որոնք ձեր լեզուն իսկ լաւ չէին
հասկնար: Ռուսահայերը պայմաններու բերմամբ
անդամ՝ մը աղղեցութիւն են ձեռք բերեր Թըր-
քահայերուն վրայ, բայց պէ՞տք է որ այդ աղ-
ցեցութիւնը իշարը դործածեն: Ես ի՞նքս զայրա-
ցոյ, բողոքեցի այդ յայտարարութիւններուն
դէմ, ի՞նչ եղաւ արդիւնքը, այն որ կուտարարի
անուն հանեցի և Ռուսահայ պատգամաւորներու
մեծամասնութիւնը ամէն ճիզ թափեց ընտրու-
թիւնս խափանելու համար:

Ահեցիր. Սիսակ ախր դու լաւ ես իմանում
որ ես այդ բոլոր կէտերում քեզ հետ համաձայն
եմ, ինչու ես ինձ ասում դրանք:

ՍիՍԱԿ. Ասոնք քեզի կ'ըսեմ, որովհետեւ յա-
ճախ կը մոռնաս որ համաձայն ես ինձ հետ .
ի՞նչպէս օրինակ այսօր ապէեր մնացեր էիր հը-
մարականիս վրայ:

Ահեցիր. Իսկ ես այնուամենայնիւ կըկնում
եմ որ հըմարւելդ մեծ յիմարութիւն է: Դու
ի՞նքդ գիտես որ մի տարի առաջ ես ինքս էլ շատ
կէտերում այլ կերպ էի մտածում, իսկ այժմ
արդէն համարեա թէ քեզ հետ համաձայն եմ.
Դործի մէջ մնալով դու հետզիտէ նոր կողմնա-
կիցներ կը շահես և քիչ քիչ դործը կարգի կը
մտնի:

ՍիՍԱԿ. Ի՞նչ օգուտ կողմնակիցներէ . դուն
ինձի կողմնակից ես մասնաւոր խօսակցութեան
մէջ, իսկ ժողովներու մէջ և դործի ատեն Սամիտո-
նին կողմը կը բռնես:

Ահեցիր. Սիսալում ես, ես նրա կողմը չեմ
բռնում, ես միայն աշխատում եմ որ կապը չքան-

դուի. Հասկանում ես :

ՍԻՍՈՒԿ. Այս' կը հասկնամ, միշտ կառլը կը հանդուցես, բայց այդ թերմաշ կապին վրայ ալ հանդուցելու տեղ չմնաց: Կը յիշե՞ս, բնդէ. Ժողովին մէջ ալ միշտ այդ ձեռվ կ'արդարացնէին ինքզինքնին այն պատգամաւորները, որոնք ժողովէն դուրս մեղի համակարծիք, ժողովին մէջ միւսներուն ձայն կուտային, որ չըլլայ թէ կառլը քակուի, որ չըլլայ թէ պառակում առաջ դայ: Մի այդ պառակուման խրտուիլակը, զոր անխիղճ կերպով կը շահագործեն մեր ջոջերը:

ՍԻԵՑԻՔ. Նու լա՛ւ, այժմ ի՞նչ ես կարծում, ի՞նչ պէտք է լինի քո հեռանալով :

ՍԻՍՈՒԿ. Չեմ դիտեր, ես ա՛լ ինելք չեմ կը բնար հասցնել աս զործին: Ես ինքս կը քաշուիմ որովհետեւ անօգուտ է ներկայութիւնս: Տառը տարուան ապարդիւն գործունէութենէ յետոյ հիմա վերջապէս այն համոզման եկած եմ որ գործը դեռ շատ խակ է: Հասուն գործը հասուն գործիչներ կ'արտագրէ, մինչդեռ մեր մինչև հիմա ունեցած հերոսները ուրիշ բան չեն եղած բայց

եթէ քաջ, անձնազոհ, աղնիւ ու մաքուր հոգիներ, որսնց մէջ սակայն չէ դանուած մէկը, որ կարենար ամբոխները շարժել և հզօր ձեռքով դէպի նպատակ մը վարել: Մեր ժողովուրդը օտարներուն շատ տուած է այդպիսի մարդիկ, միայն իր աղասութեան գործին դեռ չտուաւ և ատ անով միայն կը բացատրուի որ շարժումը կանխահաս էր, որ գործը դեռ խակ է: Եթէ այս շարժումը կենսունակ է, պիտի գայ օր մը այն մարդը, որ բոլոր ապրելու կոչուած ժողովուրդներու մէջ յայտնուած է և առանց որու ոչ մեծ շարժում կայ և ոչ փրկութիւն:

ՍԻԵՑԻՔ. Գանտաստիկական բաներ մի՛ ասիւ իսէր Սասուծոյ, վարպ պայմաններում մէծ մարդ չի կարող ծնւել:

ՍԻՍՈՒԿ. Գանտաստիկական թէ իրական, ատ ապագան կը ցուցնէ :

ՍԻԵՑԻՔ. Իսկ դու ինքդ ի՞նչ ես մտադիր անել:

ՍԻՍՈՒԿ. Չեմ դիտեր, դեռ չեմ մտածած և այդ մասին մտածելու ընդունակութիւնս ալ

կորսնցուցած եմ, բայց ի՞նչ կրնամ ընել եթէ
ոչ տեղ մը գործ դանել և ապրուսոս հանել :


ԱԻԵՑԻԲ. Դա մի բաւականին մեծ անկում
կը լինէր քեզ համար, գործ, դաղափար մի կողմ՝
շպրտել և ապրուսոի մասին մտածել :

ՍԻՍՈՒ. Մնկում, այս' գիւրին է խօսիլը .
կուշոը քաղցածին մանր կը բրդէ: Զեր գործը
հեշտ է, կուգաք հսո ժամանակ մը յեղափոխու-
թեամբ կը պարապիք, երբ ձանձրանոք կամ
յոդնիք պաշտօննիդ պատրաստ է կովկաս : իսկ
չէք մտածեր, չէք հասկնար որ մեր ներկան ու
ապագան խորտակուած է այն օրէն, երբ յեղա-
փոխականի անունը վրանիս կ'առնենք : Ես հսո
օտարութեան մէջ շուար ու մոլոր, հսն հայրե-
նիքի մէջ թշուառ ընտանիք մը կարօտէ ու կա-
րօտութենէ հալումաշ և դեռ անկում հը :

ԱԻԵՑԻԲ. Նու ես գնամ, ընթրիքի ժամանակ
է, բայց մտածիր խնդրում եմ, գուցէ երբ սառ-
նասիրտ մտածես որոշումիք փոխես:

ՍԻՍՈՒ. Որոշումս որոշում է :

(Այն միջոցին երբ Աւետիք դեպի դուռը կ'ուղղուի,
յոնկարծ դուռը քանի մը անզամ ուժին կը դարձնուի):
ՍԻՍՈՒ. Entrez.



Հ. ՏԵՍԱՐԱԿՈՒՆ

ԱՐԱՐ. (Աերս կը մտնէ, ձեռքը երկու շիւ զինի
դարձրի մեջ փարրած) Բարեւ ձեզ, ի՞նչ կ'ընէք,
Խմբագրութիւնը հսու էք փոխադրեր :

ԱԻԵՑԻԲ. Հա՛, մտածում էինք ի՞նչպէս ա-
նենք որ քեզ էլ անդամ շինենք:

ԱՐԱՐ. Եւելորդ մտածում, ես ոչ միայն
անդամ չեմ ըլլար, այս ընթացքով եթէ պա-
տահմամբ Հայաստանն ալ աղատելու ըլլայ սորք
չեմ կոխեր հսն:

ԱԻԵՑԻԲ. (ինդրանի) Ինչո՞ւ է:

ԱՐԱՐ. (ձեռքի շիւերը, զիխարկը և զանգանը ան-
կողեին վրայ նետերով) Ժամանակին մեր չեմ գիտեր
ո՞ր վարդապետը կ'ըսէ եղեր որ աւելի կը նա-
և ընտառէ Լուսաւորչին հետ գժոխք երթաւ, բան

թէ Պապին հոտ արքայութիւն. Հիմա ես ալ աւելի կը նախընտրեմ Սուլթան Համիդի պէս մարդուն սուրուկը մնալ, քան թէ Սամփառնի պէս մարդոց ձեռքով աղասիլ:

ԱԽԵՑԻՐՅ. Սամփառնի և ի հարկ է ինձ նման մարդկանց ձեռքով:

ԱԲԱՄ. (Աւելիքը գրկերով) ԶԷ, դուն լաւ աղայ ես, ջան աղայ ես, միայն թէ....ոչ խմբագրութեան մէջ. սխալ աեզ ես լնկեր, սխալ, ափառո:

ԱԽԵՑԻՐՅ. Դէ՛ ոչինչ բոլոր լաւ աղերանց կամաց աղատում ես էդ սխալ աեզից, երեխ շուտով ինձ էլ կ'աղատես:

ԱԲԱՄ. Ուրիշ ո՞վ եմ աղատեր որ:

ԱԽԵՑԻՐՅ. Իբրև թէ չի իմանում. այս մարդը հրաժարականն է ուղարկել:

ԱԲԱՄ. Իբա՞ւ կ'ըսես, ծօ՛ Սիսակ շիտակ է:

ՍԻՍԱԿ. (Գլխավ կը հաստատէ:)

ԱԲԱՄ. (Երկու ձեռքերը վեր վերցնելով) Փա՛ռք քեզ Տէր, փա՛ռք քեզ, փա՛ռք քեզ. Հիմա կը հաւատամ որ ծրագիրս պիտի իրագործուի:

ԱԽԵՑԻՐՅ. Ծրագիրդ, դո՞ւ էլ ծրագիր ունես,

շտո հետաքրքիր է իմանալ էդ ի՞նչ ծրագիր է: ԱԲԱՄ. Կընաս իմանալ, ոչ ձերինին չափ գաղտնի է և ոչ ալ ձերինին չափ մեծ: Իմ ծրագիրս այն է որ սա կազմակերպութեան մէջ որ չափ չնորհքով մարդիկ կան նէ ամէնքն ալ դուրս ելլեն որ կազմակերպութիւնը մաքրուի:

ԱԽԵՑԻՐՅ. (Քրքիչ մը բաժրացներով) Ճօ՛քս տունը չքանդուի, քո ամէն բանն էլ թարս է. փոխանակ կեղտատներին դուրս շպրտելու, մաքուրներին է ուզում դուրս բերել որ կազմակերպութիւնը մաքրուի:

ԱԲԱՄ. Է ի՞նչ ընես, աղատուները չեն ելլար նէ: Երեակայէ տեղ մը նասեր ենք, խումբ մը աղտոտ մարդիկ գան սկսին հոտեցնել, ի՞նչ պիտի ընենք, անոնք չելլան նէ մենք պիտի ելլանք, մենք ելլալնուս պէս անոնք ալ կ'ելլան, որովհետև մաքուր մարդ չեղած տեղը հոտեցնելը համ չունի. անոնք ալ ելլալնուն պէս մենք նուրէն ներս կը մտնենք, կ'աւլենք, կը մաքրենք, կը հականեխնիք և աչքերնիս չորս կը բանանք որ մէյմըն ալ մէկալները ներս չգան: Ահա՛ այս

է իմ ծրագիրս, ինչպէս կը տեսնես շատ պարզ :
Ահեջիբ. Շատ պարզ և շատ էլ հեշտ, դրա
համար հարկաւոր է միայն ոչինչ չանել :

ԱՐԱՄ. Կը ներես, կարծածիդ չափ հեշտ չէ .
այսօրուան օրս ամէն գաղափարական հայ երի-
տասարդի գործ չէ առանց գործելու կենալ .
մէյմը փորձէ կը տեսնես. հարբուխ կըստանաս :

Ահեջիբ. Սատկես դու, խօսքի տակ չես
մնայ, նու ցը, ես դնացի :

ՍԻՍՈՒ. Ցը :

ԱՐԱՄ. Ո՞ւր ճանըմ, ես եկայ դուն կը փախ-
չիս, գինի եմ բերեր, ազուոր տեսակէ, չես խմեր :

Ահեջիբ. (դունին) Հա՞ , ափսո՞ս որ դեռ չեմ
ընթրել :

ԱՐԱՄ. Ե ինչ կայ, այսօր ալ մի ընթրեր .
յեղափոխական ըսածդ անօթութեան վարժուե-
լու է :

Ահեջիբ. Զէ դնամ. Սիսակին խմացրու որ
մի քիչ դինջանայ, չատ է պեսիմիստ դառել :

ԱՐԱՄ. Դէ լաւ, դուն դիսես :

Ահեջիբ. Ցը :

ՍԻՍՈՒ. Ցը :
ԱՐԱՄ. Ցը, բարե ըրէ :
(Աւետիք դուրս :)

Պ. ՏԵՍԱԾՈՎԱՆ

ԱՐԱՄ. (բազմոցին վրայ նատերով) Է Սիսակս,
այսպէս ուրեմն, դուն ալ պաշտօնապէս հերե-
տիկուներու կարգը անցար. պատմէ նայինք առ
ինչպէս եղաւ :

ՍԻՍՈՒ. (արս մը առներով և արմուկով սեղա-
նին կրներով) Ի՞նչ պատմեմ, նոր բան մը չէ պա-
տահած, եղածները արդէն գիտես, միայն թէ
երէկ դանակը ալ սակորին հասաւ : Երևակայէ
նամակ մը առնիք վահրամէն, խեղճը ամբողջ
տարի մը առանց դրամի և առանց նամակի ձգեր
են; Նամակը կարգաս աղիքներդ կը գալարին ,
իսկ Սամիսոն ըլլալիքը առանց ուէ խղճահա-
րութեան իր ընթացքը կ'արդարացնէ և մինչե-
սկ բացէ ի բաց կը յայտնէ թէ տասը վահ-

բամներ ալ ձերբակալուին հոգը չէ, հերիք է որ
իր պրօպականդի գործը կանգ չ'առնէ : Ազբա՛ր
չեմ գիտեր, չեմ հասկնար, ի՞նչ կաւէ շինուած
են այս մարդիկը :

ԱՐԱՄ. Այն կաւէն որ առհասարակ բոլոր
սովորական մարդիկը կը յինուին : Ին բարձր կո-
չումներն իսկ սովորական մարդոց համար վար-
ժութեամբ հասարակ արհեստներու կը փոխուին :
Չե՞ս գիտեր, գերեզմանափորը գերեզման փո-
րած առեն օղի կը խմէ, իսկ մեռելաթաղները
դադաղակիր կառքին ետել թուզի կը խաղան :

ՍԻՍԱԿ. Չես գիտեր լա՞ս թէ խնդաս. երե-
ւակայէ որ մարդո կատարեալ լրջութեամբ զար-
մանք կը յայտնէ թէ վահճամը դրամի համար
ինչու իրենց կը գիմէ, փոխանակ Սասուն դիմե-
լու, որ Մալաթիայէ քանի մը ժամ է :

ԱՐԱՄ. Ա՞ս ինչու կ'ըսես, տեղի համովը
կայ. չեմ գիտեր քեզի պատմե՞ր եմ, օր մը ինձի
հետ կը վիճէ թէ Պոլսոյ Ղալաթիան և Գաղատ-
իան միենոյն բանն են : Երբ վերջապէս համոզեցի
որ Գաղատիա անունով քաղաք մը կայ, աչքերը

մեծ մեծ բացաւ և բացագանցեց «Ճօ՛ էդ որտե-
ղեց գուրս պլծու է», ախր առաջ էդպէս քաղաք
չկար»: Բոի «նոր շինեցինք, յատկապէս այն նը-
պատակավ որ քեզ շփոթեցնենք»: Գիտե՞ս աս ինչի
կը նմանի, երեակայէ որ Զինաստանի Բաքսեր-
ներուն խելքին վշէր մեզ իրենց կեդրոն ընտրէին,
անուններ է պիտի Լսէինք Զինդ-շանդ-չունդ,
Զինդ-ձունդ-ձանդ, բայց ո՞ւր են, ի՞նչ են, ի՞նչ
պիտի գիտնայինք:

ՍԻՍԱԿ. (սարի եղելով) Մի՞ խնդացներ Արամ,
մի խնդացներ տխուր բան է :

ԱՐԱՄ. Տխուր բան է, բայց նոր բան չէ,
մէնք ալ կամաց կամաց ասոր կը վարժուինք:
Չե՞մ գիտեր Ալի փաշան է թէ ֆուատ փաշան
ժամանակին մեր ազգային Սահմանադրութիւնը
քառակուսի անիւներավ կառքի մը նմանցուցեր
է, իսկ մեր յեղափախութիւնը գիտես ինչի կը
նմանի, կառքի մը, որուն անիւները փոխանակ
տակը գբուելու վրան գետեղուած են. անիւները
ձւոքով օդին մէջ կը դարձնենք արիւն քրտինք
մտած և պատրանքը ունինք թէ կառքը կը շարժենք:

ՍԻՄՈՆ. Պատրանքը ունինք թէ կառքը
սրարշաւ կ'երթայ և կը զարմանանք որ տեղ
չենք հասնիր:

ԱՐԱՅԻ. Էյ, էյ, ականջներէդ անշուշտ հող
կը թափի հիմա ծերուկ: (Պահ մը մտախոն:) Ի՞նչ
կ'ըսես այս յառաջդիմութեան Սիսակ. հայրս, որ
Հայաստանը իր հինգ մասներուն պէս կը ճանշ-
նար, դեռ ասկէ տասը տարի առաջ կը պուար
«Առ ձեր յեղափոխական ըլլալիքներուն մէջ մեկ
հատ խելքը գլուխը մարդ չիկայ»: Իսկ ես կը
վիրաւորուէի, կը զայրանայի, «ի՞նչն գիտես»
կ'ըսէի, «Երբ մարդիկը չես ճանչնար»: «Իրենց
դորձերէն» կը պատասխանէր և Սւետարանի ա-
ռածը կը կրկնէր «ի պտղոյ անտի ճանաչի ծառն»:
Օր մը «Շեփոր»ի մէկ թիւը անցաւ ձեռքս, ուր
վանայ կուները նկարագրուած էին. յաղթական
վաղեցի քովը և թերթը տուփ որ կարդայ և տեսնէ
թէ ինչե՛ր ըրած են իր չհաւնած յեղափոխական-
ները: Խեղճ ծերունին տղու պէս լացաւ «Ծօ'
ասո՞վ կը պարծենաս» ըստու «ասով, որ վաս-
պուրականի կործանումը կը նկարագրէ անխո-

հեմութեան երեսէն» և պատմեց թէ ինչպէս 15
տարի տուաջ վան գտնուած միջոցին տեղական
գործիչներու հետ միասին մէկ կողմէ կը թութիւն
կը տարածէին, միւս կողմէ ժողովուրդը կը զի-
նէին անձայն անշուկ «ծօ' կըսէր, առ Վասպու-
րականի գիւղերու մէկ տղէտ մելիքը քու 10
համալսարանականիդ հետ չեմ փոխեր»: Եւ դեռ
շատ բաներ, շատ բաներ կը խօսէրու կը պատմէր,
բայց ականջն չէին մտներ հին գլուխ, պահպա-
նողական ծերուկին խօսքերը, մինչի որ հսա եկայ,
աչքովս տեսայ, ձեռքովս շօշափեցի ծառը: Գլուխո
առի տունէն հեռացայ իր գաղափարներուն հա-
մար հալածուող մարտիրոսի մը հստաբութեամբ,
ան հսն իր վշտէն ու կարօտէն հողը իջաւ, իսկ
ես հսա վեց տարի ջուր ծեծելէ յետոյ, հիմտ
նստեր իր գաղափարները կը կրկնեմ: Է՞՞ ո՛ւ
հերիք, եկուր զինի խմենք:

(Ոնկողնին վրայէն չիւրէն մեկը կը բերէ և զր-
պանէն զմելին հաներով ետեի խցանանառով չիշին բե-
րանը կը բանայ:)

ՍԻՄՈՆ. (վեր վար քաղերով) Ա՛խ Արամ, հա-

ւառքս կը մեսնի, հաւամոքս :

ԱՐԱՄ. Մի՛ վախնար, այդչափ շուտ չիմեսնիր. իմս երեք տարի է հողեվարփի մէջ է և գեռ չմեռաւ, ամէն անգամ որ մեռած կարծելով թաղելու կ'ելլեմ, կամ ոտքը կը շարժէ կամ ձեռքը: Մ'եր հաւատքն ալ մեր ժողովուրդին կը նմանի, որ 800 տարի է հողեվարփի մէջ է ու չի մեռնիր: Ասիկա ա՛լ հողեվարփ չէ, արտառոց վիճակ մըն է, ուր կեանքն ու մահը խաղաղօրէն միկնոյն մարմնին մէջ կ'ապրին: (Լուսացքի սեղանին վրայէն երկու բաժակ տանելով) Ա՛ռ նայիմ սա բաժակը, խմենք այդ տիստաւոր հաւատքին կենացը, կամ առողջանայ և կամ սասակի աղտափինք ձեռքէն :

(Բաժակները իրարու զարմելով կը խմեն և սեղանին առջե կը նատին:)

ԱՐԱՄ. Աղէկ դինի է գիտես, շիշը հինգ ֆրանկ կ'արժէ. մէկ շիշ պիտի գնէի Օր. Ասւանեանին նուեր տալու, աչքս վակաւ երկու շիշ առի, ըստ մէկն ալ Ախակին հետ կը կոնծենք: Լուցի՞ր որ օրիորդը այսօր քննութիւնը լմնցուց

մէծ յաջողութեամբ, երթանք միտոին շնորհաւութենք. խեղճ աղջիկ է, կ'ուրախանայ:

ՍԻՍԱԿ. Չէ՛ այսօր տրամադրութիւն չունիմ, ուրիշ ատեն. հիմա դուն ան ըսէ, ի՞նչ պիտի ընեմ ես, թեևերը կտրած թռչունի պէս ինկեր մնացեր եմ:

ԱՐԱՄ. Թեևերդ նոր չէ կտրուած հոգիս, միայն թէ նոր կըզգաս որ օդին մէջ չես: Ի՞նչ պիտի ընես, ոչինչ ես ի՞նչ կ'ընեմ. երեսս բարյացոյի գիւմակ մը անցուցեր կ'ապրիմ, իբրի քաղաքական միակ գործունէութիւն ամէն տառու հեռագիրները մէյմը աչքէ կ'անցընեմ, սա մեր վեհափառ հնագայլին մահուան աւետիսը կարդալու համար: Դուն ալ ճիշտ ինծի պէս և ինծի հետ կ'ապրիս. տապրակիս յատակը գեռ քիչ մը վշրանք կայ, երկուքնիս ժամանակ մը ապրեցընելու չափ, ան ալ լմնայ նէ Աստուած ողորմած է:

ՍԻՍԱԿ. Եղբայր դուն ուրիշ գուն գէթ քու գրականութիւնդ ունիս, որ քեզի մասամբ հատուցում կտրապայ, խեկ հ՞ս, խոտի պէս ապրիմ:

ԱՐԱՄ. Հա՛, հա՛, հա՛ գրականութիւնս, ծա՛
երանելի մարդ երկարիս ալ գարմանը քամից
կը տանի, դուն ելեր կ'ըսես երանի քեզի ուր
բռու մը աւելի ունիս: Փառք տուր որ դուն գէլժ
այդ երկրարդ վորձանքէն աղատ ես. ծօ՛ ով ինչ
ընէ իմ գրականութիւնս, կ'ուզես նէ գրչիդ
ծայրէն մարգարիս թափէ, կամ խոզերու առջի
պիտի նետես կամ արիւնի հեղեղին մէջ: Այսու
մեր մէջ հանրային գործունէութեան միակ առ-
պարէզը յեղափոխութիւնն է, հսն ալ անկեզծ
ժարդուն միակ ընելիքը երթալ մեռնիլն է:
Աղնիւ ըլլալու համար կամ պիտի երթալ մեռ-
նիս և կամ ցաւերավդ մէկտեղ կրիայի պատեանի
մը մէջ քառիս ու ձայնդ ձունդ կտրես:

ՍԻՍԱԿ. Օ՛Փ Արամ, սոսկալի է սոսկալի:

ԱՐԱՄ. Սոսկալի է բայց անխուսափելի,
ինչ կրնա՞ք ընել, մեր սերունդը ճակատագրա-
կան կերպով փճացման գատապարտուած է, ու-
զնիք չուղենիք պիտի հաշտուինք այս իրողութեան
հետ: Շուրջդ նայէ՛ չե՞ս տեսներ, ոմանիք բարոյա-
պէս կը փճանան, ոմանիք նիւթապէս, աւելի շա-

տերը երկու կերպով ալ: (Բամակները լեցներով)
խմէ, մենիք կորսուինք ալ նէ, դոնէ բաց ճակա-
տով կը կորսուինք:

(Բամակները իրարու զարմերով կը խմեն:)

ԱՐԱՄ. Երէկ իրիկուն չէիր եկեր ժողովի,
աղէկ ըրեր էիր:

ՍԻՍԱԿ. Դուն գացի՞ր:

ԱՐԱՄ. Գացի, բաւական խնդացի, բայց
շատ սուզի նատաւ. այս առառու աչքերս բացի որ
բոլոր գեկերս գլուխս հաւաքուած են: Քանի մը
ժարդուն միակ ընելիքը երթալ մեռնիլն է:
Վարդամ սոտակալիս մէջ պատէ պատ զարնուեցայ,
միամ սենեակիս մէջ պատէ պատ զարնուեցայ,
վերջապէս սոտակալոր մը գուրս տուի, կ'ուզես
կարդամ մտիկ ըրէ, իբր մեզ:

ՍԻՍԱԿ. Կարդա նայինք:

ԱՐԱՄ. (Գրապանեն բուղը մը հաներով կը կարդայ:)

ԱՇԽԱՐՀՅ ԶԵՒԲ

Երբ դեռ մանուկ էի առանց զիտութեան,
Սշխարհը միծ խաղարան մ'էր իմծ համար,
Զոր Աստուած էր շիներ և իր հըրաման
«Հա՛ տղաքս վազվեցէք վեր ու վար».

Յետոյ երբ որ յանախեցի վարժարան,
Վարժապետն էր օր մը «Տղաք զիտէք ի՞նչ,
Աշխարհը, զոր զուք կը կարծէք դուք զուքան,
Հըսկայական կլորակ մ'է զերդ նարինչ :

Եթէ չըլլար զաւագանին ահն ու զող,
Կը պոռայի «Է ի՞նչ կ'ըսես, Բա՛, Բէ՛ Բի՛»,
Նըկարեցի տեսրակիս մէջ կապուտկող,
Իր պատկերը հեծած նարինչ մ'ամենի:

Ամբողջ օրը մարզարանին մէջ անդուլ,
Անթարթ աչքով զցմեցի քարն ու զետին,
Բայց չկցայ տեսմել շարժման մի նըշոյլ
Սա անիծած հըսկայական նարինչին:

Յաջորդ օրը երբ վարժապետն անյարիր.
Իր հարցումը իմծ ալ ուղղեց այս առթիւ,
Հսի «Պարո՞՛ կլորակ է, զում ըսիր,
Իմծի համար կլոր տափակ մէկ հաշիւ»:

Այսուհետև երբ շատ զրբեր ձեռք առի,
Ես ալ ըսկայ պաշտել սուտը պոչառը,
Թէ աշխարհը զնդակ մըն է վիթխարի,
Որ պարապիմ մէջ կը յածի ահաւոր:

Բայց երբ մարդիկ ըսիմ «Ճամբայ տուր անմի՛տ»
Եւ ցեխին մէջ մետեղին զիրքս կոշտ բանիւ,
Նորէն եկայ հիմ համոզմանս ուղղամիտ
Իմծի համար կլոր տափակ մէկ հաշիւ:

(Թուղրը զրաբանը կը դնէ և շիշին մէջ մնացած
գիշին Սիսակի բաժակին մէջ պարպերով) **ԲԵ՛Ր**, Հատ
մըն ալ խմէ, թուզ այսուհետև քեզի համար ալ
կլոր տափակ մէկ հաշիւ ըլլայ:

ՍԻՍԱԿ. Կեցցես, կենացդ (կը խմէ) այդ ոստա-
նաւորէն մէկ հատ օրինակէ ինծի տուր:
(Գասր կը դարձնուի:)

ՍԻՍԱԿ. Entrez.

Դ. ՏԵՍԱՐԱՆ

ՍՈՒՐԵՆ. (Եւրո կը մանէ տագնապարից) **Բարե-**
տղաք, ծօ՛ **Սիսակ ճիշտ** է որ հրաժարականդ
տուր ես:

ՍԻՍԱԿ. Ո՞ւրկէ իմացար:
ՍՈՒՐԵՆ. Հիմա համբան Սւետիքին հանդի-
պեցայ ան ըստ :

ՍԻՍԱԿ. Հա՛ ճիշտ է, Ե՛ ի՞նչ ըսիր ասոր:
ՍՈՒՐԵՆ. Ի՞նչ պիտի ըսեմ, շատ գէշ ես ըրեր:
ԱՐՄՄ. Ի՞նչո՞ւ է գէշ ըրեր Պր. ատամնաբոյժ:

ՍՈՒԻՐԵՆ. Լոէ՛ Աստուածդ սիրես . գուն ու
քաջալերեցիր անպատճառ:

ԱՐԱՄ. Ի՞մ քաջալերութեանս պէտք չունէր
կարեմ:

ՍՈՒԻՐԵՆ. Ծօ՛ աղբար, կար չկար մէկ թիւր-
քահայ մը կար աս կեդրմնին մէջ, հիմա ան ալ
առնէ քալէ նէ ի՞նչ պիտի ըլլայ դործերնիս :
Այսշափ տարի համբերեց, դոնէ մինչև յառաջի-
կայ ընդհ. Ժաղովն ալ համբերէր, կարելի է
շատ բան կը շտկուէր, արդէն մարդ չկայ որ սա
Սամփասնէն դոհ ըլլայ:

ԱՐԱՄ. Դէ եկուր մի ճաթիր. ծօ՛ աս միա-
մըսութենէն ե՞րբ պիտի դարմանուիք: Ես քանի
հոս եմ կը լոեմ՝ թէ աս մարդէն ամէնիքն ալ
դժո՞ն են, կարծեմ անցած ընդհ. Ժաղովէն առաջ
ալ դուք երկովդ եկը պնդողը թէ աս մարդը
անկարելի է ընտրուի, թէ անդզալի կերպով ներս
սպրդած է, թէ ընդհ. Ժաղովը անպատճառ դուրս
կը ներէ զինք են են, սակայն աեսաք որ մարդը
մեաց և ամէնկիդ ալ դլխուն վրայ նատաւ .
հիմա նոյն երդը կ'երդէք յաջորդ ընդհ. Ժաղո-
վին համար:

ՍՈՒԻՐԵՆ. Է՛ լաւ այդպէս եղաւ ըսելով հի-
մա զինք մինակ թողնենք որ ուզածը ընէ:

ԱՐԱՄ. Կընաս նէ արդիւէ՛. առած մը կայ
կ'լաէ ծուռ ծակը ծուռ սեպ կ'ուզէ՛. կը հասկնամո
լունէ ըսել է. աս Սամփասնը հանեք ուրիշ Սամփ-
ան մը պիտի գայ աեզը նատի, սեպը միշտ ծուռ
պիտի ըլլայ որովհետի ծակը ծուռ է: Այս շտր-
ժումին էն տաք, էն յուսալի ժամանակը տա-
րող գործը զոյգի մը ձեռքի էր: Մարդ ծառայ
մը բանելու ըլլայ նէ եօթը պորտը կը քրիրէ ,
բայց մեր աննման ժողովուրդին մաքէն իսկ
չանցաւ մէյմը հարցնել թէ ով են աղմոք ,
որո՞ւն զաւակն են , որո՞ւն հարսն ու փեսան :
Անոնք գացին ասոնք եկան և այսպէս ալ պիտի
շարունակուի, մինչև որ ծակը շտկուի :

ՍԻՍԱԿ. (Սուրենին) Շատ ճիշտ կ'լաէ, իսկ ես
ա՛լ յոզնեցայ, յուսահատեցայ ալդ անիծուած
ծակը շտկելու փորձերէն. հոգիս ելաւ, իմաեզս
քար ըլլար չէր գիմանար:

ՍՈՒԻՐԵՆ. կը հասկնամ եղբայր կը հասկնամ,
ես քեզ չեմ մեղսուրեիր: Ա՛խ սա Ռուսահայերը ,

սա Ռուսահայերը. Աստուած վկաց ես սա Ռուսահայի Տաճկահայի կոռուէն չեմ տխորժիր, սակայն մարդիկը երբեմն անանկ կը վարուին որպարզապէս ձեռքս անցած Ռուսահայերա բզկտելու կուգայ :

ԱՐԱՄ. Այդշախ անդութ մի ըլլար զաւակու, աստմին քաշես հերիք է:

ՄԻՍՈՒ. ի՞նչ Ռուսահայ բարեկամ, ի՞նչ կ'ըսես նէ Տաճկահայերան ըսէ: Ի՞նդհ. Ժաղովին մէջ մեր Տաճկահայերն էին որ հակառակ մեր բոլոր չանքերան այս մարդոց տուին իրենց քուէները, այն պատճառաբանութեամբ թէ մենք Տաճկահայերս մարդ չունինք: Այս խօսքը Ռուսահայերը հնարեցին, բայց Տաճկահայերն էին որ ճշմարտութեան կարդ անցուցին :

ԱՐԱՄ. Հարկու խելօքին քառասուն օր խենթ ըսես նէ կը խենթնայ: Անսնք ձեռք ձեռքի կուտան իրենց էն ասափակ մարդիկը էն բարձր դիլքերու վրոյ կը հանեն, իսկ մենք անոնց ձեռքը գործիք կը դասնանք և մեր էն շնորհքով մարդիկը ցեխերու մէջ կը գլորենք: Երկրին

մէջ տարիներով ժողովուրդին ծառայելէ յետոյ արտասահման ապաստանող Թիւրքահայ գործիշներէն ո՞ր մէկը կանգուն մնաց:

ՍՈՒՐԵՆ. Մէկ խօսքվ շատ գէշ պիտի ըլլայ, շատ գէշ:

ԱՐԱՄ. Աւելի՝ գէշ պիտի ըլլայ կ'ըսես. չէ հողիս մխիթարուէ, մխիթարուէ, ասկէ աւելի գէշ չկրնար ըլլալ:

ՄԻՍՈՒ. (ՉՊԱՀԵ) Հերիք աղաք հերիք իսէր Աստուծոյ ուրիշ նիւթի մը վրայ խօսեցէք:

ԱՐԱՄ. Ուրիշ նիւթ ունինք որ. ասոր կ'ըսեն չայտն թաց խօսքը, որչափ խօսիս կը խօսուի. արջը տասերկու խաղ ունի ըսեր են տասերկուքն ալ տանձի վրայ:

ՍՈՒՐԵՆ. Է՛ ինչ պիտի ըլլանք չեմ գիտեր, Աստուած ողորմի մեղի:

ԱՐԱՄ. Ամէն (ոսքի եղանով) ես երթամ օրէորդին. ե՛լ Սիսակ մէկտեղ երթանք:

ՄԻՍՈՒ, Զէ՛ չեմ իլնար, այսօր տրամադրութիւն չունիմ:

ՍՈՒՐԵՆ. Ա՞ր օրիսրդին կ'երթաս Առան-

Եանին, ես ալ հոն պիտի երթամ, միասին երթանք: Ախառկ եւ դուն ալ, քիչ ժը կը բացուիս ինչու հոս մինակ նատիս:

ՍիՍՈՒ. Չէ սիրտ չունիմ:

(Այս միջոցին դուրսկ աղմուկ մը, շառաջուն ծիծաղներ և ՊՐՈԶԻՑ ՊՐՈԶԻՑ աղարակները կը բաւին:)

ԱՐԱՄ. (որ գլխարկը զրուիր դրամ, զինիի չիւն ու գաւագանը առած պատռնանեն դուրս կը ճայի) Սիսակ ասոնք ով են:

ՍիՍՈՒ. Կարծեմ ուսանողներ են գերմանական Զուիցերիայէն եկած՝ գիմացի օթէլը իշած են:

ՍՈՒՐԷՆ. (նոյնպէս պատռնանեին մօռենարով) Երջանիկ մարդիկ երանի՛ ձեզի, ցաւ չունիք հոգ չունիք:

ԱՐԱՄ. Քալէ՛, քալէ՛, հերիք փիլիսոփայութիւն ընեն: Սիսակ ցը. շատ մի՛ մտածեր մեզ-քերուդ վրայ:

ՍՈՒՐԷՆ. Ցը՛ Սիսակ:

ՍիՍՈՒ. Ցը՛:


(Արամ և Սուրեն դուրս:)

Ե. ՏԵՍԱՐԱԿ

ՍիՍՈՒ. (Սենեակին մէջ զիսիկոր քանի մը շրջուն ընելի յետոյ բազմոցին վրայ կ'երկնեայ: Սենեակը արդէն կես մրեած է, դիմացին ուսանողները խումբով կրսկուին երգել զրիցերական ազգային երգը: Սիսակ տեղէն եղերգ կը մօռենայ պատռնանեին և պահ մը կանգնած մտիկ ընելի յետոյ, զրուիր ձեռքերուն մէջ առած պեղանին վրայ կ'իշնայ և կրսկուի հնեկելու: Վարագոյրը բաշիկ վար կ'իշնէ:)



ԶՈՐՈՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



Օրիորդ նեկտար Ասլամեանի սենեակը: Փոքրիկ մամսարդի սենեակ մը շեղ առաստաղով, չափազանց խեղճ կահաւորուած:

Ե. ՏԵՍԱՐԱԿ

ՆԵԿՏԱՐ. (Գեռ նոր վերջացուցած է ընրոիքը, որ երկու հաւակիր և պահիր կը բաղկանայ և մնացորդները

հաւաքերու վրայ և: Եռացքի փոքրիկ սեղանին վրայ րեյի ընրը կ'եփի: Դուռը կը զարհուի: Շտապով՝ հաւկիրի կձեզները դապրի մը մէջ փարքերով բառցրի սեղանին աքին մէջ փակելէ յետոյ) Ենւոչ.

ՍԻՄՈՆ. (ներս կը մտնե և ձեռք կուտայ) **Բարի երիկուն օրիորդ:**

ՆԵԿԱՑԱՐ. (զարմացած և շիորած) **Պր.** **Սիսակ,** Դո՞ւք... Հո՞ս... ասո ո՞ր քամին բերաւ:

ՍԻՄՈՆ. (գլխարկն ու զարագանքը դրան ետև գետեղեցի) **Ինչո՞ւ այդշափ զարմացաք օրիորդ,** չէ՞ք սպասեր:

ՆԵԿԱՑԱՐ. **Խնդրեմ նստեցէք,** ասանկ, բաղմոցին վրայ. Ճիշտը ըսելով չէի սպասեր, կարծեմ Դուք ալ կը խոստովանիք որ սպիրական բան չէր:

ՍԻՄՈՆ. (հստերով) **Է առիթն ալ սպիրական չէ.** շատ ուրախացայ իմանալով որ քննութիւննիդ յաջողութեամբ անցուցեր էք, որոտագին շընուրութիւններու:

ՆԵԿԱՑԱՐ. **Շատ չնորհակալ եմ Պր.** **Սիսակ,** կը կնակի չնորհակալ, որ զէթ այս ուրախ օրս

ՃՇԵԿԵԳԵՔ զիս, թէյ կը խմէք:

ՍԻՄՈՆ. **Ինչո՞ւ չէ, ամենայն սիլով:**
ՆԵԿԱՑԱՐ. **Միանկ է նէ վայրկեան մը ներեցէք:** (Գլխարկը կ'առնէ:)

ՍԻՄՈՆ. **Ո՞ւր օրիորդ:**

ՆԵԿԱՑԱՐ. **Հիմա կուգամ:**
ՍԻՄՈՆ. (աեղեն եղեղով կ'արգիլէ) **Զէ,** **խնդրեմ օրիորդ,** **աւելորդ նեղութիւն չուզեր,** գիտեմ ինչու կ'երթաք:

ՆԵԿԱՑԱՐ. **Քիչ մը խմորեղէն բերեմ, թէյին հետ աղէկ կ'ըլլայ:**

ՈՒՄՈՆ. **Զէ,** **չնորհակալ եմ,** ես խմորեղէն չեմ սիրեր. Հսն սեղանին վրայ բան մը տեսայ, կարծեմ հայկական պանիր ըլլալու է:

ՆԵԿԱՑԱՐ. **Այս մայրս զըկած էր:**
ՍԻՄՈՆ. **Օ՛Փ,** **աեսա՛ր ուտելու բանը,** **խմորեցնը ինչ պիտի ընենք:** (Սեղանին առնե կը նստի:)

ՆԵԿԱՑԱՐ. **Այդշափ կը սիրէք.** **Լաւ ուրեմն պանիր կերէք:** (Պաճիրմ ու հացը Սիսակին առնե կը դնե և բեյի կը նայի:)

ՍԻՄՈՆ. **Ես երէկ պիտի գայի ողոց հետ,**

Բայց քիչ մը անհանգիստ ըլլալուս չկրցայ դաշլ:
ՆԵԿԾԱՐ. Ավասս որ չեկաք . բաւական տ-
րսիս ժամանակ անցուցինք, Արամը քիչ մը դինի
խմեց, ալ կրնաք երեակայել: Բայց Դուք ի՞նչ
ունեք:

ՄԻՍԱԿ. Ոչինչ, աւելի բարոյական քան զի-
կերական անհանգստութիւն. երեկ վերջապէս քաշ-
աւեցայ գործէն:

ՆԵԿԾԱՐ. Ճե՛ց է ուրեմն, երեկ տղափը ըսին
հաւատալս չեկաւ, այնչափ հոգով սրտով փարած
էք գործին: (Թեյերը սեղանին փրայ դներով կը եսախ.)

ՄԻՍԱԿ. Է՛ս, թերեւս հոգով սրտով փարելուս
համար էր որ ասանկ եղաւ:

ՆԵԿԾԱՐ. Տխուք բան է, ես շիտակը շատ
բան չեմ հասկնար այդ գործէն, սկիզբէն ի վեր
միշտ տեսակ մը փախ կըզգամ, բայց վրաս քիչ
մը հանդարտութիւն կուգար, երբ կը մտածէի
թէ Զեզի պէս մտրդիկ կան հօն:

ՄԻՍԱԿ. Իսկ ուրիշներու վրայ ալ անհան-
գըտառութիւն կը բերէր ինձի պէս մարդոց ներ-
կոյութիւնը: Բայց չբանահք այդ խնդիրը, Դուք

ան ըսէք օրիորդ դժուա՞ր էին քննութիւնները :
ՆԵԿԾԱՐ. Չեմ գիտեր ինձի ամենին դը-
ուար չեկան, ամօթ պիտի ըլլալ եթէ դժուար
դային, գիտէք որ ես հա եկած օրէս միմիայն
իմ մասնագիտութեամբս պարապած եմ :

ՄԻՍԱԿ. Եւ շատ լաւ ըրիք:

ՆԵԿԾԱՐ. Մնկե՞զծ կ'ըսէք. ես կը կարծէի
թէ... Դուք, ալ... Լաւ աշքով չէք նայիր ինձի,
ուրիշ բանով չհետաքրքրուելուս համար:

ՄԻՍԱԿ. Ինչո՞ւ սուտ խօսիմ, մինչև հիմա
այդպէս էր, բայց հիմա կը հասկնամ որ Դուք
աւելի ճիշտ խորհած էք. երանի թէ ես ալ ժա-
մանակին այդպէս խորհին և մասնագիտութիւնս
կիստ չգտէի:

ՆԵԿԾԱՐ. Դուք ուրիշ Պր. Միսակ, Դուք
խելացի և կարող երկասարդ մըն էք, առանց
ուեէ մասնագիտութեան ալ կրնաք միշտ օգտա-
կար ըլլալ թէ Զեր աղգին և թէ Զեր անձին:
Կար ըլլալ թէ Զեր աղգին և թէ Զեր անձին:
Բայց ես, ի՞նչ կրնայի ընել իմ մասնագիտութե-
նէս գուրս. խեղճ յիմար աղջիկ մը, (ճպուերով)
աղէտ հոսհոսուհի մը, ի՞նչպէս մեր Ռուսահայ

քոյրերը կ'ըսեն:

Սիօնի. Խնդրեմ մի կրկնէք այդ ապոչ բամբասանիքները. բայց ինչպէս եղաւ որ կրցաք առջի օրէն այդպէս կզղիանալ, դիւրին բան չէր գիտէք, մանաւանդ այս քաղքին մէջ:

Նեկայի. Արգէն ընտանեկան պայմաններո կըստիպէին զիս այդ մեկտասացումին, հայ ուսանողութեան արհամարանիքն ալ աւելի նպաստեց: Մենք ընիկ էրդրումցի ենք. հայրս բաւական կարողութեան տէր մարդ էր և իր զաւակներուն կրթութեանը համար գրամ չէր խնայեր: Եղբայրս Սանասարեան վարժարանը գրած էր, իսկ ես Հռիփսիմեան դպրոցը կը յաճախէի: Մեծ կոտորածին հայրս սպաննուեցաւ, խանութը թալնուեցաւ, մնացինք կարօտ, այրի մայրս մեծ եղբօրս և ինձի հետ, որ այն ասեն հաղիւ 15 տարեկան էի: Եղբայրս որոշեց որ Ամերիկա գաղթենք, ունեցած շունեցածնիս ծախեցինք ելանք մինչև Տրապիզոն դացինք, բայց թող շատեին որ նաւ նստինք: Եղբայրս առժամանակեայ կերպով գործ մը սկսու Տրապիզոն և հսն ալ մնացինք:

Ես Ամերիկացի միսիօնաբներու վարժարանը շարունակեցի ուսումն և աւարտելուս վարժուհի եղայ մեր ազգային դպրոցը: Արհեստա հոգւով չափ կը սիրէի, բայց արտիս վավաքն էր անպատճառ համալսարանի մը մէջ մանկավարժութիւնը մասնագիտորէն ուսանիլ: Միսիօնաբներուն մեծը խստացաւ զիս Ամերիկա զրկել, բայց իրը պայման առաջարկեց որ բողոքականութիւնը ընդունիմ և իրենց ծառայեմ: Մերժեցի և անդամ մըն ալ քովը չգացի: Վերջուպէս մօրս եղբօրս թախանձեցի եկայ հոս: Եղբօրս վաստակը մեծ բան մը չէր, մայրս յանձն առաւ ինքն ալ կար կարել և գէշ աղէկ իմ ծառիս հոգալ: Կը տեսնէք Պը. Սիսակ, ամսական այն 80 կամ 100 ֆր.ը, զոր կըստանամ, արեան գին ըսել է: Ես ի՞նչ խղճով մասնագիտութիւնս թողած արիշ բաներու ետեկ ըլլայի: Միւս օրիորդները մէկի տեղ երկու, երեք, չորս տարի կրնան կենալ, կտմ հարուստի աղջիկներ են և կամ հարուստէ մը թոշակ կըստանան: Իսկ ես օր մը առաջ զործս վերջացնելու կը նայէի:

ԱՅՆ ՊՐ. Սիսակ, ելմէ զիանայիք թէ ո՛րչափ նետութիւն քաշեցի, ո՛րչափ. նիւթականէն աւելի բարոյական տառապանքը ուսանողութեան վարմունքին պատճառով; Բայց երեկ ամէնքը մոռցայ, ամէնքը մէկէն: զիսէք երեկ անմիջապէս հեռագըրով իմացուցի ծրապիզն աւարտելու: Այս կ'երեակայեմ որչափ ուրախ է հիմա մայրիկս, բարի, անոյց հրեշտակային մայրիկս. այս Սսուած, որո՞ւ մաքէն կ'անցնէր թէ այս օրին պիտի արժանանամ:

ՍԻՍԱԿ. Օրիորդ անշուշտ ինձմէ ալ չափազանց վիրաւորուած էիք:

ՆԵԿԾՈԲ. Վիրաւորուած. չէ վիրաւորուած չեմ կրնար ըսել, բայց ինչու պահեմ չափազանց վշտացած էի. մանաւանդ օր մը, չեմ կրնար մոռնալ, ջեզ սենեակս հրաւիրեցի չեկաք և յետոյ միս օրիսրդներուն հետ պարուելու դացիք: Այդ օրը սենեակս մէջ ժամերով... էջ թողնենք անցած գացած բաներ են, ուրախ եմ օր դէխտայոր եկաք և իբր բարեկամ պիտի բաժնուինք իրարմէ: Տեսէք շատախոսութենէս մոռցայ հար-

ցընելու, թէյ մըն ալ կը խմէք:

ՍԻՍԱԿ. Ո՛չ օրիորդ շնորհակալ եմ, Դուք Զեր խոռքը շարունակէցէք, ի՞նչ կուզէեք ըսել ինդըրեմ մի՛ պահէք:

ՆԵԿԾՈԲ. Պահէելու բան չկայ. պիտի ըսէի որ այդ օրը, ինչպէս և ուրիշ շատ օրեր, սենեակս մէջ ժամերով լացած եմ: Վերջապէս օտարութեան մէջ ենք, մարդ որչափ ալ առանձնութեան վարժուած ըլլայ, երբեմն ժամեր կ'ունենայ որ հայու մը երես տեսնել կ'ուզէ և չի կրնար գիմանալ երբ նկատէ որ իր ազգակիցները խոյս կուտան իրմէ: Մանաւանդ որ այն օրերը գեռ Արամն ու Սուրէնն ալ չէին գար քովս:

ՍԻՍԱԿ. Կը հաւածաք օրիորդ, երբ ըսեմ թէ իմ արդ վարմունքս դրսէն երեցածին չափ գէշ չեր: Ի՞նչպէս բացատրեմ, մարդ շատ անգամ՝ առանց գիտնալու զինք շըջապատղներու կարծիքին կ'ենթարկուի և կամ վայրկենական մէկ առաջարութեամբ հակակրութիւն կըդայ մէկու մը նկատմամբ, զոր ամենեին չի ճանչնար,

եթէ ճանչնար մինչև իսկ պիտի համակրէր։ իմու
ալ այդպէս եղաւ, չեմ կրնար ըսել թէ հակո-
կլութիւն ունէի ջեզի գէմ, բայց համակրա-
թիւն ալ չունէի, աններելի կը դանէի որ ջաճ-
կահայ օրիորդ մը ամենին չհետաքրրուի ջաճ-
կահայ դառով։

ՆԵԿՑՈՒՅ. Իրաւունք ունէիք Պր. Սիսակ, չեմ
մեղադրեր, ես ջեղ արդէն երբեք միւսներուն
հետ չեմ խառնած և միշտ լաւ կարծիք ունեցած
եմ ջեր մասին։ Նոր եկած առենս, դուք Հոս
չէք, ստիպեցին զիս որ դասախոսութիւն մը
կարդամ, ես ալ միամորէն կարդացի, հայ
կնոջ դերի մասին. ամէնքը վրաս ինդացին։ ԱՌ
այնուհետեւ առանձնացայ։ Մտածեցի ինձի պէս
աղջիկ մը ի՞նչ կրնայ ընել յեղափոխութեան հա-
մար, քաջասրտութիւն չունիմ որ երթամ գործեմ,
խօսելու կարողութիւն չունիմ որ քարողեմ, հա-
րուստ չեմ որ դրամով օգնեմ, աՌ ի՞նչ միտք ունի
խմբադրասուն երթալ գալ, ժողովսեր յաճախել,
ադով գործին օդուտ մը չպիտի առմ, պարապ
տեղը ի՞րդինքիս պիտի մնասեմ, երեքի տեղ վեց

առրի ալ կենամ չպիտի կրնամ աւարտել և յե-
տայ երկիր վերագաւնալս ալ պիտի գործարանայ։
Չեմ զիտեր աղջկայ իսելք է, թերես սխալ
մտածեցի, բայց ես ալ իմ ազգս կը սիրեմ։

ԱԻՍՈՒԿ. Ո՛չ օրիորդ սխալ չէք մտածած,
շատ ճիշդ խորհեր էք. այս առաջին երկար տե-
սակցութեամբ ես նոր կը ճանչնամ և կը հաս-
կնոմ ջեղ. հիմա չէք կրնար երկակայել թէ
որչափ պկափիկ կըզգամ ինքզինքս ջեր առջի,
որչամ կ'ամշնամ անշնորհք վարմունքիս համար։
ինդրեմ եթէ կրնաք մոռցէք և ներեցէք (ոսքի
եղերավ), տուէք ձեռքերնիդ, կրնաք ներել։

ՆԵԿՑՈՒՅ. (Ոսքի եղերավ և ձեռքը երկնցներավ)
Կ'աղացեմ Պր. Սիսակ, ի՞նչ կըսէք, ներելու բան
չկայ, ընդհակառակը չեմ գիտեր ինչպէս երախ-
տագիտութիւնս յայտնեմ ջեզի, ջեր քաջալերա-
կան խօսքերուն համար, անկեղծ կ'ըսեմ խղճիս
վրայն մեծ բեռ մը վերցուցիք։ Ես միշտ կը
տանջուէի թէ ուրեմն մեղք գործած եմ այտպէս
ընելով որ ամէնքն ալ այդպէս կը վարուին
հետս։

ՍԻՄՈԿ. ԶԵՇ, ինդրեմ ըսէք որ կը ներէք.
որախա շատ մեծ ցաւ պիտի ըլլար, եթէ առանց
գործած սխալս ճանչնալու և առանց ներդու-
թիւն խնդրելու բաժնուէի զեզմէ :

ՆԵԿԾԱՐ. Քանի որ այդչափ կը պնդէք, լու,
կը ներեմ:

ՍԻՄՈԿ. Շնորհակալ եմ, շատ ներդառիտ
էք օրիորդ, Աստուած վկայ այս տեսակցութիւնը
այնչափ ուրախացուց զիս որ ես իմ ցաւս մոռ-
ցայ: (Կը եսոի) Հիմա ի՞նչ պիտի ընէք, պիտի
վերադառնաք Տրապիզոն:

ՆԵԿԾԱՐ. Անշուշտ, ճամբառ ծախրի կրսպա-
սեմ, գալուն պէս ճամբայ պիտի ելլեմ: Օ՛հ որ-
չափ ուրախ եմ որ մայրիկս, ազբարիկս պիտի
տեսնեմ, և ուրախութիւնս կը տանհագատկուի,
երբ կը մասնեմ թէ ի՞նչ նորութիւններ կը տա-
նիմ հետու. ի՞նչե՛ք պիտի կրնամ ընել, երբ նո-
րէն պաշտօնի գլուխ անցնիմ:

ՍԻՄՈԿ. Երջանիք էք օրիորդ, հաւասարցէք
կը նախանձիմ զեզ: (Խոր հառաջանք մը) Պիտէք
որ ես ալ ուսուցիչ եղած եմ ժամանակին:

ՆԵԿԾԱՐ. Երա՞ւ կ'ըսէք:
ՍԻՄՈԿ. Այս', Միացեալ ընկերութեանց
Մշոյ կեդրանական վարժարանը աւարտելուս պէս
երբ ուսուցիչ զրկուեցայ Դասպահն, Լսա՞ծ էք
Դասպահնի անունը:

ՆԵԿԾԱՐ. Այս լսած եմ, կարծեմ վանայ
ծովուն եղերքն է:

ՍԻՄՈԿ. Այս վանայ ծովուն եղերքը զուտ
հայաբնակ մեծ գիւղ մըն է, անհնման գիրքով:
Չորս տարի մնացի հան, ծովը առառ իրիկուն
աչքիս տռջի, գիւղացիներէն պաշտուելու չափ
սիրուած, մինչև որ օրին մեկը անօրէնները յան-
կարծ գիւղ մոռն և շղթայակապ գուրս հանե-
ցին զիս:

ՆԵԿԾԱՐ. Զերբակալեցի՞ն:
ՍԻՄՈԿ. Զերբակալեցին և Բաղէշի բանաը
տարին. այդ օրը վերջ գտաւ իմ կեանքիս եր-
ջանիկ շրջանը: Միս, օրիորդ, հետերնիդ տարէք
զիս:

ՆԵԿԾԱՐ. Դա՞ւք, ինձի՞ հետ. բայց Դուք չէք
կրնար երկիր մանել:

ՍԻՍՈՒ. Կը մանեմ, թեեր կ'առնեմկը թըու-
չեմ, միայն թէ տարեք:

ՆԵԿՑԱՐ. Ի՞նչ աղէկ կ'ըլլար, Դուք տեսուշ
ես վարժուհի, ա՛խ եթէ կարելի ըլլար:

ՍԻՍՈՒ. Անկարելի բան չկայ օրիորդ, եթէ
Դուք համաձայնիք:

ՆԵԿՑԱՐ. Վրա՞ս կը խնդաք, Պր. Սիսակ,
իմ համաձայնութիւնս ի՞նչ կարեսութիւն ունի:

ՍԻՍՈՒ. Ես չեմ խնդար օրիորդ, բան մը
պիտի ըսեմ, բայց վախնամ Դուք իմ վրաս
խնդաք:

ՆԵԿՑԱՐ. Քաւ լիցի, ի՞նչ կուղէք ըսել:

ՍԻՍՈՒ. Բաել կ'ուզէի թէ անմիջապէս պատ-
րաստ եմ ընկերանալ Զեղի, բայց . . . ոչ իբրև
հասարակ ուզեկից :

ՆԵԿՑԱՐ. Հասարակ ուզեկի՞ց, անշուշտ ոչ .
իբր բարեկամ, իբր ընկել:

ՍԻՍՈՒ. Հա՛ իբր ընկեր, բայց . . . թեթեի
(ուրի եղերով և սենեակին յըսենի ըներով) է՛հ, ի՞նչ
յիմար տղու պէս կը կմկմամ, ներեցէք օրիորդ:

ՆԵԿՑԱՐ. (Ուրի կ'եղի, չփորած) Զեմ՞ հասկնար:

ՍԻՍՈՒ. Բայց խօսիմ օրիորդ . . . ես շատ
համբակ եմ այս գործին մէջ.... մանաւանդ այս
օրեր, երբ սիրոս ջախջախուած է . . . պիտի
հարցնէի թէ.... կընա՞ք զիս.... հետերնիդ տա-
նիւ.... բայց.... բայց....

ՆԵԿՑԱՐ. (Վախցած) Ի՞նչ եղաւ ձեզի, Պր. Սի-
սակ:

ՍԻՍՈՒ. (Զդային բախով յանկարծ Նեկտարին եր-
կու ձեռքերը բաներով) Նեկտար . . . կընա՞ս փրկել
զիս, կընա՞ս սիրել զիս:

ՆԵԿՑԱՐ. Սիսակ (կես ուշարափ Սիսակին զիրկը
կ'իյնայ և զիրար զրկած կը մնան):

(Դուռը կը զարհուի քանի մը անզամ : Սիսակ և
Նեկտար իսկոյն իրարմէ բաժնուելով ալքերնին կը սրբեն):

ՍԻՍՈՒ. (Սեղանին սունե նստերով զիրք մը ձեռքը
փառնէ:)

ՆԵԿՑԱՐ. (Հայելիին սունե մազերը կարգի բերերով)
Entrez.

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ԱՐԱՄ. (հերս կը մանե) **Բարի իրիկան:**

ՆԵԿՑԱՐ. (ձեռք տարավ) **Բարի իրիկուն Արամ:**

ԱԻՍԱԼ. (առանց աջքերը վեր տոնելու) **Բարի իրիկուն:**

ԱՐԱՄ. (պահ մը զարմացած երկուքը դիմուի եաբը) **Օօ՛ Սիսակ,** ես ալ քու քովէդ կուգամ, շիսակը մտքէս չէր անցներ որ քեզ հոս կը գանեմ:

ՆԵԿՑԱՐ. **Զարմանալի է չէ, Արամ:**

ԱՐԱՄ. **Բաւական:**

ՆԵԿՑԱՐ. **Բայց աւելի զարմանալին կայ.** պատիւ ունիմ քեզի ներկայացնելու նշանածու:

ԱՐԱՄ. **Հահա, ես արգէն կուհեցի բան մը:**

ՆԵԿՑԱՐ. **Ինչէն կուհեցիր:**

ԱՐԱՄ. (Սիսակը ցացներավ) **Չե՞ս աւսմեր, անճարակ կատուն որ թոք դողնայ դունչէն կը մտանուի:**

ՆԵԿՑԱՐ. (բարձրաձայն խճարավ) **Մնալիտա՞ն:**

ԱՐԱՄ. **Օօ՛ ուրեմն աղո՞ր համար երէկ հետերնիս չեկար:**

ԱԻՍԱԼ. (Տեղէն ցատկերավ Արամը զրկածին պիսական վրայ կը պառկեցնէ և կոկորդը կը սեղմէ) **Օօ՛ անօրէն, ա՞ս ալ կը ծաղըես:**

ԱՐԱՄ. **Չէ, չէ, ո՞վ է ծաղըողը, վայ կորդս, շունչս կարեցաւ, ծօ՛ կը լսեղդուիմ, հերիք :**

ԱԻՍԱԼ. (Բաց կը րողմէկ:) **ՈՒՐԱՄ. (կը շակուի կը հասի, կոկորդը բոնած կը հարայ) Օօ՛ քիչ մնաց կը լսեղդուէի, սիրահարութիւնը լսենթութիւն է կ'ըսեն նէ պարապ խօսք չէ եղեր: (Կ'ելք կը կանգնիւ) Է՛ մօտ եկէք նայիմ, օրհնութիւնս տամ զեզի, գլուխ գլւխ տուէք կը կոկորդը բոներավ զրոխները իրարու կը միացնէ) **Համ** (երկուքը բոներավ զրոխները իրարու կը միացնէ) **Համ** աւանկ, բայց ափսոս որ հասակս կարճ է, քիչ մը ծուեցէք (ձեռքերը զրոխներն վրայ տարածերավ) ածէցէք և բազմացարաք և լցէք զապանդանոցն Հայաստան:**

ԱԻՍԱԼ. Եի ՆԵԿՑԱՐ. (ինձարավ) **Տարօսը Գըլ-խուգ, Արամ:**

ԱՐԱՄ. **Չէ աս մի՛ ըսէք:**

ՆԵԿՑԱՐ. **Ինչո՞ւ:**

ԱՐԱՄ. Ինչո՞ւ. որովհետեւ ես ինծի համար հուրի փէրի իդէալ մը ունիմ, կ'ուղեմ որ զէթ այդ իդէալս ապրի:

ՆԵԿԾԱՐ. Ուրեմն ես Սիսակին իդէալը մէռցուցի՞:

ԱՐԱՄ. Այտ չեմ ուզեր ըսել, սխալ մի համենար. քու մաղերդ երկար են խելքդ ամէն բանի չի հասնիր:

ՆԵԿԾԱՐ. (Խեղարավ) Շատ շնորհակալ եմ:

ԱՐԱՄ. Է, կատակը մէկդի, խաչոր տարօրինակ է, շատ տարօրինակ, գլուխս կը դառնայ: Զարածծի աղջիկ, կը տեսնե՞ս աշխարհի բաները, վէմն, զոր անարդեցին շինողք, նա եղի գլուխ անկեան:

ՆԵԿԾԱՐ. Ատանկ եղաւ Արամ, շատ շիտակ ես:

ԱՐԱՄ. Ամէնքը կը կարծէին թէ ես պիտի ընեմ Սիսակին ըրածը, արդէն կը խօսուէինք դիսե՞ս. բայց տարակոյս չունիմ որ եթէ ես առաջարկ ընէի, մուճակներս ձեռքս պիտի տայիր. անանկ չէ, շիտակ ըսէ:

ՆԵԿԾԱՐ. (Խեղարավ) Չէ, քեզ չէի առներ,

Լեզուէդ կը վախնայի:

ԱՐԱՄ. Անանկ է. խնձորին աղէկը լեռան արջը կ'ուտեէ: (Սիսակը ցոցներով) Տե՛ս, ձայնը ձունը կ'ելլէ. (Սիսակը ցնցերով) Հը, չխօսիս, ի՞նչ ես նորէն պաղեր մնացեր: Երէկ կը հարցնէիր թէ ի՞նչ պիտի ընես, ասանկ բան կրնայիր ընել նէ ա՛լ ի՞նչ շուարեր կեցեր էիր:

ԱԻՍՈՒԿ. Ծո՛ որո՞ւ մտքէն կ'անցնէր, երազի պէս կուգայ ինծի:

ԱՐԱՄ. Շատ լաւ եղաւ, Սատուած վկայ երկարիդ համար ալ շատ ուրախ եմ. բախտը երբեմն ասանկ լաւ կատակներ ալ ունի: Հիմա ի՞նչ մտադիր էք ընել, ուր պիտի հաստատուիք:

ԱԻՍՈՒԿ. Միասին երկիր պիտի երթանք:

ԱՐԱՄ. Բայց դուն ի՞նչպէս կընաս ներս մտնել:

ԱԻՍՈՒԿ. Ինչ կ'ուզէ ըլլայ Արամ պիտի երթամ, ա՛լ չեմ կընար դուրսը ապրիլ:

ՆԵԿԾԱՐ. Այդ մասին գեռ ժամանակ չունեցանք խօսելու, բայց ես ալ կը կարծեմ որ քիչ

մը գժուար է Ախակին համար անվտանգ ներս
մտնել:

ՍԻՍԱԿ. ԱՌ վտանգ մտանգ աչքիս չերենար,
մեռնիլս գիտնամ պիտի երթամ, անցաղրով չե-
զաւ դաղտնի կը մտնեմ, օտարութեան մէջ կոր-
սուելուս հոն թող մեռնիմ:

ԱՐԱՄ. Ուրեմն Տրապիդոն կ'ուղես երթալ,
բայց ի՞նչ պիտի ընես հոն:

ՍԻՍԱԿ. Եթէ կարելի եղաւ ուսուցչութիւն,
չեղաւ ուրիշ բան մը: Արգէն նպատակս Տրապի-
դոն հաստատուիլ չէ. ժամանակ մը հոն կը մնամ
մինչև որ քիչ մը օրինաւոր մարդու ձեւեր առնեմ,
յետոյ միասին կերթանք Մուշ. այնպէս չէ Նեկ-
տար :

ՆԵԿԾՈԲ. Դուն ուր ես ալ հո՞ն:

ՍԻՍԱԿ. Հայրենի հողին կարօտը կը քաշեմ
Արամ, չես կրնար երեակայել թէ ի՞նչ անհուն
կարօտ է. մանաւանգ այս քանի օրս գիշեր ցե-
րեկ իմ Տարօնս աչքիս առջե կուդայ. ախ մէյմը
երեսս հողին քսեմ, պազնեմ, հոտոտամ, անմա-
հական ջուրը խմեմ, նոր ծնածի պէս պիտի ըլլամ:

ԱՐԱՄ. Ամէնքս ալ այդ կորոտէն կը մտ-
շնիք հագիս, բայց վերջապէս բաց աչքով վտան-
գին մէջ նետուելու չէ: Կեցիր, թերես ես կա-
րենամ միջոց մը գտնել, Տրապիդոնի հօրեղբօրս
գրեմ նէ ի՞նչպէս կ'ըլլաց:

ՆԵԿԾՈԲ. Հա՛ առ լաւ մտածեցիր Արամ,
հօրեղբայրդ ուղէ նէ շատ գիւղութեամբ կրնայ
ներս առնել, ան վալիին հետ, բոլոր բարձր
պաշտօնեանեան հետ բարեկամ է:

ԱՐԱՄ. Աս աղէկ միտքս ինկաւ, վաղը առ-
տու նամակ մը կը դռեմ:

ՍԻՍԱԿ. Կարճո՞ս որ ընէ:

ԱՐԱՄ. Մոհծ յոյս ունիմ: թէն յարաբերու-
թիւնս լաւ չէ հետը: Երկու տարի տառջ չեմ
զիսեր ուրկէ խմացեր էր որ հոս ոչ թէ վաճառա-
կանութիւն այլ գրականութիւն կը սորվիմ և
յանդիմանական նամակ մը զրեր էր, ես ալ
շատ ծանր պատասխան մը տեւի և այնուհետեւ
ա՛լ չգրեցի: Սակայն անուզզակի կերպով իմա-
ցած եմ որ առիթ մը կը փնտոէ ինձի ներե-
լու, է՛ առկէ լաւ առիթ չըլլար, վատահ եմ որ

ձեռքէն եկածը պիտի ընէ: գիտես հայ վաճառական է, բայց նուազ դէշ տեսակէն. զիս թէ կը սիրէ և թէ քիչ մըն ալ կը քաշուի ինձմէ:

ՆԵԿՑՈՐ. Աս շատ լաւ եղաւ Սիսակ, ես վստահ եմ որ Արամին հօրեղբայրը գործերնիս կը յաջողցնէ, իմ հոն եղած տաենս քանի քանի հայեր ներս առած դուրս հանած է:

ՍԻՍՈՒ. Աստուած տա՛յ:

ԱՐԱՄ. Աստուած որ մէյմը սկսի տալ կուտայ, մի՛ մտածեր, հիմա թողուցէք այդ հոգերը, դոնէ քանի մը օր, գոնէ քանի մը ժամ՝ հայ ըլլալնիդ մոռցէք ու իբր սիրահարներ ապրեցէք: Ես ալ շատ անյարմար առենին վրայ հասայ, ժամանակն է որ ձեզ նորէն մինակ ձգեմ:

ՍԻՍՈՒ. Պարապ խօսք չուզեր նստէ:

ՆԵԿՑՈՐ. Հիմա դուն ըսիր որ մենք սովորական սիրահարներ չենք, հայ սիրահարներ ենք, Արամ, քու ներկայութիւնդ աւելի կ'ուրախացնէ մեղ:

ԱՐԱՄ. Ե՛ անանկ է նէ, ուրիշ առաջարկութիւն մը ընեմ. երթանք միասին շամպայն մը

բանալ տահար, այս մեծ գէպը իր երաւունքը կը պահանջէ:

ՆԵԿՑՈՐ. Չէ՞ ինչ աւելորդ ծախսք, եթէ կուզես այդ գրամսվ կընանք կիրակի աղուոր պառյատ մը ընել:

ԱՐԱՄ. Ե՛լ աղջիկ, շատ մի խօսիր, պայուն աւ իր կարգին, երեք տարիէ իվել այսօր առաջին անգամն է որ երեսիս հետ սիրսս աւ կը ինդայ:

ՍԻՍՈՒ. (Նեկառին) Ե՛լ գլխարկդ դի՛ր, ան բան մը ըսէ նէ անպատճառ պիտի ընէ:

ԱՐԱՄ. (Սիսակը գրկերով) Խակ դուն չըստածներդ աւ կ'ընես, եկուր համբոյլը մը տուր նայիմ, թերես աս քու փրկութիւնդ ըլլայ և ձեր միջոցաւ ես ալ շուտով փրկուեմ:

ՍԻՍՈՒ. Ի՞նչ լաւ կ'ըլլար մէկտեղ գայիր Արամ:

ԱՐԱՄ. Իմ վիճակս ուրիշ է Սիսակս, դուն ինձմէ շատ աւելի բախտաւոր սրսով ծնած ես... բայց դուն մէյմը գնա տեսնենք, եթէ հոգիի

Խաղաղութիւն գտար նէ չեմ կենար ես ալ կու-
դամ կը փորձեմ:

ՆԵԿՑԱՐ. Ե՞ս պատրաստ եմ:
ԱԲՈՄ. (Սիսակին) Ե՛Լ նայինք:

(Երեքն ալ դուրս)

ՎԱՐԱԳՈՅՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐՈՒՄԾ

Սիսակին սեմեակը Դ. Արարուածէն հիմք շարադ
յեար:

Ա. ՏԵՍԱՐԱԿՈՒՄ

(Անենակը տակնաշխայ, դարսակներուն աջքերը բաց,
յասակին վրայ պատռուած բղբերու կառիներ: Անշանին
վրայ նազուսաներու և ձերմավեշեներու դեղ մը, զոր
Սիսակ նազանաց պարասակի մը մէջ կը զետեղ և արսու
մը վրայ նատերով բրտինքը կը սրբի:)

(Գուսով կը զարենիի:)

ԱԵՐՈՂ. Entrez.

Բ. ՏԵՍԱՐԱԿՈՒՄ

ՆԵԿՑԱՐ. (հերս կը մանե փոքրիկ պայուսակ մը
ձեռքը) Հո՞ Սիսակ պայուսակդ կապեցի՞ր:
ՍԻՍՈՂ. Կապեցի հոգիս ելաւ, եկուը համ-
բոյը մը տուր նայիմ:

(Կը համբուրուիի:)

ՆԵԿՑԱՐ. (ինքայինը Սիսակին բեկրուն մէջն ազա-
տերով) Կեցիր նայիմ ինչպէս ես կապեր. (պայու-
սակը կը բանայ) անշնորհը աս ի՞նչ ես ըրեր, երա-
բու գրոյ լեցուցեր ես:

ՍԻՍՈՂ. Վնաս չունի. արդէն հինումին բա-
ներ են:


ՆԵԿՑԱՐ. Ի՞նչ կուզէ ըլլայ, տեսնողը ի՞նչ
կըսէ, ի՞նծի ամօթ է:

ՍԻՍՈՂ. Է շատ չես հաւնիր նորէն լեցուը,
արդէն հիմտեկուընէ տանտիկնութեան սկսար: Իսկ
քու մնառուկդ ի՞նչ ըրեր:

ՆԵԿԾԱԲ. Կայարան զբկեցի, բեռնակիրին
հետ Սուրէնը գնաց, Bagage պիտի տայ: (Պայու-
սակը սրապերավ կրսկուի նորեն լեցնելո:)

(Դուռը կը զարենչի:)

ՍԻՍԱԿ. Entrez.



Պ. ՏԵՍԱՌԱՆ

ԱՐԱՄ. (Հերս կը մտեն) Հա՛ ուխտաւորներ, վերջացուցեք դործերնիդ:

ՍԻՍԱԿ. Վերջանալու վրայ է :

ՆԵԿԾԱԲ. Ես շատոնց վերջացուցի. Սիսակն ալ իբրև թէ վերջացուցեր էր, տեսնէիր թէ ինչպէս, ասանկ թափթփած տղայ չըլլար:

ԱՐԱՄ. Գիտե՞մ, Սիսակին պայուսակ լեցը-
նելը նոր չպիտի տեսնեմ, ոտքով կը լեցնէ որ
շատ բան առնէ:

ՍԻՍԱԿ. Ե՛ հասկցանք ճանըմ դուն ալ միւս
կողմէն մի սկսիր, ես դիւզացի մարդ եմ, պապո
պայուսակ չեր լեցուցեր ա՛: (Սեղանին վրայեն հա-

մակենարու արցակ մը առներով) դուն սա նամակները
առ քովդ պահէ, բոլոր թղթերս պատռեցի, ա-
ռոնք կարեսը բաներ են, օր մը կրնան պէտք
դաւ:

ԱՐԱՄ. Գօկումենանե՞ր են, շատ աղէկ, ար-
ևիվամն կը պահէմ: Հա՛, նամակ ըսիր միտքս
ինկաւ, այս առառ նամակ մըն ալ առի հօրեղ-
բօլմէս, կարգամ մտիկ ըրէք (Սիսակին տուած
նամակներու արցակը արոսի մը վրայ դեկուլ գրպանեն
համակ մը կը հանեն և կը կարդայ:)

ՄԵծապատիւ պատռական եզրորդիս
և սիրելի զաւակս

Արամ էֆ. Զայիրեան

Ետիս և առաջ պատռական որպիսութիւնդ
հարյնելէ զինի յուսամ թէ ապահով ձեռքդ հա-
սած է անցած թղթատարով ճամբած նամակս,
որով հանդերձ ամենայն մանրամասնութեամբ
բացատրած էի որ կատարելապէս միամիտ ըլ-
բացատրած էի որ կատարելապէս միամիտ ըլ-

ւեն գուրս կրնամ հանել : Շնորհիւ պետքառ
Սուլթանին եռ հռո թէ վաեմ . վալի փաշոյին
և թէ ամէն մեծամեծաց քալ անանկ խաթր ու-
նիմ , որ խոռքս գետինը չինար : Առար գրայ
աւելցնելիք նար բան մը չունիմ , միայն թէ սա
կետը կ'ուզեմ աղէկ մը հօսկցնել որ բարեկամդ
դալսն այդ կողմերէն ամենին յիշառակ մը
չունենայ վրան , անցաղիքն ալ ուրիշ տեղաց ո՛ւ
առնէ , ամենէն աղէկը Մարսիլիայէն և հոսուրիէ
դալը հարցնելու ըլլաննէ , Մարսիլիայէն , հոհա-
տեղ վաճառավանութիւն կ'ընէի ըսէ : Աւրեմն
նորէն կ'ըսեմ որ բարեկամդ բոլոր ըստներս
տեղնի տեղօք կատարելու ըլլայ նէ ամենայն
վստահութեամբ կրնայ դալ : Ջոնենալով ալ
զըելիք երկու աչքերդ համբուրելով մնամ տե-
սոյդ կարօտ :

Հօրեղբայրդ

Կաբապետ Զայիրեան

(Եսմակը կրկին ծոցը դմերով) Ցեսարք , եռ աղէկ
մտածեր էի անցաղիքնիդ Մարսիլէն տոնելու

զգուտթիւնը :

ՍԻՍՈՒ. Առ աղէկ , բայց վաճառականու-
թիւն կեղծելը քիչ մը դժուար է :

ԱՐԱՄ. Ինչու է դժուար , դրամագլուխդ-
ցոյց տուր չպիտի ըսեն ա :

ՍԻՍՈՒ. Հապա եթէ ճանչցուիմ նէ :

ԱՐԱՄ. Չէ ճանըմ , սւրկէ պիտի ճանչնան ,
հօրեղբայրս քեզ նաւէն առնէ երկար բարակ
չեն ալ հարցաքններ . թէկ ջաճկաստան է վեր-
ջապէս , վտանգի հաւանականութիւնը միշտ կայ
ու կայ :

ՆԵԿՑԱՐ. Քիչ մըն ալ բախտի ինդիր է , ես
հսն եղած ատենս շատ անգամ իսկապէս վտան-
գաւոր մարդիկը առանց երկար բարակ հարցա-
քըննելու բաց կը թողնէին , իսկ անդին բոլորո-
վին անմեղ ողորմելի մարդիկը բանուը կը նե-
տէին :

ԱՐԱՄ. Եթէ աչքերնուն կասկածելի ալ
երկանա , փառա մը չկրնան գոնել շատ շտա-
հայրենիքդ պիտի քշեն , ինչպէս՝ սովորաբար կ'ը-
նեն :

ԱԻՍՈՒԿ. ԱՐԴՊԵՏ բան մը ընէին ի՞նչ լաւ
կ'ըլլար:

(Դուռը կը զարեռուի՞:

Ա.Բ.Ա.Մ. Entrez.

Դ. ՏԵՍԱՐԱՐԱԴ

Ա.Ի.Ե.ՑԻՔ. (հապնեց ներս մաներով) Հա՛յ ե՛րք է
գնում դնացքը:

Ա.Ի.Ս.ՈՒ.Կ. Ժամը մէկուկէսին:

Ա.Ի.Ե.ՑԻՔ. Լաւ, ուրեմն ես մէկ և կէսից ա-
ռաջ կայարանը կը լինիմ:

Ա.Բ.Ա.Մ. Մ'ե՞ք հիմա ուղղակի կայտրան պի-
տի երթանք:

Ա.Ի.Ե.ՑԻՔ. (Խամացոյցը ճայերով) Երկուսի կէսին
դեռ երեք ժամ կայ, այժմ կայտրան դնաք ի՞նչ
էք անելու:

Ա.Բ.Ա.Մ. Հրաժեշտի փոքրիկ հացկերոյթ մը,
եկուր դուն ալ:

Ա.Ի.Ե.ՑԻՔ. Զէ գնամ խմբագրատուն, Սամի-

անը ախը երեկոյ պէտք է դար չեկաւ,
գուցէ այժմ եկած լինի կամ շուտով դայ: Գնամ
լուր տամ որ Սիսակին տեսնի գնալոց առաջ:

Ա.Ի.Ս.ՈՒ.Կ. ի՞նչ պիտի տեսնէ, յետոյ իմ կող-
մէս բարե կ'ընես կը լմինայ կ'երթայ:

Ա.Ի.Ե.ՑԻՔ. Ախը չի կարելի էդէքս, էսքան
տարւայ ընկերներ էք եղել, լաւ չէ այդ ձեռվ
բաժանուել:

Ա.Բ.Ա.Մ. Ճ'իշտ կ'ըսէ, իրարու մար ալ լա-
ցուցած ըլլաք ընկերական ջերմ համբոյըներով
պէտք է բաժանուեք: (Ա.Հ.Ա.Խ.ի.ն) Է՛ լաւ, եթէ
եկած է կ'ըսես որ ժամը 1½ ին կայտրան դայ,
եթէ չէ եկած տամսակ մը կը լժողնես, իսկ դուն
շուտ մը կայտրան կուգաս մեզի հետ ճաշելու.
ով գիտէ Սիսակը մէյթըն ալ կը տեսնե՞ս:

Ա.Ի.Ե.ՑԻՔ. Զէ կը տեսնեմ. ես անզատճառ
գնալու եմ էն կողմերը, հաստատ որոշել եմ:

Ա.Ի.Ս.ՈՒ.Կ. ի՞նչ լաւ կ'ըլլար դայիր, մեր
մածունն ու մեզը կերցնէի քեզի:

Ա.Ի.Ե.ՑԻՔ. Զէ հաւատացնում եմ դալու եմ,
ախը չի կարելի էսպէս առանց երկիրը ճանա-

Հելու օդում ծրագիրներ շինել, էլ ամօթ է:
ԱՐԱՐ. Սամփառնն ալ հետդ կ'առնե՞ս;
ԱԻԵՑԻՔ. ԶԵ՛ նո չի գնայ էդպէս տեղեր;
ՄԻՍԱԿ. Պարիզ կ'երթայ:
ԱՐԱՐ. Զերթար և պահանջ ալ չիզգար,
մարդը կ'ըսէ. ես կը նստեմ արտասահմանում,
բայց շատ աւելի մեծ գործ կը շինեմ, քան նրանք
որ երկիր են գնում:

ԱԻԵՑԻՔ. (ինդարով Սիամկին) Բայց ի հարկ է
մինչեւ իմ գալը դու արդէն մի զօրեղ կտղմա-
կերպութիւն պատրաստած կը լինես:

ՄԻՍԱԿ: ԶԵ՛, այդ տեսակ յանձնարարութիւն-
ներ չեմ ընդունիր. ես հոն գործելու չեմ երթար
այլ ապրելու:

ԱԻԵՑԻՔ. Տօ՛ անաշէն ինչ ապրելու տեղ է,
մարդ էլ ապրելու համար է՞նտեղ գնայ:

ՄԻՍԱԿ. Այս ապրելու համար. երանի՛ թէ
արտասահմանի մեր յեղափոխականները, փո-
խանակ գուրսը ավատ պոտոտախօսութիւն
ընելու, ելլէին իրենց տեղերը երթա-
յին և իւրաքանչիւրը իր ծննդավայրին մէջ ապ-

թէր, լոկ իբրև փուշ մը թշնամիին ոսքին տակ:
ԱԼԵՑԻՔ. Այդ մասին դեռ կը խօսենք, ես
կ'աշխատեմ դալ կայարան, ուրեմն առայժմ ցը:
(Դուրս:)

ԱՐԱՐ. (ետեւել) Քեզի անպատճառ կըսպասէնք,
բայց ի սէր Աստուծոյ Սամփառը հետդ չբերես,
կայուրան ըսել կ'ուզեմ, Մուշ կրնաս տանիլ:
ԱԻԵՑԻՔ. (դուրս) ԶԵ՛ մի վախենայ ոչ Մուշ
կը տանեմ, ոչ էլ կայարան:

Ե. ՏԵՍԱՐՈՒՆ

ԱՐԱՐ. Օրիորդ վերջացուցի՞ր:
ՆԵԿՑԱՐ. Վաղուց. Սիսակ պայուսակիդ բա-
նալին ուր է:
ՄԻՍԱԿ. Բանալի չունի, արդէն կղպանքը
աւրուած է:
ՆԵԿՑԱՐ. Կը լսե՞ս Ալամի:
ԱՐԱՐ. Վնաս չունի. այնչափ տարի խմբագ-
րատան մէջ կեցողէն ուրիշ ինչ կըսպասէիր :

Բայց մեր ատամնաբոյթը ո՞ւր մնաց:

ՆԵԿԻՑԱՐ. Մնառուկիս հետ կայարան գնաց,
հոն պիտի սպասէ մեզի:

ԱՐԱՐ. Է՛ ուրեմն երթանք:


ՆԵԿԻՑԱՐ. Երթանք. Սիսակ բան չմոռնոս :

ՄԻՍՈՒ. ԶԵ՛ . (սենեակը դիտերով) Է՛ սենեակս,
դուն ալ մնաս բարով, ո՞վ գիտէ արդեօք քա-
կարօտդ պիտի քաշեմ հոն, թէ միայն մելտմադ-
ձութեամբ պիտի յիշեմ քեզ երթեմն:

ԱՐԱՐ. (րեւե բաշերով) Քալէ՛ , քալէ՛ , հիմա
պատերէն ջուր կըսկսի վագել:

(Միսակ պայուսակը կը վերցնէ և երեքը մեկն դուրս
կ'եղեն: Արամ Միսակին տուսծ նամակներու տրցակը ա-
րոտին վրայ կը մոռնայ)

(Բեմի քանի մը վայրկեան պարապ կը մնայ:)



Զ. ՏԵՍԱՍ.ՐԱ.Ն

ԱՐԱՐ. (ներս վազելով նամակները կը վեսռէ)
Ծօ՛ ո՞ւր մոռցանք աս գօկումենտները: (Կը գտնի)
Հա՛ հոս է եղեր:



Լ. ՏԵՍԱՍ.ՐԱ.Ն

ՍՈՄՓՈՅՆ. (յանկարի ներս կը մտնէ , Արամին
դուրս եղելու պահունք) ՀԵ՛ , բարի յաջողում, ո՞ւր է
Միսակը:

ԱՐԱՐ. Գնաց:

ՍՈՄՓՈՅՆ. Ո՞նց թէ գնաց. հապա Աւետիքը
ինձ ասաց ո՞ր երկուսի կէսին է գնալու:

ԱՐԱՐ. Նորէն այդ ժաման պիտի երթայ ,
ըսել կ'ուզեմ սենեակէն գնաց :

ՍՈՄՓՈՅՆ. Նորից դալո՞ւ է էստեղ, ո՞ւր կա-
րելի է պատահել նրան:

ԱՐԱՐ. Ժամը մէկուկէսին կայարանը :

ՍՈՄՓՈՅՆ. Տօ՛ ախը ո՞ւր է գնում հէ՛ :

ԱՐԱՐ. Հայրենիք:

ՍՈՄՓՈՅՆ. Հայրենիք . տօ՛ ախը նրան կը
բռնեն կախ կըտան էդ զահըումար հայրենի-
քում:

ԱՐԱՐ. Ինչ կայ. Խմբագրութեան տոպըս-
կին մէջ լուսանկարը ունիք, յուզիչ կենսագրա-
կան մըն ալ կը դրե՞ս :

ԱՅԱՓՈՈՆ. Է՛, թող հէ՛. տեսնում ես լուրջ
եմ խօսում քեզ հետ. էդ շահ աղջիկը նրան
դլխից հանեց:

ԱՐԱՄ. Ա՛Լ չեմ գիտեր, աղջիկը ան դլխէ
հանեց թէ ան աղջիկը դլխէ հանեց, այսուափը
գիտեմ որ նշանուեցան ու մեկտեղ երկիր կ'եր-
թան:

ԱՅԱՓՈՈՆ. Տօ՛ ի՞նչ տեսակ ընկեր ես դու,
ի՞նչո՞ւ ես թողնում որ գնայ:

ԱՐԱՄ. Ես ի՞նչ կրնամ ընկել. խօսեցայ
չհամազուեցաւ, ես ալ ըստ որ ծօ՛ մի երթար,
կը բռնեն բանտերու մէջ կը փոեցնեն քեզ, կը
կախեն քեզ. է՛, կ'ըսէ, ֆլառ չունի, մենք շատերը
բանու ու կախաղան զրկեցինք քիչ մըն ալ մենք
երթանք:

ԱՅԱՓՈՈՆ. Գի՞ժ է ի՞նչ է. լսի՞ր հէ՛, ես այժմ
Պարիզից եմ գալիս, էնտեղ մօտիկուց ծանօթա-
ցայ կլեմանսոյի, Պրէսանսէի, Ժօրէսի, Մնասոլ
Ֆլանսի, Բերթելօյի, Դէտուրնէլ ու կօնստանի,
Գընի կօշէնի, մի խօսքով ֆրանսիայի բոլոր
աստղերի հետ, Բրիտանի կօնդրէսի հարցը փա-

ռաւորապէս աջողեցրի, շուտով կայանալու է՛:
Վաղի՛ր էդ... է՛դ անշնորհքին ասա՛ գոնէ մինչև
կօնդրէսի գումարւելը սպասի, գուցէ մի բան
են անում, գուցէ հարցը լուծում են... այ օրի-
նակ ես շատ երկար խօսեցի Ժօրէսի հետ, գուրս
գալուց հարցը թէ ի՞նչ է կարծում, արդեօք
այս կօնդրէսով հայկական հարցը կը վճռուի.
Այս կօնդրէսով հայկական հարցը կը վճռուի.
(Արամին կրնակը ձեծերով) էսպէս քամակիս խփեց և
մի շատ խօրհրդառոր ժպիտով ասաց ուստի
րոնց կը տեսնենք:

ԱՐԱՄ. Ի՞նչ կ'ըսես. (Սամփառեխն կրնակը զննե-
րով) Ծօ՛ իրա՛ւ որ ձեռքին տեղը դեռ յայտնի է՛:

ԱՅԱՓՈՈՆ. Տօ՛ մի զայրացըրու ինձ հէ՛, չէ՛
կարելի քեզ հետ լուրջ մի երկու խօսք անել:

ԱՐԱՄ. Ի՞նչո՞ւ կը զայրանաս հոգիս, ուրա-
խութենէս ի՞նչ ըսելս չգիտցայ. ֆլառ չունի Սի-
սակը թող երթայ, Հայաստանը ազատելու ըլ-
լայնէ հեռագիր մը կը քաշենք իրեն :

ԱՅԱՓՈՈՆ. Այս' ի՞նչպէս չէ առայժմ ֆլառ
չունի, իսկ յետոյ երբ նրա հետ մի բան պատա-
հանաւ:

հի, սկսելու են ամէն կողմից հաշել թէ ես
պատճառ դառայ:

ԱՐԱՄ. Զէ՛ մի վախնար, քեզի մսաս չի հաս-
նիր. կ'ուզես կայարան եկուր թուղթ մը առնենք
ձեռքէն. ցը՛, ես ուշ մնացի: (Ետապով դուրս:)

ԱՍՄՓՍՈՒՆ. Տօ ո՞ւր հէ, սպասիր մի ըռպէ՛,
գոնէ ասէիր թղթակցութիւններ ուղարկէր . . .
բա՛հ... չօրտ իփօ զնայետ, լակոտներ են էլի՛...
(ապշած և ձեռքը դեպի դուռը երկնցուցած կը մնայ մին-
չև որ վարագոյրը կ'իջնէ:)

ՎԵՐՋ



ԿԱՐԵՒԽՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

L	Տող	Մակուած է	Պիտի ըլլայ
12	վարէն	2 էնչպէս	ինչպէս
27	»	2 այս	այն
36	»	7 ադ	գա
37	վարէն	10 երբ	եթէ
52	»	7 ինչպէս ասում ինչպէս է ասում	
65	վերէն	1 բանւորները	բանւորների
105	վարէն	6 է որ	էսօր
134	»	Այսուհետեւ Այսուհետեւ	
188	վերէն	4 Ռուսահայերս Ռուսահայը	

Նոյն Հեղինակէն Լոյս տեսած է

ՎՃՏԻ ԾԻԾԱՂ

Պատմուածքներ ԹՌՔԱՀԱՅ ԿԵԱՆՔԷ

Պարունակութիւն. 1. Վշտի Ծիծաղը: 2. Նորավէպին Նորավէպը: 3. Բուրդի Վաճառականութիւն: 4. Կախազանէն . . . Ամուսնութիւն: 5. Հոսհոսն ու ինտելիգենտը: 6. Հոգուս համար: 7. Մօրուքի Սանսրը:

Գինն է 1 թուբլի — 10 դրշ. — 2,5 ֆլ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0320759

